



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




13052-13056

891-99

15-19





835

78 pages

1. - Wm. Lewis Jones of ...

2. - ...

3. - ...

4. - ...

5. - ...

...

ՄԵԼՔԻՍԵՒԵԿԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶՄԻՒՌՆԻՈՅ

ՆԱՄԱԿԱՆԻ



ԿԱԼԱՅ

ՏՊ. ՂԵՒՄԵՐ ԲՆՆԵ ՓԱՓԸՋԵԸՆ

TIPOGRAF LEON PAPAŽIAN

1896







ՆԵՐՆԿԵՆԻ



Ճեթիսեդեկեց յայ.


ՄԵԼՔԻՍԵՂԵԿԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶՄԻՌՆԻՈՅ

ՆԱՄԱԿԱՆԻ

ԱՌ

Տ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԷՑ ՍԵԹԵԱՆ



ԿԱԼԵՑ

ՏՊԳՐ. ՂԵՒՈՆԴ. ՔԷՆՑ. ՓԱՓՈՋԵԱՆ

1896

13496



1468-2005



# Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն



Ռոզյական վիճակ սաստիկ  
լսանգարուած էր. Բժշկաց  
խորհրդով եւ Ազգային  
Վարչութեան պաշտօնական  
յանձնարարականս 1886/ն  
ուղեւորեցայ 'ի Չմիւռին,  
տեղոյն ջերմ եւ մեղմ կլի-  
մայէն օգտուելու համար 'ի  
ձմրան: Ընդունուեցայ հայ-

րական սիրով 'ոյն ժամանակի վիճակաւոր Առաջնորդ  
Տ. Մելք. Ս. Արք եպիսկոպոսէն, որոյ կարգադրութեամբ  
յատուկ սենեակ տրուեցաւ ինձ, Ազգային հոյաշէն Հի-  
ւանդանոցի մէջ, ամենայն պատրաստութեամբ: Նիւթա-  
կան ամեն հանգատութենէ զատ՝ հոգեւորապէս եւս կը  
միխթարուէի մասնակցելով Ս. Լուսաւորիչ (Հիւանդա-  
նոցի կից) եւ Ս. Ստեփաննոս Եկեղեցեաց ժամերգու-  
թեանց:

Ժողովուրդն շատ կը համակրէր Եկեղեցական էր.

գեցողութեանս եւ շատերն արժանաւորութենէս բարձր գոհունակութիւններ եւ գովեստներ կ'արտայայտէին, մանաւանդ Ս. Առաջնորդն, որ յաճախ կը կրկնէր. «Սպրիս, Տ. Կարապետ, անփոփոխ պահած ես Նախնեաց եղանակն եւ զերծ ներկայ ժամանակի հանրատարած ազաւարութենէն»:

Ամբողանալի եւ քաղցր պարտք կը համարիմ՝ նաեւ յիշատակել թէ՛ անպատում հրապոյր ունէր Ս. Առաջնորդի տեսակցութիւնն: Նա պատուէր սուած էր անպատճառ յԱռաջնորդարան երթալ եւ իւր *անպատոյժ* սեղանին մասնակցիլ: Եթէ Ս. Առաջնորդի բառովն *անպատոյժ*: իսկ անուանենք իւր սեղանն, սակայն այնքան համեմեալ էին իւր խօսքերն Աւետարանական եւ Հայրենասիրական ազիւ՝ որ ճոխ ինչոյքներէ աւելի քաղցր էր:

Այս ժամանակն էր, որ կը յուզուէր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ազատութեան եւ հայրապետական անկախութեան հրատապ խնդիրն: Մի սոսկալի դաւաճանութիւն գործուած էր Մակարի օտարոտի կաթողիկոսութեան ընդունելութեամբ եւ Ս. Առաջնորդն չարագուշակ սկզբնաւորութիւն կը համարէր նոյն ընդունելութիւնն, որով հայրապետութիւնն սարկութեան մատնուելով պիտի վտանգուէր Եկեղեցւոյ անկախութիւնն եւ Հայ ազգի կրօնական ազատութիւնն:

Ամեն ծանօթք գիտեն թէ՛ Մեղքիսեդեկ Սրբազան ուրախ եւ զուարթ բնաւորութիւն ունի. սակայն երբ խօսակցութիւնն կը դառնար Ազգային վիճակին վրայ, այնքան սիրտն կը խռովէր եւ կը դղրդուէր, որ հագիւ կը զսպէր արտասուքն, անշուշտ նոյն տպաւորութիւնն գործելով նաեւ ունկնդրին վրայ: Արդարեւ խոր տպաւորութիւն ունեցան կենացս վրայ այն ամիսներն, զորս

անցուցի 'ի Զմիւռին: Մի կողմէն Ս. Առաջնորդի Հայրական տեսակցութիւնն ու սփոփանքներն, Հիւանդանոցի Խնամակարութեան մարդասիրական հոգածութիւնն եւ առ հասարակ ժողովրդեան ցուցած համակրանքն, միւս կողմէն կիմնայի ազդեցութիւնն զօրեղապէս նպաստեցին առողջական վիճակիս բարւոյրմանն, ուստի եւ դարձայ 'ի Պօլիս, սակայն անջինջ մնացին ամեն յիշատակներ: Ամենէն աւելի կ'արծարծէին մտացո մէջ Ս. Առաջնորդի խօսակցութեան նիւթերն եւ մի անհուն ծարակ'ստիպէր զիս' եմէ ոչ իւր կենդանի բարբառովն, գէթ իւր թղթերովն զուսցնել պատուքս:

Թէ եւ գրիչս յոյժ տկար, սակայն Ս. Առաջնորդի ներողամտութեանն վստահելով սկսայ գրել ինչ ինչ խնդրոց վրայ եւ աղաչել որ իւր պատասխաններով մըխիմարէ զիս: Նորին Սրբազնութիւնն, իւր ծանր գրադմանց մէջ, ակնկալութենէս աւելի յարգեց խնդրուածքս, թղթակցելով սիրով եւ հաճութեամբ: Մեր մտերիմներէն ոմանք, կարդալով, մեզ մօտ գտնուած Տ. Մելքիսեդեկ Սրբազանի բանի մի գրերն՝ խորհուրդ տուին խնամով պահել՝ ոչ միայն եկածներն, այլ եւ գալիքներն: Մենք արդէն կը պահէինք եւ ակամատես էինք 'ի Զմիւռնիս, որ Նորին Սրբազնութեան պաշտօնական գրութեանց պատճէններն միայն կ'առնուէին. իսկ իւր մասնաւոր նամակաց բնագիրներն նոյնութեամբ կը դրկուէին առանց օրինակուելու կամ պատճէններն առնուելու:

Արդ նոյն պահած, պահպանած գրերս են ահա, զորս կարգաւ օրինակելով եւ ամփոփելով եղ'ու Յետ-յակարց մէջ՝ արժան կը համարիմ մի օրինակն նուէր դրկել Ս. Էջմիածնի Մատենադարանին, յուսալով թէ կը պահպանուին այն տեղ 'ի շարս ձեռագրաց իբրեւ հաւաք բեկեալ սրտի, իբրեւ աղալակ Եկեղեցասէր հով-

ուի, որ երբէք չը կամեցաւ լռել 'ի ժամանակի պա-  
պանծման բազմաց: (\*)

Տ. Կարապետ Ա. Քենյ. Սեմեան

17 Յունիսի 1893

'ի Տօնի Ա. Թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեա-  
րոպայ:



(\*) Սոյն Նամականունն սեռ կցուած են *Արեւելիան*  
*Մամոյ* մի յօդուածն եւ Ազգիս երկու Բանիբուն Գրա-  
գիտոց Պ. Պ. Մամուրեանի եւ Պէրպէրեանի երկու գրու-  
ածիւնքն, որոնք Տշմարտութեան բարձրաբարբառ վկայու-  
ածիւնք են յուզուած խնդրոց նկատմամբ:





1886 Ապրիլ 5 Զմիռնիա.

Արժանապատիւ.

Տ. Կարապետ Առաջ Քահանայ Սեբեասի

՚ի Կ. Պոլիս

Արժանապատիւ Սիրելի.

Ընկալայ Ձեր սրտաշարժ նամակն, որ արդարեւ Ձեր զգայուն սրտի յայտարարն էր. Քանի որ Գուք անպատրուակ սիրտ ունիք, անշուշտ կը հաւատար անպատրուակ սրտերուն եւ մենք անպատրուակօրէն կը յայտնենք Ձեզ, որ շատ շուտ մեկնեցաք եւ ժամանակ չը տուիք մեզ մեր պարտքն կատարել: Այն ինչ իզմիրի գարունն սկսաւ եւ Զատկական տօներն մերձեցան՝ Գուք խուսափեցաք ՚ի Պօլիս:

Այս, որչափ արդեօք սիրտս պիտի յուզուէր եւ հոգիս զնայէր, ե՞ծէ Ձեր ինքնաբուղիս եւ մեղամաղձիկ եղանակաւ նուագէիք այս սքանչելի երգն «Յոյս իմ՝ ՚ի մանկուծենէ իմմէ, մի՛ թողուր զիս, Աստուած իմ», եւ այն ըստ կարգին Մեղքիսեղեկի:

Գիտես որ ես արդէն արբեցած, զնայած եմ ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցոյ առաքելական *ոգոսի*, այլ եւ հոգեբուղիս շարականներով եւ երգերով, մանաւանդ երբ՝ ՚ի սրտէ կ'երգուին. սրտով կ'երգուին եւ սրտի համար կ'երգուին: Այս, որչափ երջանիկ պիտի լինէի, ե՞ծէ Աստուած արժանացնէր զիս այս Եկեղեցւոյ ազատութեան եւ սիրոյն համար զոհուիլ: Երգենք «Յոյս իմ՝ ՚ի մանկուծենէ» եւ այն:

Շնորհակալ եմ յանձնարարութիւնս կատարելուդ համար: Այդ մասին տակաւին ժամանակ ունինք մտա-

ծելու: Շնորհակալ եմ ընտանեացդ բարեսիրտ զգացմունքէն եւ կը մատուցանեմ օրհնութիւնս:

Այսօր հաղորդեցի Ձեր գրածներն Սիրելի Շահպաղ լեանին, որ նոյն հուրն անշէջ ունի իւր սրտին մէջ, ինչպէս եւ վկայեց Պ. Ս. Փափագեան 'ի Մանիսայէ վերադարձին:

Աղօթարար վասն լրութեան Ազգիս  
*Մ'հղք. Արք-Եպիսկոպոս Մոռքանեանց*

1886. Ապրիլ 25 Զմիռնիս.

Արժանապատիւ Սիրելի՛:

Նամակիդ պատասխանած եմ, բայց ստանալդ չ'ես յիշեր, ամսոյս 22 թուով գրութեանդ մէջ:

Գրչիդ մասին բնաւ մի գանգատիր, քանզի ես մարդու գրչին սիրահար չ'եմ, այլ սրտին, եւ մարդու սիրտն երկու տողէն իսկ կարող է նշմարուիլ: Ներկայ ժամանակիս մէջ գրիչ շատ կայ եւ մանաւանդ երկամեայ գրիչ, բայց գժբազդաբար սիրտ՝ շատ սակաւ: Գիտէք անշուշտ թէ գիրն կամ գրչին չ'է որ կ'ապրեցնէ, այլ հոգին, սիրտն: Գրչին կամ գիրն առանց սրտի միշտ սպանող է, ինչպէս կ'աղաղակէ Պօղոս Առաքեալն. «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Մեր ազգի գրիչներն գիտենք արդէն, աղաչենք, որ Աստուած կենսատու հոգի պարգեւէ եւ ո՛չ սպանող գրիչ:

Չեր գիրն՝ Չեր բահանայական զգայուն սիրան է,  
 Չեր ձայնն՝ մեր աստուածախօս հայրերուն երգոց եւ  
 նուագաց արծազանքն է: Աստուած ամենուն եւս շտրիք  
 բաշխած է. մին կը գրէ, միւսն կը ճառէ, երրորդն կ'եր-  
 գէ եւ ո՞վ չը գիտէ՝ թէ սրտառու չ երգասացն շատ ան-  
 գամ աւելի կը գրաւէ ունկնդրաց սիրտն քան թէ ճա-  
 ուխօսն:

Մի գունգառիք, գոհ եղիք, որ Աստուած Չեզ եր-  
 գելու ծիրք պարգեւած է. քանզի երգն սրտի ձայնն է,  
 շատ անգամ գրողն կարող չ'է այնպէս իւր սիրտն յայտ-  
 նել, ինչպէս երգողն: Գրեցէք ինչպէս կամիք, Չեր սիրտն  
 արդէն ինձ յայտնի է: Եթէ դուք եւս գրելուս տեղ եր-  
 գըս լսէիք, որ այժմ պիտի երգեմ, անշուշտ աւելի պի-  
 տի զգածուէիք. եւ գիտէ՞ք թէ ի՞նչ պիտի երգեմ, պիտի  
 երգեմ ամենասիրելի մօրս՝ Հայաստանեաց Եկեղեցւոյս  
 համար մի սքանչելի *Աշխոհա* — « Գու յարուցեալ գը-  
 թտացիս ի վերայ Սիօնի, ժամանակ գթալոյ նորս՝ հաս-  
 եալ է ժամ » եւ այն:

Եւ մի՞թէ Աստուած չը յառներ եւ չը գեթար մեր Ե-  
 կեղեցւոյն՝ եթէ մենք սրտով եւ արտասունքով *Աշխոհա*  
 երգենք: Ա՛խ, որչափ գեղեցիկ են Եկեղեցւոյ նուագ-  
 ներն, բայց կ'երեւի թէ առանց մտախոհութեան կ'եր-  
 գուին մեր տաճարներուն մէջ եւ այն պատճառաւ է որ,  
 մեր հոգեւոր ազատութեան սրբավայրերն, մանաւանդ  
 Ս. Էջմիածնի Հայրապետութիւնն մատնուած է ՚ի ձեռս  
 բռնաբարողաց կրօնական ազատութեան: Գիշակեր ան-  
 գրողներն չը յագեցնալով մեր մարմինն կրծելէն՝ մեր հո-  
 գին եւս կը կրծեն: Ա՛խ, կը կրծէ հիւսիսայինն իւր պաղ  
 ճանկերով մեր ջերմ հոգին: *Աշխոհա* երգէ՛, Սիրելի Տ.  
 Կարապետ. երգէ՛ եւ արտասուէ՛, եւ ես քեզ երգակից  
 եւ արտասուակից եմ. քանզի երգով միայն կը մխիթար-

ուիմ եւ դեռ ազատութիւն կայ Հայոց Եկեղեցւոյ նուագներն նուագելու: Այս, մի՞թէ մի օր այն եւս մեր ձեռքէն պիտի յախշտակուի. թող չը տեսնեն մեր աչքերն. թող չը տեսնէ զայն Հայուծիւնն:

Ո՛ր, կը սոսկամ, Ատուած իմ: Գրելուս ախորժակն բաց է. սիրտս լցուած է, երկար կարելի է գրել, բայց ժամանակ չը կայ, կը պատրաստուիմ Մենէմէն երթալու, ուր ողջոյնդ պիտի մատուցանեմ Ս.բեղային:

Հաղորդած տեղեկութիւնդ շատ ստոյգ է. բայց վերնականք խիղճ չ'ունին, որ զլջան: Ռուսաստանի դպրոցներն՝ տակաւին փակ են եւ եթէ բացուին իսկ ըստ հրամանին՝ փակման հաւասար է: Այնօր վերնական խաբեքաներուն, որ հեռագրաւ աշխարհ կ'ուզեն պատրել: Շատ գրեցի, բաւական է: Այսօր Շահպաղեան եւս ՚ի Մենէմէն պիտի գայ:

Ողջ լիւր. եւն:



1886 Յունիս 13 Զմիռնիս.

Արժանապատիւ Սիրելի՛

Այսօր կը կատարեմ այն պարտքս, ինչ որ անցեալ շաբթու պիտի կատարէի: Պարագաներն երբեմն արգելք կը լինին մարդուն իւր մտադրութիւնն ՚ի ժամանակին կատարելու:

Մեր բարեկամաց նամակներն նախ տկարութիւնդ ծանուցին եւ ապա առողջութիւնդ աւետեցին, շատ ուրախ եմ:

Կեանքի դարձուածներու եւ վշտերու վրայ մարդկօրէն մի մտածէր, այլ քահանայօրէն: Մարդոյ երկրաւոր կեանքն բոլորովին ոչինչ է՝ առանց երկնաւոր կեանքին: Կարելի է ասել մինչեւ անգամ թէ երկրաւորն՝ *կեանք* առնուն իսկ կրելու արժանիք չ'ունի: Մարդն երկնքի զաւակ է՝ յերկիր ընկած, մարդոյ կեանքն երկնաւոր է, մարդոյ կեանքն Աստուած է, մարդոյ կենդանութեան աղբիւրն Աստուած է: Ա. խ, չ'ե՛ս ուրախանար, երբ իբր երկնքի զաւակ եւ երկրի մէջ՝ երկնքի պաշտօնեայ՝ աչքերդ դէպ 'ի երկնքի քարձուքն ուղղած, երկնաւոր Հօրն փառք եւ գոհութիւն մատուցած ժամանակ՝ կ'աղաղակես, կրնուագես քաղցր ձայնիւ « 'ի Քէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան եւ լուսով երեսաց քոց՝ տեսանեմք ըզլոյս »: Միայն այս անմահարար եւ զուարթարար Ազբերէն է մեր կենդանութիւնն: Միայն Աստուծոյ երեսաց լուսովն է, որ մենք լոյս կը տեսնենք. առանց կենդանութեան Աղբերն՝ մեր կեանքն դառնութիւն է եւ ո՛չ կեանք, առանց Աստուածային Լուսոյն մեր ամեն լոյսն ու լուսաւորութիւնն խաւարէն տարբերութիւն չ'ունի:

Մաղթենք ուրե՛հն, որ կենդանութեան Աղբիւրն հոսի՝ մեր եւ մեր ազգակցաց սրտերուն մէջ. աղբերսնք որ Աստուծոյ երեսաց լուսով ողորդւին մեր եւ մեր ազգակցաց մտաւոր եւ հոգեւոր աչքերն. քանզի այս կենդանութեան Աղբիւրով միայն կենդանի մնացած են մեր Ազգն ու Եկեղեցին. այս Աստուածային Լուսով միայն՝ *Լուսաւորի*: Կոչուած են մեր երանելի Նախնիք. ինդրե՛նք այս կենդանութիւնն ու լոյսն, տարածե՛նք այս կենդանութիւնն ու լոյսն. եւ երբ մեր երկրաւորն սպառի, մեր աչքերն փակուին արեգական լուսոյ հանդէպ, մենք վախ չ'ենք ունենար, մահ չ'ենք ունենար. քանզի արդէն իսկ միացած կը լինինք կենդանութեան Աղբեր, եւ ճշմարիտ

Լուսոյ հետ: Այս կենդանութիւնն զգեցի՛ր եւ արհամարհէ՛ տկարութիւնդ:

Մտադիր եմ, Տեառն յաջողութեամբ, Չէշմէի հանքային ջուրերն երթալ օդափոխութեան համար բժշկադատիպողական խորհրդով: Եթէ յաջողեցաւ եւ տեղս պատշաճաւոր եւ անդորր եղաւ՝ պիտի գլսմ՝ եւ *երգիս՝* երկու գործ, որով միշտ գուարթ եղած է կեանքս: Երբ երգեմ՝ սիրտս կ'ընդարձակի, երբ գրեմ՝ միտքս կ'ընդլայնի. միով բանիւ կեանք կ'ունենամ: Աղօթէ՛, ուրեմն, որ յաջողի գործս. բայց կենդանութեանս եւ առողջութեանս Արքիւրն միշտ Աստուած է:

Սիրով եւ ողջունիւ. եւն. . . :

1886 Յոռիս 13 Զմիռնիս.

Արժանապատիւ Սիրելի՛.

Այն ինչ Մեծ. Մեզպուրեանի նամակն զրկած էի ՚ի շոգեհաւն եւ անա ընդունեցի Ձեր պատուական գիրն:

Երբեմն աջ թելիս վրայ ցաւ կը գայ եւ այն պատճառաւ կը պարտաւորիմ նոյն իսկ անձնական գրերս այլոց գրել տալ: Այսպէս եղած էր յառաջ քան զայս գրածն: Եթէ երբէք ընդդէմ Մստուծոյ, ընդդէմ խղճի եւ ընդդէմ մարդկութեան քան գրած լինէր *աջ ձեռքս*, պիտի ասէի թէ պատիժ կը կրէ: Բայց այդպիսի քան չ'եմ յիշեր բնաւ: Ուստի կ'երեւի թէ պատիժն երկար

տարիներէ՛ ՚ի վեր անգործ մնալուն համար է. մանաւանդ որ իսպառ անգործ մնաց, երբ Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներն աճուրդի հանուած էին անհարազատ զաւակներու ձեռքով: Խիղճս կը վկայէ թէ՛ այս վերջինին պատիժն է, զոր կը կրեմ'. քանզի Յշմարտութիւնն զգալ եւ չը յայտնել, Յանաչել եւ հրապարակաւ չը խոստովանիլ, իմանալ եւ *գրեալ* չը քարոզել՝ այս ամենն մեծ յանցանք է եւ անշուշտ ամեն յանցանք ունի իւր պատիժն: Կը հաւատամ թէ Աստուած այս պատիժն իսկոյն պիտի վերցնէ, երբ սկսիմ գրել, երբ ըսկըսիմ աջ թեւս թարգման կացուցանել սրտիս, մտքիս, հոգւոյս, որոնք Աղբի եւ Եկեղեցւոյ սիրով միայն կեանք ունին:

Երեւի թէ Կրօնական Ժողովն կատարեալ միտած է *յախ/ժարմայոյ/ժիւն* (1), որ որոշած է դպրոցաց համար Կրօնական դասագրքեր պատրաստել *ախ/ժարմայական* հեղինակութեամբ (2): Ի՞նչ վիճակի հասած է մեր Կրօնական կեանքն, Աստուած իմ, Հիւսիսէն Արծիւն Յանկերով կ'արիւնէ մեր Եկեղեցւոյ սիրտն, իսկ Արեւմուտքէն *ախ/ժարմայականք* կը ջանան բոլորովին *ախ/ժարմայ* առնել զմեզ հոգւով, մարմնով, յիշատակներով. սեւացնել մեր անցեալն եւ մահացնել մեր ապագայն: Ո՞ւր հասած է մեր վիճակն, ո՞ւր ենք, ո՞ւր կ'երթանք: Արդեօք մենք այն սուրբ եւ հոգիացած մարդիկներու զաւակնե՞րն ենք. որոնք ուրախութեամբ մեռան իրենց Կրօնական եւ Եկեղեցական ազատութիւնն կենդանի եւ անմեռ պահպանելու համար: Ո՞ւր է այն սուրբ հոգին, միթէ իսպառ


(1) Կաթողիկոսութիւն:

(2) Խոյն Նաբ—Պէլի:

վերացած է Հայոց Ազգէն եւ հնչած է այն սուկալի վճիռն թէ «Մի՛ մնասցէ հոգի իմ՝ ի դոսա, վասն լինելոյ դոցա մարմին» :

Կրօնական Ժողովն դարձեալ գիր ուղղած է մեզ՝ Յակոբոս վարդապետի մասին, փոխանակ ուղղակի իրեն գրելու: Զարմանալի՛ կատակերգութիւն:

Ողջ լիբուք. եւն:



1886 Հոկտեմբեր 25 Զմիռնի

Սիրելի՛ Պաշտօնեայ Աստուծոյ.

11  
1670  
մնա

Առաջին երկու նամակներդ ինչպէս զգացմամբ կարդացած էի. կարդացի այսօր երկրորդ նամակդ՝ մեծ հաճութեամբ եւ կը փութամ պատասխանել որպէս զի տարակոյտդ փարսաւի, որ միայն զբազմունքս է պատճառն անպատասխանագրութեան՝ և ոչ այլ ինչ:

Ապահով եղիք, որ մեր մէջն *կատու* ըրող չ'է մանկ բանզի *կատուներն* գիտեն իրենց մտն՝ և տեղն որք են *մտազորներն* ու *մտակներն*: Թէեւ Աւետարանն միայն արժւոյ գիշակերութիւնն յիշախէ «Որ գէշն իցէ՛ անդր ժողովացին արժուիք»: Բայց խօսելն ընդհանուր գիշակերաց համար է. ինչպէս են գայլ որոյ տեսակներն շատ են), աղուէս, աքջ (որոյ թէ՛ սե՛ն կայ թէ՛ Տերմակն), կատու (որոյ թէ՛ վայրենին կայ եւ թէ՛ ընտանին), շուն (որոյ թէ՛ տիրատէրն կայ եւ թէ՛ տիրանենզն) եւն. եւն: Այս գազաններն մեզ չ'են շտանար, նախ որ մեր մօտ



գէշ չը կայ եւ երկրորդ կը սուկան մեզմէն, բանգի գիտեն  
եւ կը տեսնեն, որ մենք ուրացած եւ մերկացած չ'ենք  
այն առաքելական եւ քահանայական շնորհքն, որ սրբուած  
է մեզ աներկիւղ կոխել զօնս եւ զկարիւնս եւ զգօրու-  
ծիւնս գիշակերաց:

Տ. Վահան Վարդապետ շատ լաւ դիտողութիւն ան-  
բաժ էր Յունական Օրինագրքի Թարգմանութեան մասին:  
Արդարեւ Վահան Վարդապետի յօդուածոց մէջ կը  
տեսնուի հայկական ուղղադատութիւն, եւ աւելի ազ-  
դեցիկ պիտի լինին իւր խօսքերն, եւ՛ի իւր բնական գու-  
նով պահէ իւր յօդուածներն եւ զգուշանայ մերթ ընդ-  
մերթ շողովարարութեան գոյն տալէ: Ինքն պարտաւոր  
է հշմարտութիւնս անցարձակ խօսիլ եւ բնաւ չը մտա-  
բելայ թէ՛ այս ինչ կամ այն ինչ մեծատունն, կամ պեանս  
ենեմակայ է իր դիտողութեան:

Օգոստեւորդ զԶեզ Աւետարանական սուրբ սիրով  
եւ մա ՚րով Հնգ տեւական առողջութիւն եւ բացար-  
ծուն ք մայութիւն:

Մնամ. եւն

1885 Նոյեմբեր 1 Հոյրհոնիա.

Սիրելի Վահանայ Աստուծոյ.

Կ մտկոյ հասցէէն Տանաչեցի Գեր-  
Մովսէս Վարդապետի իրն եւ բանաւով անսայ Չեր  
ստորագրութիւնն: Լ գրուած էր թէ՛ ըստ սնոյնս եւ  
թէ՛ ըստ ինատոխն: Ք եւ՛ի Մովսէս Վարդապետի պէս



մի արագաչիք քարտուղար ունենայի աւելի լաւ կը գրէի: Լաւ գրելու համար կա՛մ առանձնութիւն պէտք է ինձ, կա՛մ լաւ քարտուղար. Գիտէք որ երկուքն եւս չը կան, ուստի ներողամիտ եղիք:

Ես արդէն պիտի գրէի, որ Մովսէս Վարդապետին յիշէք իւր մտաացութիւնն, որ յառաջնորդութենէ կը կիւրադառնայ եւ չը ծանուցաներ երկտողիւ թէ՛ ինչո՞վ պարսպի եւ ո՞ւր կը նստի, որպէս զի կարենանք երբեմն երբեմն թղթակցիլ: *Հնացիայ* բարսկամ բտերով ի՞նչ կը գէք հասկցնել: Մենք այնպէս կը հաւատանք թէ մեր Տըշմարխտ բարեկամներն երբէք չ'են հնանար, եւ չ'ենք կարծեր որ նոցա սիրան կամ մերն հնացող հազուստի կամ այլ նիւթեղէնի նմանութիւն ունենայ: Ճշմարխտ բարեկամներու սիրան Աստուծոյ պատկերն է, որուն համար մեր հինգերորդ դարու Մեղրաբերան (չ'ատել Ոսկեբերան, որ Յունական է) եղիշէն ասած է. «Ո՛չ հնանայ, զի ո՛չ նորոգի, ո՛չ ծերանայ, զի ո՛չ մանկանայ»: *Անպոփոխութիւնն*, ինչպէս որ Աստուծոյ կատարելութեանց մի յատկանիշն է, նոյն է եւ Տշմարխտ բարեկամաց սրտերու համար:

Անցած օր Սպարթալեան էփէնտի հարցուց թէ ի՞նչ կրնէ Տ. Կարապետն. պատասխանեցի թէ՛ կ'երգէ ու կ'աղօթէ: Սպարթալեանն եւս ինձ պէս երգեցողութեան սիրահար է. մանաւանդ լաւ երգեցողութեան: Հաւատացէք, որ եթէ անդոյդ Ազգ. Ժողովին մէջ բանի մի ընտիր եւ Հայաստանեաց Եկեղեցւոյ հոգին բուրող Շարականներ երգուէին (քան թէ ատենաբան էին) թէրեւս քարեղէն սրտերն իսկ շարժուէին եւ Հայոց Եկեղեցւոյ իրաւունքն չը մտանէին հիւսիսային արծուոյն:

Եւ այնպիսի կը հաւատամ երգի զօրութեան, երբ յուզուած սրտի ձայն է, երբ ներդաշնակ թարգմանու-

Թիւն է հոգւոյ զգացմանց, երբ այն աղբերէն կը բղխի, որոյ ակն Աստուած է եւ կատարածն Յախտենականութիւն: Քանի մի օրինակներ պիտի յառաջ բերէի *Տարակակէն*: Քայց ո՞ր մէկն յառաջ բերեմ. արդէն Գուք գիտե՞: Աւելի լաւ է որ նամակս աւարտելով շուտով շոգեւնուին հասցնեմ եւ յետոյ սկսիմ՝ երգել արտասուելու եւ սպիտակելու համար. քանզի երգելէն յառաջացած արտասուքներն շատ եւ շուտ կը մխիթարեն զմարդ, երբ Աստուծոյ հետ խօսած կը լինի, Տիշտ այն հոգիացած մարդոց պէս, որոնք սաղմոսեցին, որոնք նուագեցին, որոնք գեղգեղեցին՝ որպէս Աստուածային խօսնակներ:

Երգէ՛ ուրեմն, Սիրելի քահանայ, երգէ՛ հոգւով: Քաղցր էր արդարեւ՝ որ օտարութեան մէջ չ'երգուէին Հայու երգերն ու օրհնութիւններն: Քայց ինչ անենք, զոնէ հոգւով թռչելու է դէպ ի մեր Նախնեաց Սրբավայրերն: Երբ երգես «Այսօր զուարճացեալ ցնծայ Եկեղեցի» ընդ նմին աղերսէ՛, պաղատէ՛, որ Աստուած զուարճացնէ այդ Եկեղեցին եւ ազատէ այդ *Աստուածատոռնի Գրախան* անտառի խոզոց ապականութենէն: Երբ երգես «Լերինք ամենայն, այսօր ցնծացէք» հայցէ՛, աղաչէ՛, որ Աստուած փարատէ սուգն ու տրտմութիւնն մեր սուրբ լերանց վրայէն՝ Սեպուհէն, Մասիսէն, Արագածէն եւն. եւն:

Եթէ մեր Եկեղեցւոյ *զոռարնոթիւնն* տխրութեան փոխուած է. եթէ մեր *ցնծալից շիրինք* սուգ զգեցած են, պատճառն այս է որ մենք սրտով երգած չ'ենք եւ մեր *պիղոռն* ու *հոգեհար երգերն* իբր անզգայ մեքենայի ձայն հնչուած են եւ ո՛չ որպէս սրտի ձայն:

Երգեցէք ուրեմն, եւ մի վհատիք, մեծ է Աստուած եւ ամենազօր, որ կարող է բարձրացուցանել զխոնարհս եւ զանկեայս:

Մնամ ողջունիւ եւ երգօք հոգեւորօք. եւն:

1886 Նոյեմբեր, 15 Զմիռնիա.

## Հայակրօն Սիրելի.

Երէկն ընդունած էի Ձեր գիրն եւ սյսօր կը կարդայի տկար Արքանաւի ճիշտ այն հատուածն, որով կը յայտնէր թէ երկիցս այցելութեան եղած էր իրեն՝ իբրեւ քահանայ Բարձրեղոյն մխիթարելով զինքն իր հիւանդութեան մէջ, եւ անա յանկարծ երկրաշարժի ցնցումներ եղան եւ այնքան սոսկալի, որ արիւարտութեանս եւ հաստաաւանտութեանս հակառակ՝ սկսայ՝ *Աստուած իմ, Աստուած իմ*, սղաղակելով Առաջնորդսրանէն դուրս ելնել եւ արդէն բոլոր պաշտօնեայք դուրս եղած գտայ: Երկրաշարժն դադրելէն զինի վերադարձայ սննեակս, եւ սկսայ Ձեր գրոյն պատասխանն գրել, որուն անշուշտ կ'սպասէք:

Ինչ է աշխարհս, Հայակրօն Սիրելի, եթէ ոչ ունայնութիւն, որ մի վայրկենի մէջ կտրող է կործանիլ: Ինչ է մարդս, եթէ ոչ՝ ամենատկար արարած, որ կարող է երկրաշարժի ցնցումէն անգամ սոսկալ, Բայց ինչն մխիթարեց զիս այս սոսկալի պահուն մէջ, եթէ ոչ՝ մի միայն այս սքանչելի խօսքն, այս անպատում բարբառն՝ *«Աստուած իմ, Աստուած իմ»*: Այս խորախորհուրդ բարբառն է, զոր արտասանեց մեր Փրկիչն խաչին վրայ, երբ՝ բոլոր աշխարհէն թողուած եւ մատնուած էր ի իջարջարանս, երբ՝ իբրեւ *Որդի Սարդոյ* բոլոր մարդկութեան քերանէն սկսաւ սղաղակել. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս»: Փոյթ չ'էր, որ թողուած էր մարդիկներէն, բայց, ծանր էր իւր Հօրմէն թողուիլն, ծանր էր իբրեւ *Որդի Սարդոյ*՝ Աստուծմէ թողուիլն, ուստի եւ

աղաղակեց «Աստուած իմ, Աստուած իմ»։ Մեր Փրկիչն կամեցաւ աւանդել, որ սոյն բարբառն պէտք է լինի աշխարհէն թողուած, մասնուած, դաւաճանուած, նեղուած, հալածուած եւ Քրիստոսի Խօսչերութեան խաչակից եղած ամեն մարդասէրներու, ճշմարտասէրներու, իրաւասէրներու եւ մանաւանդ ճշմարիտ Հայաստաններու բարբառն, աղաղակն, գոչումն, ծայնարկութիւնն։

Այն, երանի թէ Հայոց Եկեղեցականութիւնն, Հայոց Եկեղեցւոյ ճշմարիտ զաւակուհւք, երբ իրենց Եկեղեցին բռնաբարուեցաւ, երբ իրենց հոգեւոր իրաւունքներն մասնուեցան, դաւաճանեցան եւ 'ի խաչ համուեցան, երբ իրենց նահատակներու ու մարտիրոսներու անունն ու արիւնն առ ոչինչ համարեցան Եկեղեցւոյ անկախութեան թշնամիէն, երբ սեռան թէ Հիւսիսականէն շատերն կրտսկան, այս անգոր արհաւրանաց պահուն մէջ իրենք աղաղակէին բարձր ծայնիւ «Աստուած մեր, Աստուած մեր, մի թողուր զմեզ. Արի, Տէր, օգնեա՛ մեզ եւ փրկեա՛ զմեզ վասն անուան քո»։

Եթէ մեր Փրկչի սրտաբուղիս ծայնի արծագանքն շարունակ կրկնուէր աշխարհիս վրայ, եթէ ամեն նեղեալ, հալածեալ ու մասնեալ անհատ աղաղակէր «Աստուած իմ, Աստուած իմ»։ Եթէ ամեն լքեալ Ազգ, ամեն բռնաբարեալ Ժողովուրդ աղաղակէր «Աստուած իմ, Աստուած իմ» եւ մանաւանդ՝ եթէ իւր բոլոր գոյութեան մէջ Քրիստոսի անուան համար նահատակուած մի Եկեղեցւոյ զաւակներն բռնաւորին իրենց անարատ Մօր Հայրնարամն մտած ժամանակ աղաղակէին, «Աստուած Լուսաւորչաց, Աստուած Վարդանանց, Աստուած Շնորհալեաց, մի մասներ զմեզ 'ի ձեռս թշնամեաց, մի թողուր զինքնաստեղծ Գրախտ քո զԵկեղեցին Հայաստան, եպց լինել որջ վայրենի գազանաց» կր հաւատամ թէ՛ Աստուած կ'ազատէր զմեզ։ Այն, ուր էր որ այս ծայնն

կրկնուէր ամեն Հայու սրտէն, ամեն Հայու բերանէն, ամեն Հայու տնէն, ամեն Հայու ապարանքէն, ամեն Հայու ազարակէն, ամեն Հայու մատուռէն ու տաճարէն: Եւ անշուշտ կարող էինք հաւատալ, որ ամենաբարի Աստուածն չ'էր թողուր Հայոց Սգգն ու իւր Եկեղեցին:

Այս, ո՛ր էինք եւ ո՛ր հասանք.

Աստուած իմ, Աստուած իմ, աղաղակեցի երկրաշարժի ժամանակ, եւ արդէն ամեն վայրկեան քաղցր է ինձ այս ձայնն, մխիթարութիւն է ինձ այս ձայն եւ սոյն ձայնով միշտ կը քաջալերուիմ այն պատերազմին մէջ, «Որ ոչ է ընդ մարտնոյ եւ ընդ արեան»:

Ողջունիւ սիրոյ. եւն:

Կը ցաւիմ որ նամակս կը վերջացնեմ, բանգի Սպարթալեան Էֆէնտի եկած է նորաշէն դպրոցն եւ զիս կը կոչէ: Կանչուելուս վրայ շատ բան մտաւայ գրելու:

— Թէեւ իմ նամակներս խղճի եւ ճշմարտութեան ձայն են, բայց նենգաւորներու մօտ կարդալէ զգուշացէք, որ զԶեզ չ'վնասեն: Ես միայն յԱստուծոյ երկիւղունիմ եւ ոչ ՚ի մարդկանէ:

1886 Նոյեմբեր 22, Զմիտնիս.

Զգայուն եւ Սիրելի պաշտօնւոյ Եկեղեցւոյ.

Երբ Դուք գոհուածիւն կը յայտնէք իմ նամակաց մասին, որք ընդհանրապէս աճապարանօք կը գրուին, ես Աստուծոյ կը վերագրեմ ամեն բան եւ կը գոհանամ իւր անհուն բարութենէն, որ ինձ պէս մի սկարանօծոյ միջոցաւ այլոց հոգեւոր բերկրանք եւ ցնծութիւն կը մատակարարէ: Հաւատացէք, Սիրելի Հայակրօն, որ ես

ամենէն աւելի լաւ կ'զգամ իմ տկարութիւնս եւ կը խոստովանիմ, որ ոչինչ եմ, իսկ եթէ մի բան կայ իմ մէջ, որ արժէք ունի, այն իմօ չ'է, այն Աստուծոյ կը պատկանի, նորա ձրի շնորհքն է, նորա պարգեւն է, եւ ես անշուշտ ձրի պարգեւի հաւասար անձամբ կարող չ'եմ պարծիլ, բայց կարեմ պարծիլ միայն 'ի Տէր, որոյ շնորհաց աղբիւրներն անապառ են եւ առատօրէն կը գեղանին ամնուն վրայ, որոնք իրենց տկարութիւնն կ'զգան եւ ջերմ սրտով Աստուծոյ կ'ապաւինին:

Կ'ասեն թէ անհաւասաններ կան, անաստուածներ կան եւ ես կը զարմանամ թէ՛ այդ մարդիկն առանց Աստուծոյ ինչպէս կ'ապրին, եւ միմէ կեանք կարելի է անուանել այն կեանքն, որ առանց Աստուծոյ է: Ո՞հ, բաւ լիցի, բանզի միայն Աստուծոյ մէջ է մարդոյ կեանքն, բանզի Նա է միայն «*Կեանք 'ի մահու եւ յոյս 'ի խառարի*»:

Հետեւապէս, ո՛չ միայն իմ գրածներովս կարող չ'եմ պարծիլ, այլեւ ոչ իսկ կեանքովս կամ անձամբս: Ա՛ն կը խոստովանիմ, որ մարդ մի աննուն գոհութիւն կ'զգայ, սրտի անդորրութիւն կ'զգայ, երբ իր ետեւներէն իսպառ կը հրաժարի եւ իւր անձն Աստուծոյ կը յանձնէ: Ա՛ն, որչա՛մի խոր զգացած են Աստուծոյ մեծութիւնն մեր երանելի Նախնիք, որ մեր Եկեղեցւոյ հոգեշունչ մաղթանքներու եւ քարոզներու մէջ կարգադրած են շարունակ կրթիւնել, «*Չանծինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք*»: «*Քեզ Տեառնոյ յանձն եղիցուք*»: Բայց, աւանդ, բանի, բանի շրթունքներ կան, որ մեքենապէս միայն կը կրկնեն այս բանի մի բառերու մէջ ամփոփուած սրանչելի սղօծէն, եւ չ'են զգար թէ ի՛նչ կ'արտասանեն: Ի՛նչ ընեն մեր Նախնիք, ի՛նչ ընէ մեր Եկեղեցին, թող հասարակ ժողովուրդն, այլ նոյն իսկ պաշտօնէ ից մեծ մասն Նախնեաց սրտաբուրդս մաղթանքներն

կրկնող թուծակներ են եւ ոչ թէ նոցա հոգւով վառուած զաւակներ:

Միժէ այդ թուծակութիւնն չ'է՞ պատճառն, որ մեր Եկեղեցոյ իրաւունքներն կը զոհուին այնքան թեժեռութեամբ: Միժէ մեր Նախնիք կը հանդուրժէին, կամ միժէ նոցա հոգին կրողն կարող է երբէք հանդուրժել: Ո՛չ, ոչ, Սիրելի Հայսկրօն, ցաւալի իրականութիւնն ցոյց կը ապ, որ ամենայն ինչ *թոյժակոթիւն* է, ազօծքն էլ թուծակութիւն է, հառաչանօջ կ'ատեմ' հայութիւնն էլ թուծակութիւն է: Թուծակութիւն թուծակութեանց ամենայն ինչ թուծակութիւն է:

Հաւատացէ՛ք որ այսքան թուծակութեանց հարիւրին մէկն եժէ սիրա լինի, եժէ հոգի լինի, եժէ մտք լինի, եժէ զգացմունք եւ իմաստութիւն լինի, բնաւ մեր Եկեղեցոյ եւ Ազգի իրաւունքներն ոսնակօխ չ'են լինիր ամենակատարի բարբարոսէն անգամ: Հաւատացէ՛ք որ աշխարհն կը պատկառի մեր սրտէն, մեր զգացումէն, մեր իմաստութենէն, մինչդեռ այսօր կը ծիծաղի մեր թուծակութեան վրայ: Ո՛հ, ուտի՞ սկսանք եւ ո՛ւր եկանք: Անշուշտ կը ներէք, վասնզի խորին ցաւ կ'զգամ', երբ կը տեսնեմ թէ մեր Նախնեաց հոգին չ'կայ. երբ կը տեսնեմ թէ թուծակութիւն եղած է մեր Եկեղեցոյ սրբազան բեմին, սրբազան ատեանն, սուրբ սեղանն, սուրբ աւազանն, ո՛հ, ամեն բան, ինչ որ հրեշտակաց սրբասաց ձայնի ոգեորուած էր: Ա՛խ, չրկան այն հոգիներն, որ հասկնան այն հրեղէն լեզուն, որով ներշնչուած են մեր ամենասիրելի Եկեղեցոյ բոլոր արարողութիւններն: Բայց եւ դուք մի՛ զարմանաք, որ ամեն գրութեանցս հագներգն կամ վերջարանն միշտ Հայոց Եկեղեցին կը լինի: Սրտիս մէջ խոր սպաւորուած է եւ ոչ մի վայրկեան չ'եմ կարող մոռնալ այդ Եկեղեցին եւ միշտ արտասօք կը կրկնեմ



Մարգարէին սուրբ նուագն 'ի դէմն Հայաստանեայց Եկեղեցւոյն դարձուցանելով « Եթէ ես զքեզ մոռանամ, Եկեղեցի Հայոց, Թող մոռանայ զիս իմ աջն. եթէ ես զքեզ չը յիշմի, չը նուագեմ, Եկեղեցի Հայոց, ո՛վ իմ ուրախութեան սկիզբն, Թող իմ լեզուն իմ քիմքին փակի »:

Այո, մինչև վերջին շունչս պիտի նուագեմ Հայաստանեայց Եկեղեցին, յուսարով որ եթէ մարդիկ չը լսեն, գոնէ Աստուած չը զրկեր զիս այն նախատակներու խմբին խառնուելու, որոնք զոհուեցան իրենց ամենասիրելի Մօր՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ ազատութեան համար:

•Քեզ յանձն առնեմ զանձն իմ, Աստուած իմ:

Յ. Գ. — Ս. Մեարաբեան նորաշէն վարժարանի բացման հանդէսն ամսոյս 30 ին զկնի Պատարագին պիտի կատարուի: Ինդրեմ սոյն լուրն յատկապէս ծանուցանել մեր Սիրելի Ռէժէոս Պէրպէրեանին:

1886 Դեկտեմբեր 18, Զմիտնիս.

Սիրելի Պաշտօնեայ Աստուծոյ՝.

Ծանր զբաղումներս արգելք եղին: Չեր գրութեանց պատասխանելու, ներկայիս եւս պիտի չը պատասխանեմ, այլ պիտի սպասեմ այնպիսի մի սրտեմ ժամու, որ ամեն օտարոտի եւ արսաքրուտ կուտակուած հոգեր փարատուած լինին սրտիս եւ մտքիս վերայէն եւ միայն զուտ Հայկական զգացմամբ եւ մտածմամբ կարող լինիմ պատասխանել Հայակրօնիդ, որ ուրախանաս կամ ցնծաս իբրեւ Հայ. Մի կարծէք բնաւ թէ


հայաստեացիներու եւ Հայ Եկեղեցւոյ թշնամեաց ամենօրեայ ջանքերն կարող են ընկճել տոկուն եւ աննկուն Հայութիւնս. քան լիցի, այլ միայն խոչ եւ խուժ կը յարուցանեն այն ճանապարհին վրայ, զոր նախ կը մաքրենք եւ ապա կ'ընթանանք. հետեւապէս կան ժամեր, որ մաքրելով զբաղուած եմ եւ կան ժամեր, որ ընթանաշով: Առաջին ժամերուն մէջ ներելու են սիրելի թղթակիցներս, երբ յայտնեմ, որ զբաղուած եմ. իսկ երկրորդ ժամերունն զբաղմունք չ'է, այլ ընթացումն ցնծութեամբ: Երանի՛ այն ճանապարհորդներուն, որ զբաղմունքէ զերծ են եւ միայն ցնծութեամբ կ'ընթանան. իսկ մանք շարունակ պարտաւորուած ենք մաքրել այն խոշոր քարերն, զորս մեր Ազգի եւ Եկեղեցւոյ թշնամիներն կը գլորեն մեր ընթացած ճանապարհի վրայ: Ինչպէս սուսցի, ներկայս պատասխան չ'է Չեր նամակին, այլ մի յանձնարարութիւն:

Քժիշկներն խորհուրդ տուած են ինձ՝ կամ շրջիլ, կամ որ եւ է նիւթական աշխատութեամբ պարսպիլ, գէթ օրն մի ժամ: Երանի՛ թէ կարողանացի առաջին պայմանն կատարել, այսինքն թողլով առաջնորդական պաշտօնն շարունակ շրջիլ մեր սիրելի Հայ եղբարց մէջ, ուր որ կը գտնուին՝ 'ի Հայրենիս թէ յօտարութիւն: Բայց դժբաղդարար այս մասին շատ արգելքներ կան. ուստի պարտաւորուած եմ վերջին պայմանն կատարել եւ ապա առաջնորդարանի մօտ անագին պարտիզատեղի պատրաստած եմ, ուր պիտի աշխատիմ մտաւորական աշխատանքներէս սնմախուելու եւ ֆիզիզապէս եւ մտաւորապէս նորոգուելու համար:

Արդ՝ կը ինդրեմ խօսիլ մեր Սիրելի Տիգրան Աղային ( 'ի Պոյաճի գիւղ ) որ ինձ համար քանի մի ընճի՞ ծառատունկեր զրկէ — այն է *Մերկեհիլի, Դեղնի, Չարսի խալսի* (եթէ ունի), *Տաննի* եւսցն: Թող Չեր միջոցա-

յաննէ Աւանդաբեր Խորասանճեանին եւ եղած ծախքն ընդունի. իսկ մենք սցստեղ բերելու ծախքն կը վճարենք: Բայց ճիշտ շոգենաւի օրն յանձնելու է, որպէս զի Թարմութեամբ հասնին այս տեղ:

Ես անկասկած եմ որ եթէ Տիգրան Աղան իւր պարտիզին մէջ չ'ունենայ, ուրիշէն կարող է գնել: Ծառատունկերն պէտք է որ կանոնաւոր լինին եւ ուղղածիգ, ինչպէս է Մուրատեանն. քանզի ծուռ ու մուռ եւ կորացած ծառերն անգամ ատելի են նմա. Թող թէ մարդիկն, քանզի ամեն քանի մէջ ուղղութիւն կը սիրէ:



1886 Գնկաւեմբեր 27 Զմիւռնիա.

### Հայակրօն Սիրելի՛.

Շնորհակալ եմ շատ, որ յանձնարարութիւնս կատարած էք որպէս առ Տիգրան Աղայն նոյնպէս եւ առ այլ բարեկամս: Կը ցաւիմ սակայն որ ծառատունկոց արտադրութիւնն 'ի Պօլոյ արգելուած է եւ իմ ծառատանս պիտի գրկուի համեղապտուղ ծառատունկերէ:

Թողունք ուրեմն նիւթականի հոգն եւ գանք մեր հոգեւոր Բուրաստանին, մեր Աստուածատունկ Գրախտին՝ մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն: Արդէն անուշաբոյր են մեր Աստուածատունկ Գրախտին ամեն ծաղիկներն եւ համեղաբնաշակ են ամեն պտուղներն, բայց սքանչացումն կը պատճառեն, Աւագ տօներու ողկուզաբեր բարունակներն, որոնք ուր են Ճշմարիտ Արթոյն, ո-

րոյ գինին անուշարար է, զմայլեցուցիչ եւ փրկարար, մանաւանդ երբ 'ի մանկուծենէ կը խմուի փոխանակ կամին, ըստ սքանչելի նուագին թէ՛: «Որք փոխանակ կամին արբիք *զգինն* զմայլեցուցիչ»: Այո, Եկեղեցւոյ ամեն նահատակներն, ամեն ճշմարիտ զաւակներն զմայլած են այս անուշարար եւ զուարթարար գինեաւ, եւ այս զմայլման մէջ իրենց արեամբ մկրտուած են ընդ Քրիստոսի 'ի մանխաչին, օծելանք եղած են ճշմարտութեան հոգւոյն, յաղթած են աշխարհի ցանկութեան, յաղթած են կեղծաւորութեան, շողորթութեան, յաղթած են բռնաւորաց, յաղթած են ամեն նենգութեան, յորում պատճառիք նըշմարած են ընդդէմ ազատութեան Եկեղեցւոյ, ընդդէմ ազատութեան խղճի, պատարագւոած են, զոհուած են եւ երբէք տեղի չ'են տուած հոգեւոր ստրկութեան, հոգեւոր գերութեան, որ ամեն գերութենէ եւ ստրկութենէ սուկալին է եւ ահռելին: Երկու օր առաջ Ս. Ստեփաննոսի Տօնն էր, որոյ անունն կը կրէ, ինչպէս գիտէք, Զմիւռնիոյ Եկեղեցին: Արդէն երգոց նուագներով զմայլած էի, մանաւանդ որ Ս. Ստեփաննոսի գիրքն մի մանկական հրապոյր եւս ունէր ինձ համար, քանզի 10 տարեկան հասակիս մէջ 'ի բերան կարդացած եմ Եկեղեցւոյ մէջ եւ պննասիրելի Մօրս՝ Մագնթաղինէի խանդակամբ համբոյրն ընդունած. (Օրհնեալ ինին այն հայրերն ու մայրերն, որոց ծնողական քաղցր համբոյրն իսկ քաջալերութիւն է զաւակաց 'ի Քրիստոնէութեան եւ յԵկեղեցասիրութեան): Տօնախմբութեան առթիւ բազմութիւնն շատ էր, որոշած էի քարոզ խօսիլ եւ որոշումս ուրիշ նիւթի վրայ էր. բայց երբ *ժամատնուտն* կրկարդային եւ այս խօսքերն լուեցան «Որ զբազմութիւն քարանցն, որպէս զճաղիկս հաւաքելով՝ բոլորէր պատկս փոխանակ փշոցն եւ եղեգանն» միարս յափշտակուեցաւ:

Թողի որոշած նիւթս եւ *Քարէ ծաղիկներն* ինձ համար նիւթ առի: Քանի մտածեցի այնքան սքանչացայ: Այո՛, քարերն անգամ ծաղիկներ են այն վկային համար, որ վառուած է Աստուածային սիրով եւ կոչուած է Տշմարտութիւն վկայելու, արդարութիւնն վկայելու, իրաւունքն վկայելու: Այո՛, իւր գլխին կուտակուած քարերն անգամ որպէս պսակ կ'ընդունի այն հոգեւոր ազատութեան ախոյեանն, որ գիտէ, որ կը խոտովանի սրտիւ եւ բանիւ, թէ մարդկութեանն ազատարար Փրկչի փշեայ պսակն անհունապէս բարձր է այն աղամանդազարդ պսակներէն ու թագերէն, որոնք հիւսուած են ստրկացնելու եւ ոչ ազատելու համար, որոնք պարտեցան եւ խոնարհեցան փշեայ պսակին առջեւ: Փշեայ եւ քարէ պսակներն են ուրեմն որ կը նուաճեն բանութիւնն, կը տասանեցնեն արհաւիրքն, կը սարսափեցնեն իրաւանց, ազատութեան թրշնամիներն: Քայց, աւաղ, այնքան հեռացած են նորերն՝ հնոց շաւղէն, նոցա արիութենէն, նոցա ոգիէն, որ ըստութեանքէ անգամ կը սարսափին, թող թէ քարերէ: Ո՛ւր է Եկեղեցւոյ նախատակաց արձուն ոգին. ուր է Տշմարտութիւնն վկայելու բաջարտութիւնն: Ո՞ն, *բառասնից* (1) ուրացութիւնն անգամ վկայութիւն համարեցաւ. ո՞ն, Լըռութեամբ *անսկսելի թիւնն* (2) անգամ իբր առաքինութիւն հուշակեցաւ: Ի՞նչ տարօրինակ վկայութիւն, ի՞նչ նորանշան պաշտպանութիւն իրաւանց:

(1) Քառասուն երեսփոխանքն, որոնք բուէարկեցին ինպատար Մակարի ապօրինի կամ թողիկոսութեան:

(2) Չեղոր վարմունք մի Եպիսկոպոսի, որ բաջութիւն չ'ունեցաւ Աւետարանի պատուէրին համեմատ, Ը՛յո կամ Ո՛ւր առել:

Քանի որ ճշմարտութիւնն վկաներ չ'ունի, Սիրելի Հայակրօն, քանի որ մեր Եկեղեցին գոնէ Եկեղեցակա նաց մէջ՝ իրաւանց վկաներ չ'ունի, ի՜նչ կարող ենք ընել, եթէ ոչ սրտաբեկ եւ տխրաժախիժ չը մեռնելու համար նուագել մեր Նախնեաց սքանչելի նուագներն, մեր արտասուքն խառնել նոցա արեան հետ եւ աղերսել, միշտ աղերսել, որ Աստուած յարուցանէ վկայողներ, Աստուծոյ եւ Եկեղեցոյ սիրով վառուած քարոզողներ, յարուցանէ այն ոգին, որով նամատակեցաւ աշխարհն Հայոց իւր հոգեւոր ազատութեան համար, ինչպէս կը նկարագրէ սքանչելին Եղիշէ. «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր եւ այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց» եւն. եւն. Սէր, Սէր, Աստուծոյ սէրն միայն մեծ է ամեն մեծութենէ եւ յաղթող է ամեն երկիւղի: Վերջո՛ր այս սէրն եւ անա ստրկութիւն, ցածութիւն, վատութիւն, նենգութիւն, մատնութիւն եւն. եւն.

Մենք չը մոռնանք *յարկ ծաղիղներն*, Սիրելի Հայակրօն, եւ այդ ծաղիղներով պատկուածներու հոգին ու քաջութիւնն:

Այն, որչափ քաներ կան գրելու: Քանի բուրաստանա մշակեմ եւ ծաղիկներ պատրաստեմ միշտ միտքս պիտի գան *յարկ ծաղիկներս*:

Ի՜նչ սքանչելի եւ սիրուն ծաղիկներ:

Մնամ ողջունիւ. եւն:



1887 Յունիս 3 Զմիռնիս.

## Սիրելի Պաշտօնեայ Ատուծոյ.



Յերդ կ'ընդունիմ եւ կը կարդամ մեծ հաճութեամբ: Գրիչդ տկար չէ եւ ոչ կուպիտ, ինչպէս որ շարունակ կը յիշես, նամանաւանդ գիտես արդէն որ ես գրչի տրկարութեան կամ կուպտութեան չ'եմ' նայիր, այլ սրտի զգացմանց: Շատ զօրաւոր գրիչներ կան, բայց միշտ կը սխալին, երբ կը կարծեն թէ՛ քարեղէն սիրտն մարմնեղէն կամ հոգեղէն ներկայացուցած են: Սիրտն է որ գրչին փափկութիւն կը տայ, եւ ոչ թէ գրիչն է որ սիրտն կը փափկացնէ:

Մարդ կայ, որ երկար կը ճողոմաբանէ եւ բնաւ մարդու սրտի վրայ չ'ազդեր. մարդ կայ, որ երկու խօսք կը խօսի եւ շատ սրտեր կը յուզէ: Սրտի զօրութիւնն է, որ մի ուրիշ սրտի կ'ազդէ եւ ոչ թէ գրչի: Սիրտ, ըզգայուն սիրտ, անմեղ սիրով վառուած սիրտ, անսմ մարդու ճշմարիտ զօրութիւնն: Այս այն զօրութիւնն է, որ

միշտ կարող է գրաւել, ազդել, յաղթահարել եւն. եւն. եւ այնպիսի սրտերն միբաւորուած կամ զօնուած ժամանակն իսկ՝ դարձեալ յաղթական են, քանզի Տշմարիտ սիրտն Աստուծոյ կայարանն է, Տշմարիտ սիրտն օծուած է հզօր զօրութեամբ, Տշմարիտ սիրտն այն անառիկ ամբողջն է, ուր Աստուծոյ ամենագօր հոգին կը հանգչի: Աշխատինք այսպիսի սիրտ ունենալ եւ բնաւ կարօտութիւն չ'ենք ունենար մեր գրչի տկարութեան կամ կոպտութեան վրայ մտածելու: Եթէ սիրտն սխալներ չ'ունենայ, գրչի սխալներն չ'են դատարհետուիր:

Ես երբ կը գրեմ Ձեզ, ո՛չ իբրեւ գրագէտ կը գրեմ եւ ո՛չ իբրեւ գրագիտի կը գրեմ, այլ կը գրեմ ամենայն պարզութեամբ, աւելի սրտով խօսելով քան թէ գրաւ: Իբրեւ պաշտօնեայ Եկեղեցոյ եւ Ազգի կը խօսակցիմ Ձեզ հետ, որ նայալէս պաշտօնեայ էք Ազգին եւ Եկեղեցոյն: Մենք ո՛չ թէ կը ճառենք կամ կը Յարտաբարանենք, այլ միայն մեր սրտերն կը բանանք իրարու, մեր կոչման եւ պարտաւորութեան շրջանին մէջ: Երանի՜ թէ մեր ամեն պաշտօնակիցներն եւս այսպէս վարուէին, իրարու հետ անկեղծ եւ պարզ լինէին, իրենց կոչումն արծարծէին, փոյթ տանէին որ հոգեւոր կեանքն չը շիջանի իրենց մէջ, արթուն լինէին որ Աստուծոյ լուսով լուսաւորուած Եկեղեցոյ մէջ՝ լոյսն չը մարի եւ խաւարն չը սիրապետէ: Եթէ մի պաշտօնեայ, Եկեղեցոյ մի Տշմարիտ զաւակ սրտով կը նուագէ այս սքանչելի աղերսն, « Լուսով Աստուածութեան քո, Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զԵկեղեցի, պահեա՛ զսա անշարժ յաւիտեան » ինքն եւս անշուշտ կ'աշխատի իւր կողմէն, որ այս լուսոյ ջահն չը շիջանի, այս լուսոյ աշտանակն, այս հոգեւոր կենաց փարօնն՝ սուրբ Եկեղեցին՝ անշարժ մնայ յաւիտեան: Իսկ երբ նուագողին սիրտն նուագին հետ չ'է, ամեն ինչ տե-



դէն կը շարժի, տշտանակն կը տատանի, լոյսն կը շիջանի եւ մարդիկ կը խարխափին խաւարի մէջ, ստուերի մէջ, աղբահոջի մէջ:

Լոյս, պարզութիւն սրտի, անկեղծութիւն, անա թէ ինչ կը պահանջէ Աստուած մեր պաշտօնին համար, մեր կոչման համար: Գիտէ՞ք թէ ո՞վ էր Քրիստոսի եւ Քրիստոնէութեան առաջին թշնամին. — *Փարիսեցիութիւնն*: Գիտէ՞ք թէ որո՞ց գլխուն *վայ* կարդաց գեթա՞ն ու մարդասէրն Աստուած. — *Փարիսեցոց*: Երբ Քրիստոնէութեան կամ Աւետարանի պաշտօնէից մէջ փարիսեցիութիւնն տիրէ, ո՞ւր կը մնայ այնուհետեւ Քրիստոնէութիւնն:

Գառնալով առաջին խօսքիս կ'ասեմ, Սիրելի Հայա կրօն, որ մեր գրութեանց մէջ աւելի իրարու սրտին նայելու ենք եւ ո՛չ թէ գրչի ճարտարութեան: Ամեն ճարտարութիւն որ 'ի սրտէ չ'է, կեղծաւորութիւն է, փարիսեցիութիւն է, զոր մեր Տէրն ու վարդապետն ասեց սուկարով եւ զոր մենք եւս պարտաւոր ենք ասել 'ի բոլոր սրտէ եւ յամենայն զօրութենէ:

Մի՛ զօրմանար գրածիս վրայ, երբ նստայ գրել, մտադիր էի *Նոր Տարւոյն* վրայ գրել, բայց տես թէ ուր հասայ, նամակիդ մի խօսքէն շարժուած: Նոր տարւոյն պարտքն չը թողունք:

Կը մտղթեմ որ Ամենաբարի Աստուածն, որ տարիներ եւ դարեր կը շտրկէ ազգերուն, բաղցրութեամբ նայի՛ խեղճ Հայոց Ազգին եւ Եկեղեցւոյն վրայ ներկայ թուականին մէջ, լոյս տայ մեզած աչքերուն, որ տեսնեն իրենց Եկեղեցւոյն առջեւ բացուած խորխորասն եւ զգուշանան խորատուգուելու: Կը մտղթեմ, որ Ամենասուեա Աստուածն, տեսնելով այն սրտերն, որոնք Բանադուն

ծունր կրկնած չ'են, հաճի՛ ազատել Հայոց Ազգն Բահա-  
ղու երկրագութենէն: Մաղթեցէ՛ք եւ Գուք, Սիրելի  
Հայակրօն, ամեն օր մաղթեցէ՛ք, որ տակաւին 'ի հող  
չքմտած, կարողանամ Հայոց սուրբ եւ առաքելական Ե-  
կեղեցւոյ ազատութիւնն տեսնել եւ Հայրապետութեան  
անկախութիւնն՝ "քաղաքական ստրկութենէ:

Շնորհաւորելով Ձեզ նոր Տարին եւ մաղթելով ա-  
ռողջութիւն եւ արթնութիւն 'ի պաշտամանդ, եւ մնալով  
վառեալ 'ի սէր ազատութեան Հայաստանեայց  
Ս. Եկեղեցւոյ եւն:

1887 Յոռնվար 21 Զմիռնիս:

### Սիրելի Պաշտօնեայ Եկեղեցւոյ՝

Ընկալաց երկու նամակներդ, շնոր-  
հակալ եմ զգացմանցդ մասին: Յրտէն յառաջացած ակա-  
րութիւնս չընեբեր երկար գրել, ներողամիտ կը լինիք:  
Գեր. Մովսէս վարդապետ եղբօր նամակին եւս այժմ  
կարող չ'եմ պատասխանել: Թող աշխատէ՛ եւ գործէ՛,  
ամեն տեղ հունձ կայ, միայն մշակ պէտք է, մշակ ար-  
թուն, քաջ, նախանձախնդիր ազգային, քրիստոնէական,  
յախտենական իրաւանց եւ իբր ուռ հաստատեալ յՈրծն  
Յշմարիտ, որոյ Հայրն ՄՅԷԿ է: Մշակ է ահա նոյն իսկ  
հնձոց Տէրն: Ուրեմն պէտք է՝ մշակել, պէտք է լինիլ  
մշակ սուանց ամօթոյ:

Գիրդ Թախծութիւն կը բուրէ, բայց Հայակրօն քրիս-  
տոնէ՛ կեանքն ուրախ պէտք է լինի: Մեր անձի հաւար

երբէք պիտի չբտրամինք, եւեւ անմեղ ենք, մի տրամու-  
 թիւն կայ միայն որ կարող է զմեզ պաշարել, այս տրտ-  
 մութիւնն է մեր Ազգի, մեր Ժողովրդի ընծացից համար,  
 մեր Եկեղեցւոյ իրաւանց բռնաբարման համար եղած  
 տրամութիւնն, այս այն խոր տրամութիւն է, որուն հա-  
 մար մեր Փրկիչն աղաղակեց. «Տրտում է անձն իմ մին,  
 չեւ 'ի մահ»։ Այս տրամութեան ենթարկուած են ամենէն  
 անմեղներն անգամ, ո՛հ, նոյն իսկ անմեղ Գառն Աս-  
 տուծոյ։

Որչա՛փ ցաւալի բան է Կրօնական Ժողովոյ *Հրահանգն*,  
 զոր իբր արժանաւոր բան կարծելով կը հրատարակէ  
*Հայրենիք* Լրագիրն։

Եւեւ մարդիկ այդ *հրահանգոյ* դաստեն Հայոց Եկե-  
 ղեցին, պիտի գուշակեն որ Առաքելական Եկեղեցի չ'է,  
 այլ մի անօրինակ եւ տարօրինակ Եկեղեցի։ Ափսո՛ս,  
 հազար ափսո՛ս։ Այնպիսի մի հրահանգ է, որ մեռած է  
 լեզուաւ, մեռած է ըստ իմաստին, մեռած է ըստ շնոր-  
 հաց, մեռած է ըստ դասաւորութեան, մեռած է ըստ  
 վարդապետութեան եւ յայտնի սպացոյց է որ Կրօնական  
 Ժողովն իսկ մեռած է, չ'ասեմ բոլոր Հայ Եկեղեցակա-  
 նութիւնն։

Ո՞ւր հիմունք Ս. Եկեղեցւոյ Ս. Գիրքն, եւ ո՞ւր  
 այդ *Հրահանգն* . . . :

Աղօթենք.՝



1887 Փետրվար 14 Զմիռնիա.

Հայակրօն Պաշտօնեայ Աստուծոյ՝.



րկու նամակներուդ միանգամայն կր պատասխանեմ, քանզի պարագաներն չընէրեցին ուրոյն ուրոյն պատասխանել:

Ներկայ Բարեկենդանի օրերն խոր թախծութեան օրեր էին ինձ համար, եւ եմէ այսօր գրիչս ձեռքս կ'առնում, պատճառն այն սքանչելի եւ մխիթարական երգերն ու ընծերցուածներն են, զորս 'ի Տօնի Տիւտնընդաստիկն կր'նուագէ եւ կր հնչեցնէ մեր ամենասուրբ Եկեղեցին առ Քառասորեայ Մանուկն Յիսուս, որ թէ եւ յաւիտեանական օրէնադիր՝ կը խոնարհի կատարել օրէնքներն:

Առ Յիսուս ունեցած հաւատն ու յոյսն է որ զիս կր մխիթարէ եւ որով չ'եմ վհատիր՝ թէ իսպառ մատուած մնայ Հայաստանեաց Եկեղեցին իբր խաղալիկ 'ի ձեռս քաղաքականութեան Ռուսիոյ: Եմէ այս յոյսն չը վիներ, հաւատացէք որ անհնար էր մխիթարութեան ակնկալել 'ի մարդկանէ:

Գիտէ՛ք անշուշտ, Սիրելի Հայակրօն, թէ ինչ է այս թախծութեանս պատճառն: Ո՛չ միայն Պօլսոյ հրատարակութիւններն, այլ նաեւ մասնաւոր նամակներ գութեցին այն անօրէն հրամանն, որով Ռուսիոյ կառավարութիւնն հրամայած է Հայոց կրօնական եւ Եկեղեցական ուսմունքներն Ռուսական լեզուաւ աւանդել հայ մանուկներուն՝ Ռուսաց դպրոցներու մէջ եւ այսուհետեւ հայ կրօնուսույցներն չ'ընդունիլ առանց վկայագրի ռուսական հոգեւոր դպրոցաց Տեսչութեան:

Գիտէ՛ք արդեօք թէ՛ ի՞նչ կընշանակէ այս, Սիրելի Հայակրօն. — Այս կընշանակէ թէ՛ երբ տեսնէ որ հայ կրօնուսույցներն ռուսական լեզուաւ բաւական արդիւնք յառաջ բերած են, պիտի հրամայէ որ հայ Եկեղեցեաց մէջ եւս ռուսական լեզուաւ կատարուին ժամերգութիւնք: Ճիշտ այսպէս եղաւ Վրացոց Ազգին, որուն ականատես եղած եմ մանկութեանս ժամանակ. առաջ սկսան ռուսական լեզուաւ կրօնք ուսուցանել եւ երբ բաւական թուով ռուսագէտ եւ ռուսախօս քահանաներ եւ սարկաւազներ կամ կղեր պատրաստեցին, հրաման եղաւ ռուսական լեզուաւ եւս ժամերգութիւն կատարել՝ Վրացոց եկեղեցեաց մէջ, եւ երբ Ռուս քահանաներով լեցուեցան եկեղեցիներն, իսպառ խափանուեցաւ Վրացոց լեզուաւ ժամերգութիւնն: Խեղճ ժողովուրդն ըին արտասունքով համակերպեցաւ այս քաղաքական բռնաբարութեան, մանաւանդ որ իրենք եւս ռուսադաւան էին չը համարձակեցան ձայն բարձրացնել:

Արդ՝ այս սոսկալի բռնաբարութիւնն այժմ սկսուած է Ռուսաստանի Հայոց համար: Էջմիածնի Մակարն լուծ է, որովհետեւ արդէն ուխտած է համակերպիլ ռուսական օրինաց: Եկեղեցւոյ կամ Եկեղեցական գործոց համար խօսիլն Եկեղեցւոյ պետին կը պատկանի եւ այդ պեսն

դժբաղդաբար Ռուսիոյ պետական նպատակներու հըռ գործին է: Ո՞վ պիտի խօսի Ռուսաստանի մէջ՝ քանի որ Մակարն պապանձած է. — Ո՞չ որ: Ո՞վ պիտի խօսի Տաճկաստանի մէջ. — Դարձեալ ո՞չ որ, քանզի Տաճկաստանի *սևոսանի* Եկեղեցականներն իսկ խուլ եւ համր են Հայոց Եկեղեցոյն համար: Կան այնքան անամօժներ, որ տակաւին բաժակներ կը քամեն Մակարի համար եւ կը ծափահարուին անմիտներէն, չ'անեմ իրենց պէս դաւաճաններէն:

Հաւատացէ՛ք, Սիրելի Հայակրօն, որ Տիեզերական Պատմութեան մէջ եւ ո՞չ մի դաւանութեան կղեր այն ամօժալի դերն խաղացած է իւր կոչման եւ պաշտօնին նկատմամբ: Ինչ որ խաղաց եւ այսօր կը խաղայ հայ կղերն:

Պէշիկեաշի գերեզմանատան խնդիրն Ռուսական բաղաբազխութեան խաղ է, որոյ դերասաններն մեր Եկեղեցականներն են: Ճիշտ այն միջոցին, երբ Ռուսիոյ կառավարութենէն կը հրամայուի Հայոց կրօնքն Ռուսական լեզուաւ ուսուցանել, Պօլոյ մէջ եւս կը յուզուի գերեզմանատան խնդիրն, եւ որովհետեւ Ռուսիա համբած է Պօլոյ Եկեղեցականաց ակռաներն եւ գիտէ ժողովրդեան գրգռուելու միջոցն եւ ապահով է որ նոքա պատրաստ են դիակներու կամ քարերու համար՝ իսպառ մուսնալ իրենց կենդանի Եկեղեցին, իրենց լեզուն, իրենց հայրութիւնն, այս խորամանկութեամբ անոս գաղտնապէս յարուցած է սոյն գերեզմանական խնդիրն, որպէս զի Պօլսեցիք չը կարենան տեսնել եւ մտածել թէ իրենց լեզուն, իրենց Եկեղեցին, իրենց ազգութիւնն գերեզման կը մտնեն Ռուսաստանի մէջ: Ռուսիա քաջ գիտէ որ եւ իցէ ազգակուլ որոշումն յառաջ տանելու համար Ռուսիոյ Հայերուն մէջ՝ տարօրինակ խնդիր յարուցանել Տաճկաս-

տանի մէջ եւ օրերով ու ամիսներով զբաղեցնել ժողովներ  
ու ժողովականք, Եկեղեցականներ եւ ժողովրդականք:

Շատ լաւ մտածեր էր թէ նաւն ծովուն մատնած  
են իրենց ձեռքով եւ նաւակի են հետամուտ, բայց աւելի  
յարմար է ասել թէ՛ հայութեան հոգին կը մեռցնեն,  
ազգութիւնն կը դաւաճանեն եւ փոշիներու համար նա  
խանձախնդիր կը ձեւանան:

Ա՛խ, պէ՛տք էր, պէ՛տք էր այդ փարիսեցիներն խա-  
րել. բայց երևի թէ Նախախնամութիւնն կամեցաւ պատ-  
ժել Հայոց ազգն իւր անհոգութեան, թեկեւ ամուռութեան  
եւ անտարբերութեան համար:

Աղաչե՛ նք, Սիրելի Հայակրօն, պաղատե՛ նք մեր տա-  
ւապակիր Սխմն Կաթողիկոսի հետ գոչելով առ Տէր,  
« Գարձո՛՛ ի մէնջ զցառումն քո, վասն անապառ գեթու-  
թեան քո »:

Ո՛վ Տէր Աստուած, միթէ պիտի մոռնա՞ս Հայոց  
բազմաչարչար Եկեղեցին. միթէ պիտի թողո՞ւս, որ Հայոց  
լեզուին, Հայոց նուագներուն՝ փոխանակեն Ռուսական  
երգերն ու լեզուն: Ո՛հ, Աստուած իմ, եթէ ներկայ սե-  
րունդն անարժան է Քո գեթութեանդ, գոնէ՛ յիշէ այն  
վիպներն ու նահատակներն, որոնք ոչ միայն քո սիրոյդ  
համար զոհուեցան, այլ նաեւ անուշաբոյր երգերով ու  
նուագներով նոխացած թողին քո Եկեղեցին, որոնք թէ եւ  
փոխեցան յաշխարհէ՛ս, բայց իրենց սրտի սղաղակն, իրենց  
հոգւոյ ձայնն միշտ արձագանք կը տօյ Հայոց Տաճարնե-  
րուն մէջ: Լսէ՛ այս արձագանքն, ո՛վ Տէր եւ « անշարժ  
պահեա՛՛ զաթոռ Հայրազնեաց »:

Ո՛վ փղօթք, որ միակ մսիթարութիւն ես սրտիս, ա-  
հա՛ քեզմով կը կնքեմ խօսքս:

1887 Մարտ 7, Զմիռնիա.

## Սիրելի Պաշտօնեայ Եկեղեցւոյ.

Հնորակալ եմ տուած տեղեկութեանցդ մասին, որոնք թէ եւ խօսքեր են միայն, բայց դարձեալ իմանալ պէտք է:

Մեր Սիրելի Փափագեան շատ լաւ կը խօսի, բայց զարմանալի է, որ *Մեաշուրթն* այդքան կարեւորութիւն ունի իրեն համար: Արքան նամակներ կ'ընդունիմ կողկասէն, այնքան զայրոյթս կը գրգռի Սեւաշուրթին դէմ: քանզի ամենքն այնպէս համագումար են (եւ շատ իրաւ է) որ եթէ միայն այդ անձն հայութեան արիւն ու սիրտ ունենար եւ ընդդիմանար, բնաւ Հայոց Եկեղեցւոյ իրաւունքներն չ'էին վտանգուիր եւ երբէք այն չար հետեւանքներն չ'էին յառաջանար: Ինչպէս են Հայ դպրոցաց փակումն, կրօնի եւ լեզուի ուսմանց բարձումն եւն. եւն. Զարմանալի է, որ այդ դաւաճան հրէշներն դարձեալ յարգ ու պատիւ ունին, եւ այն եւս հասկացող դասուն կողմէն: *Մեաշուրթն* եւ *Մեափետուր*, ահա՛ երկու ստորին արարածներ, որոնք իրենց փառասիրութեան համար խող կը խաղան Ազգին եւ Եկեղեցւոյն գլխուն:

Սիրելի է հրաւերդ 'ի Պօլիս, բայց ես աւելի տարբեր մտածմունք ունիմ, պիտի աշխատիմ, եթէ հնար է ազատիլ առաջնորդական պաշտօնէ եւ գրական երկասիրութեամբ պարսպիլ. քանզի առաջնորդական մանր մունք գործքերն բոլորովին կը կաշկանդեն միտքս, սիրտս եւ գրիչս եւ ժամանակ չ'եմ ունենար իմ սիրած գործով պարսպելու: Ես կըզգամ, որ Աստուած ինձ շնորհք տուած է գրական սուգարիցի քան թէ առաջնորդականին



համար եւ անշուշտ եթէ չը գործադրեմ եւ չը շահեցնեմ իւր տուած քանքարն, պիտի դատապարտէ զիս քանքարածագոյց անպիտան ծառային նման: Ամսոյս 13 ին կը լրանայ տասնամեայ առաջնորդութեանս շրջանն, փառք եւ գոհութիւն Բարեբարին Աստուծոյ, որ օգնած է ինձ, իմ տկարութեան մէջ իսկ, գործել Ազգիս եւ Եկեղեցւոյս համար: Էս կըզգամ, որ երկար կեանք պիտի չ'ունենամ, եւ արդէն ունեցածէս անհունապէս գոհ եմ, որ Աստուծոյ միակ շնորհքն է, բայց կը փափաքիմ, որ գոնէ վերջին տարիներս գրական ասպարիզին մէջ կ'ընեմ, որպէսզի սիրտս ու միտքս մարմնոյս հետ գերեզման չը մտնեն, այլ հողի երեսին մ'անն եւ մարդիկ իմ երկասիրութեանցս մէջ իմ սիրտս եւ միտքս կարդալով՝ յիշեն որ Աստուծոյ տուած պարգեւն գործադրած եմ եւ միայն մարմնով յապրած չ'եմ, այլ հոգւով, այլ եւ իմ սիրտս ու միտքս յետագայից հաղորդելով:

Օղափոխութենէն սկսանք եւ ո՛րք հասանք:

Սոյն վայրկինիս լրագիրք ծանուցին, որ վ. եհ. Սուլ-  
թանն չ'է ուզած Պէշիկեաշի Գերեզմանատան ոսկերքն  
փոխադրել տալ, այլ միայն պարտէզ պիտի լինի: Ան-  
շուշտ *Մեհաշորթն*, *Մեհափետորն*, *Ենամին* եւն. եւն.  
պիտի պարծենան իրենց քաղաքականութեան վրայ, բայց  
կըզգա՞ն արդեօք թէ որքա՞ն ծանրակշիռ են Սուլթանի  
խօսքերն եւ խնդրագիրն յետ դարձնելն եւն. եւն.: Թողլով  
մեռելոց խնդալ ոսկերոտեօք՝ մենք աղօթենք մեր Եկե-  
ղեցւոյ ազատութեան եւ կենդանութեան համար:



1887 Մարտ 21 Զմիռնիա.

## Սիրելի Պաշտօնեայ Եկեղեցւոյ.

Անցած շաբթու չը կարացի գրութեանդ պատասխանել, քանզի տկար էի, այսօր կը պատասխանեմ եւ գիտէք անշուշտ, որ այսօր մեր բազմաչարչար նահատակի, մեր Լուսաւորիչ Հայրապետի տօնն է:

Ես մտնեցած եմ այսօր թէ Գուք ի՞նչ գրած էիք անցեալ շաբթու, քանզի այսօր զմայլած եմ այն հոգեւոր նուագներով, զորս մեր Ս. Եկեղեցին երգեց, հազարաւոր տարիներու հազարաւոր յիշատակներ զարթուցանելով սրտիս մէջ: Անշուշտ երգեցիր, մենաւորական Եկեղեցւոյդ մէջ Ս. Լուսաւորչի շարականներն, եւ հարկ է՛ եմ տեսներ աստանօր մի առ մի յիշել, բայց պատուէր կը տամ որ միանգամ եւս Ձեր ձեռքն առնուք եւ ուշադրութեամբ կարդաք *Այսօր գոհարձացեալն*, նոյն աւուր *Հարցն*, *Ողորմեալն*, *Տիր երկնիցն*, *Մանկոռնքն*, *Ճաշոռն*: Կարդացէ՛ք եւ համեմատեցէ՛ք թէ ի՞նչ էր Հայոց Եկեղեցին եւ ի՞նչ է այսօր: Կարդացէ՛ք եւ որոնեցէ՛ք թէ ո՞ւր է այդ նուագներն ներշնչող հոգին. ո՞ւր է Հայաստանեայց Եկեղեցին ոգեւորող, կենդանացնող հոգին: Ո՞ն, կը ստակամ յայտնել թէ Ստուած տեսներով որ մեր Եկեղեցականք մարմին եղած, նիւթ եղած են, արձակած է իւր ստակալի վճիռն. «Մի՛ մնասցէ հոգի իմ ՚ի դոսա, վասն լինելոյ դոցա մարմին»: Եւ միթէ արդար չէ՞ այդ վճիռն: Այն Եկեղեցականութիւնն, որ Եկեղեցին, կենդանի Եկեղեցին կը ծախէ եւ գերեզմաններ կը պաշտէ, այն Եկեղեցականութիւնն, որ Լուսաւորչի չարչարանքն կը մոռնայ եւ իւր մարմնաւոր հանգստութեան համար

Ռուս կառավարութեան կամաց կը խնկարկէ. այն Եկեղեցականութիւնն, որ Աստուծոյ Փրկարար աջն կը մերժէ եւ ստրկարար մարդու թամ կը համբուրէ. այն Եկեղեցականութիւնն, որ պատմութեան չը հաւատար, ապագայի չը հաւատար եւ ոսկերութիւններու ու փոշիներու խընդիր յուզելով՝ կը փոշոտէ ռամկի աչքն եւ կը կուրացնէ, որ իւր մեծամեծ դաւաճանութիւններն չը տեսնէ; միմէ իւր հոգին կը թողո՞ւ Աստուած այդպիսի Եկեղեցականութեան մէջ: Ի՞նչ խղճով երգեցին այսօր Եկեղեցուրաց Եկեղեցականք. «Այսօր երկնաւոր պատարագին կատարող քահանայութիւն՝ իձեռն քահանայապետին բարեբանեցէ՛ք զբաշխողն շնորհաց» եւ կամ թէ «Այսօր քահանայք, հոգեւոր պատարագին սպասաւորք, վերապատուեն զքահանայապետն սուրբ, որով երկնայնոց քահանայութեանցն հաղորդեալք»: Արդեօք հասկցա՞ն մինչեւ անգամ թէ ի՞նչ երգեցին:

Ո՞ր, Սիրելի Հայակրօն, Աստուծոյ Եկեղեցին՝ Աստուծոյ հոգւով լցուած պիտի լինի, եւ այդ հոգին շընչողն գլխաւորապէս Եկեղեցականք պիտի լինին, բայց երբ Եկեղեցականք անհոգի մարմին եղած են, ի՞նչ կարելի է սպասել: Մաղթե՛նք, Սիրելի Հայակրօն, ազերսե՛նք, աղաչե՛նք, որ Աստուածային հոգւոյ քաղցրախօս քնարներն կենդանանան մեր Եկեղեցւոյն մէջ. պտղատի՛նք, որ Աստուած մաքրէ մեր Եկեղեցականներն իրենց աղտերէն, արուստե՛նք եւ երգե՛նք. «Քնար քաղցրախօս Աստուածային հոգւոյն, յօրինեալ մարմնով եւ մասամբք հոգւոյդ (ո՛վ Սուրբ Գրիգոր) առ քղխեալն ՚ի Հօրէ Փառակից Որդւոյ Սուրբ Հոգին մաղթեա՛, զի մաքրեցցէ զմարմնապաշտութիւն եւ զմարդապաշտութիւն եկեղեցականաց, զի վանեցցէ զշահամոլութիւն եւ զանտարբերութիւն աշխարհականաց, զի հալածեցցէ զթեմեւամոռ-

Թիւն եւ զիմաստակութիւն գրագիտաց, եւ զի վառեցէ զլոյս գիտութեան 'ի սիրտս ամենեցուն, որպէս զի բարձրածայն կարողանանք երգել, «Այսօր ժողովուրդք Հայաստանեայց, աշակերտեալք ճշմարտութեան 'ի ձեռն Սրբոյն Գրիգորի, օրհնեցէք զլոյսն անսկիզբն»:

Այո՛, այո՛, աղերսենք եւ պաղատինք, որ Աստուած աիռէ Հայոց Եկեղեցւոյ զաւակներուն վրայ, պաշտօնէից վրայ՝ ճշմարտութեան լոյս, գիտութեան լոյս, հոգեկան լոյս, ազատութեան լոյս, փրկութեան լոյս:

Ողջունելով զՁեզ. եւն:

1887 Մարտ 28 Գլխոսեխ.

Սիրելի՛ Պաշտօնեայ Եկեղեցւոյ.


Սրտաշարժ նամակդ կարդացի եւ թէ եւ ժամանակ իսկ չ'ունիմ, բայց դարձեալ քանի մի սող գրել արժան կր համարիմ:

Ես կը զարհուրիմ թէ անկրօններն եւ անհաւատներն ի՞նչ դիրք կը բռնեն անիրաւութեանց հանդիպած ժամանակ. Հաւատացեալներն գոնէ միսիմարութեան միջոց ունին որ կ'աղօթեն եւ կը ափօփին, իսկ անհաւատք ի՞նչպէս կ'ապրին. երեւի թէ նորա կեանք չ'ունին. երեւի թէ նորա մեռած են. երեւի թէ խիղճ, զգացմունք վերցուած են. երեւի թէ անզգայացած են. երեւի թէ ցնորուած են եւ այսպիսեաց վրայ Աստուած իսկ զարհուրելով նայած է. «Աստուած *հայեցաւ* յերկնից յամենայն որդիս մարդկան տեսանել թէ իցէ՛ որ իմաստուն, որ խնդրիցէ զԱստուած»:

Յայտ է թէ՛ զԱստուած խնդրելն ամենէն մեծ ի մաստուծիւնն է մարդու համար: Ուստի, Սիրե լի Հայա կրօն, ամեն նեղութեանց մէջ, ամեն պատահարաց մէջ, զԱստուած խնդրե՛նք, յԱստուած ապաւինինք, Աստուծով գործենք եւ մնացեալն իւր անհուն կամաց թողունք:

Ողջունելով զՁեզ եւ շնորհաւորելով Քրիստոսի Սուրբ յարութիւնն եւ մաղթելով յարութիւն մեր Ազգի բարի զգացմանց, Ազգային զգացմանց, Եկեղեցասէր ըզգացմանց եւն. եւն.

Մնամ եւն:



1887 Ապրիլ 18 Չմբռնիս.

### Զգայուն Պաշտօնեայ Եկեղեցւոյ.

Թղթակցութիւնս ընդհատեցաւ Չատ կական տօնից առ թիւ, բայց սէրն առ Ձեզ ընդհատեցաւ ո՛չ երբէք: Գիտէի անշուշտ, որ Դուք եւս Ձեր բոմբիւնաւոր եւ մեղամաղձոտ ձայնիւ կընուագէք Աւագ Շաբաթու հոգեպարար նուագներն, անշուշտ արտասուելով, որ նախնի պաշտօնէից ոգւով միայն կենդանի է մեր ամենասուրբ Եկեղեցին, իսկ նոր պաշտօնեայք, մեծ մասամբ խրտուիլակներ են միայն եւ ո՛չ իրականութիւններ:

Պատրաստուած եմ ՚ի Մենէմէն երթալու, տեղոյն Եկեղեցւոյ տօնախմբութեան առ թիւ, Ժամանակ չը կա երկար գրելու: Ապրիլն, մանաւանդ 20—22ն բացակայութեան ամիս է ինձ համար: Գիտես եւ կը յիշե՞ս անշուշտ որ երկու տարի առաջ ՚ի Մանիսա էի, երբ հեռագրեր

Կրտեղային յամենայն կողմանց մեր կամողիկոսական ընտրութիւնն շնորհաւորելու համար: Ինչպէ՞ս փոփոխական է աշխարհս եւ ինչպէս շուտով կ'անցնին եւ կր մոռացուին ամեն անցք, նաեւ շատ նշանաւորք: Երանի թէ մենք եւս անցած լինէինք եւ աչքով չը տեսնէինք Հայոց Եկեղեցւոյ ազատ իրաւանց բռնաբարումն, Հայոց Հայրապետութեան գերութիւնն, Ս. Սահակայ եւ Յովսէփայ Աթոռոյն յօտարամուկաց պղծութիւնն. — ախ, հազար անգամ ախ — եւ մեր սուրբ լեզուի եւ սուրբ կրօնի սպառնապուռ ջնջման համար եղած մեքենայութիւնքն:

Նամակներ կ'ընդունիմ կովկասէն եւ սիրտս անհնարին կերպիւ խոցուած է: Մակարի կոնդակն կամ բողոքն լոկ աչքակապութիւն է: Քանզի Տէրութեան հրամանն կատարուած իրողութիւն է եւ արդէն Հայոց կրօնի եւ լեզուի ուսուցիչներն թողած են իրենց պաշտօններն, զորս ունէին յառաջ քան Մակարի գահակալութիւնն արքունական դպրոցաց մէջ, քանզի կովկասեան արքունի դպրոցաց աշակերտք եւ աշակերտուհիք մեծ, ամենամեծ մասամբ Հայ են:

Թող ցնծան Սեւաշուրթն եւ Սեւափետուրն, որ մասնեցին Հայոց Եկեղեցին, Հայոց Հայրապետութիւնն, քայց թո՛ղ ամօժահար լինի Պօլոյ սպիրատ եւ վատ վարչութիւնն, որ խոնարհեցաւ կրօնի ազատութիւնն վաճառել:

Ժամանակ չ'ունիմ, դարձեալ կը գրեմ:

Աղօծարար վասն ազատութեան Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ. եւն:



1887 Յունիս 19 Հմիտոնիս.

Սիրելի Պաշտօնեայ Եկեղեցւոյ.

Քնաւ չեմ գարմանար որ չար մարդիկ կան, եւ չարիք կը նիւթեն. քանզի աշխարհիս սկիզբէն ՚ի վեր միշտ չարութեան եւ բարութեան պատերազմն անընդհատ շարունակուած է. — Աբելի մօտ՝ Կայէն գրտնուած է, Յիսուսի մօտ՝ Յուդայ. եւն. ինչո՞ւ պիտի զարմանանք ուրեմն՝ երբ ներկայ ժամանակի մէջ եւս կը տեսնենք որ չարութիւնն իւր կայէններն եւ Յուդաներն ունի: Մի բան պէտք է մեզ միայն, այն է՝ աշխատիլ միշտ բարութեան կողմն լինիլ, եւ չարութեան դէմ արթուն եւ անվեհեր պատերազմ մղել, որպէս զի՝ մեր բաղցրախօս Եղիշէի ասածին պէս. « Բարձրացի կողմն հշմարութեան »:

Ես այսօր կ'ուղեւորիմ Մանիսայի վերին գիւղն, համադիսապէս կատարելու Եկեղեցւոյն տօնախմբութիւնն յանուն Սուրբ Լուսաւորչին:

Անշուշտ Եկեղեցւոյ նախնի եւ արդի վիճակն ներկայացնելով հակապատկեր պիտի ունենանք: Պիտի տեսնենք որ ՚ի հնումն Ս. Լուսաւորչի նշխարներն լեռներէն ժողովելով Եկեղեցւոյ մէջ կ'ամբիովուէին, իսկ այսօր Եկեղեցւոյ մէջ մնացած նախնեաց նշխարներն ապիրատ եւ վարձկան պաշտօնէից շտրքիւ յօշս կը ցնդին: Այսօր պիտի երգենք «Լերինք ամենայն, այսօր ցնծացէ՛ք» սրտաբուրդիս նուագն այն քահանայից մօտ, որոց դէմքն չարութեամբ մծագնած՝ Շահպաղեանն կ'ուզեն հալածել իւր Եկեղեցւոյ իրաւունքն սիրելուն եւ պաշտպանելուն

համար: Ի՞նչպէս պիտի ցնծան լեռներն Սեպուհոյ փառաց համար, քանի որ այդ փառքն աղօտացած է օտարընտիր եւ դաւաճան գահակալներու շնորհիւ: Հաւատացէ՛ք որ սքանչելի Շարականին ցնծութեան եւ բերկրութեան երգիչն ե՞մէ գերեզմանէն ելնէր, բոլորովին հակառակն պիտի նուագէր: Բայց երանի՛ նոցա, որոնք Եկեղեցւոյ փառքն տեսնելով՝ մեռան խայտալով ու ցնծալով. իսկ մենք բաց աչքով կր տեսնենք ա՛յն անագին խորխորատն՝ որ բացուած է մեր Եկեղեցւոյն, մեր ամենասիրելի Մօր առջեւ: Մարդիկներէն յոյս չ'կայ, բայց Աստուած զօրաւոր է, աղաչենք եւ պաղատի՛նք ուրեմն, որ այդ ամենագօր Աստուածն յօգնութիւն հասնի մեր խեղճ Ազգին եւ Եկեղեցւոյն:

Շատ լաւ է որ Ձեր լածներն իբրեւ տեղեկութիւն հաղորդէք. քանզի մենք հետամուտ ենք իմանալ թէ՛ մարդիկ ի՞նչպէս կը դատեն զմեզ եւ ի՞նչ յանցանքներ կը դնեն արդեօք մեր վրայ. ե՞մէ չ'ունինք այդ յանցանքներն, ուրախ կը լինինք. իսկ ե՞մէ ունինք կարող ենք ուղղել:

Ողջունելով զՁեզ. եւն:





1887 Յոռիս 11 Զմեռնիս.

## Սիրելի՛ Հայակրօն.

Ամսոյս 7 թուով գրած նամակաւդ կարելոր տեղեկութիւններ կը հաղորդես, շատ շնորհակալ եմ որ միշտ նոյն զգայուն սիրտն ու հոգին կը կրես Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւանց նկատմամբ: Կ'աղօթեմ որ միշտ այդպէս մնաս եւ բազմանայ քեզ պէս պաշտօնէից թիւն:

Այսօր քնաւ ժամանակ չ'ունիմ երկար գրելու թէ՛ սաստիկ ջերմութեան պատճառաւ, եւ թէ՛ մի ննջեցեալի, զոր ծովափէն պիտի փոխադրենք յԵկեղեցին. մտածէ՛՛ ճանապարհին երկայնութիւնն եւ գթա մեր վրայ: Աւելի լաւ էր Մուրատեանցի համար հազար կենդանի մարդկանց ազգօգուտ գործոց մասին հոգալ, քան թէ՛ մի ննջեցեալ թաղել:

Ղաղն կամեցողութեամբ Տեառն պիտի Պատարագ մատուցանեմ 'ի Գարամաշ Եկեղեցւոյն Տօնախմբութեան առթիւ, եւ անշուշտ զօրութիւն խնդրելով 'ի Հագոյն Արբոյ պիտի բարոզ եւս խօսիմ:

Ողբունելով զՁեզ. եւն:



1887 թգոստոս 15 Զմիռնիս.

## Սիրելի Հայակրօն.

Երեւի թէ առանց պատասխան ընդունելու չ'էք ուզեր գրել. մասամբ իրաւունք ունիք, քանի որ անտեղեակ էք մեր առողջական եւ ծանր գրադմանց վիճակին:

1<sup>0</sup> Ծանաղդեան խնդիրն տակաւին անորոշ է եւ չք կարծուիք, որ եթէ Թագրիբն իսկ գործադրուի, այս տեղէն կուսակաւն առանց բնութեան հաճի դրկել:

2<sup>0</sup> Ես արդէն պատրաստուած էի հրածարիլ, բայց այժմ խնդիրն պատույ խնդիր դարձաւ, քանզի Եսայեանք իրենց ննջեցեալին ՚ի ծովափն չ'երթալու համար (Թէեւ իրենց խնդրանօք Եկեղեցի իջայ, Գամբանուկ իսկ խօսեցայ եւ կարքով Գերեզմանատուն գնացի Թուրան կատարելու համար) ստորագրութիւն կը մուրհրթր թէ զմեզ տապալելու համար: Գիտէք անշուշտ Պապօն է իրենց Մենտորն եւ Մենտորն Ռուսական գործիք է: Ռուսի պատիւս կը պահանջէ հաստատուն մասն եւ խայտառակել այդ տմբարիշտներն, քանի որ իզմիշտ հասարակութեան ողջանոութիւնն մեր կողմն է եւ սատարիկ կը խայտառակեն: ստորագրութիւն մուրացողներն ծաղր ու ծանակ ընելով ամեն կերպիւ:

3<sup>0</sup> Եսայեանը այնպէս կը հրատարակեն, որ հրատարակուած են Պօլսէն եւ վտանագած են, որ անպատճառ պիտի կարենան իրենց ն պատակին համար թո՛ղ փորձեն, որ խայտառակուին:

4<sup>0</sup> Մինչեւ ցարգ ստորագրողք իրենց գործակր

տարներն են եւ խնամիներն եւ գիտէ՞ք արդեօք թէ ո՞րքան խնամի ունին, քանի որ Մեծատուն են անբարոյաւ կանուծեամբ հանդերձ:

50 Հոգ չ'է որ Շահպաղեանի յողուածն վերատրպուած չ'է, դեռ ժամանակ կայ այդ մասին խորհելու:

60 Իզմիրի քանի մի սինյորաց գրգռուելու գլխաւոր պատճառն եղած է մանաւանդ Երեսփոխանաց շնորհաւորականն ուղղեալ առ իս: Կայծակի պէս հարուածուած են նենգաւորներն: Ապրի'ն հարուածողք:

70 Մենք այժմ զբաղուած ենք Երեսփոխանական Ժողովոյ նիստերով ու Վարչական Ժողովոյ եւ խորհրդոց ընտրութեամբ, քանզի երկամեայ համարատուութեան շրջանն է: Պատուական Երեսփոխանութիւն ունինք, եւ երէկ շատ ուրախացայ պատկառելի նիստէն:

80 Այսքանով գոհ եղիր, Շահպաղեան ուրախ է եւ շարունակ կը գրէ ինձ թէ փառք է իրեն հալածանքն Էկեղեցոյ իրաւանց համար:

Ողջունիւ եւն:



1887 Մպոտոս 22 / իմ - Չեշմ.

Սիրելի Պաշտօնեայ Աստուծոյ.

Օգոստախառ Սուլեանի գահակալութեան օրն աւաւտեան շնորհաւորական հեռագիր քաշեցի եւ երեկոյն պատասխանն ընդունեցի, որով կ'աւետուէր ինձ Սիւրիյա փաշայի ստորագրութեամբ թէ մեր շնորհաւորականն մեծ գոհութիւն պատճառած է նորին: Կայսերական վեհա-

փառութեանն: Ուրախալի էր ո՛չ միայն հեռագրի պատասխանն, այլ մանաւանդ միեւնոյն օրն ուշադրութեան առնուիլն:

Կարո՞ղ էք արդեօք իմացնել թէ ուրիշ առաջնորդներ եւս շնորհաւորական հեռագիր կը քաշե՞ն եւ պատասխան կ'ընդունի՞ն:

Անտարակոյս մեր քրիստոնէական թղթակցութիւններն պիտի շարունակենք, երբ տաքերէն ազատուած լինինք, եւ կարենանք գրել մեր մենաւորական ճգնարանին մէջ:

Առ այժմ գոհ եղէք այսքանով.

Մնամ ողջունիւ եւն:



1887 Միպտեմբեր 5, Չմիտնիա.

### Արժանապատիւ Սիրելի.

Զգայուն սրտով գրած գիրդ ընկալայ, ամեն գրած կէտերդ ուշադրութեամբ կարդացի. բայց ցաւեցայ որ այնչափ խոր տպաւորութիւն ստացած էք զրպարտիչ հիմնագրէն:

Մենք Քրիստոսի ընտանիքէն ենք, սիրելի, եւ Աւետարանն գուշակած է արդէն «Եթէ զՏանուտէրն թէէղգէբուղ անուանեցին, ո՞րչափ եւս զընտանիսնորա»: Ուրեմն ինչու պիտի ցաւինք, քանի որ ամեն բան առաջուց գուշակուած է Յիսուսի հետեւողներու համար: Մենք աշխատինք միայն միշտ ընծանալ եւ երբէք չ'ընծանալ ճանապարհի վրայ. եւ մարդիկ թող խօսին. ինչ որ կուզեն: Այսպէս է մեզ եղած պատուէրն:

Խնդրեմ յատկապէս երթալ եւ մատուցանել մեր Սիրելի Պէրպէրեանին եւ իւր ազնուասիրտ տիկնոջ սրտագին շնորհակալութիւնս իրենց վշտակցութեան համար, յայտնելով միանգամայն որ հաւածանքէն մենք չ'ենք

վախնար, քանզի մանկութենէ 'ի վեր հալածանք կրած ենք մեր ազգի եւ Եկեղեցւոյ հաւար թէ՛ յայտնի թշուառ միէն եւ թէ՛ հայ սուրբ անունն իրենց վրայ կրող վատերէն: Աստուած միշտ զօրացուցած է զմեզ, եւ ապահով ենք որ դարձեալ կը զօրացնէ: Ո՛րչափ շատնան ապերախսներն թէ՛ Եկեղեցականաց եւ թէ՛ աշխարհականաց մէջ, մենք դարձեալ պիտի սիրենք մեր ազգն ու Եկեղեցին: Ո՛չ մի չարութիւն, ո՛չ մի բռնաշունչ հողմն կարող է շիջուցանել սիրոյ հուրն մեր մէջ: Եւ ի՛նչու պիտի շիջանի, քանի որ հայ հասարակութիւնն միայն չարերէ կազմուած չ'է, այլ կան խիստ շատ ազնիւներ, խիստ շատ զգայուններ, ինչպէս են Պէրպէրեան ընտիր տնօրէն, որոց զգացումներն այնչափ սուրբ են եւ սիրելի:

Այս շարժու իրաւասօսէն եւս գիր ընդունեցի, որ կը խոստանայ աւելի շատ տեղեկութիւններ հաղորդել: — Նա եւս շատ կը ցաւի հանրագրին համար, բայց արիասիրտ է, կ'ուզէ այդ զրպարտութիւններէ կազմուած սատանայական տիրոցն կործանել ճշմարտութեան եւ անմեղութեան ռումբներով: Իրաւունք ունի, մենք կ'ըստպասենք:

Օտմանեան Արդարասէր կառավարութեան շնորհիւ Շահպաղեան խնդիրն ուրիշ կերպարանք առած է: Մանիսացիք Մըթէսարըֆին դիմած են եւ աղերսագրով ամեն բան բացատրած: Եւ նա խոստացած է տեղւոյս կուսակապի միջոցաւ նոցա խնդրուածքն հասուցանել 'ի Բ. Գունն:

Տակաւին հեռագիր մի՛ սպասեր մեզմէն Շահպաղեանի գալստեան մասին, թէ՛ եւ Շահպաղեան միշտ կը փափարի գալ եւ պատրաստ է, բայց Մանիսացիք չ'են թողուր:

Ողջ լերուք են:

1887 Մեղակոխեր 12 Զմիռնիս.

## Սիրելի Հայակրծն

Քառական հետաքրքրական էր ամսոյս 9 թիւ գրութիւնդ, որ ստորագրութիւն չ'ունէր: Ամենէն լաւն այն է, որ առանց ստորագրութեան իսկ մարդու հոգին ճանաչուի: Շատ շնորհակալ եմ, որ ազնիւ Պէրպէրեանին յայտնած էք ողջոյս, եւ աւելի շնորհակալ կը լինիմ եթէ մեր վաղեմի եւ ամենայարգելի ծերունի բարեկամ Քրիստոստուր էֆէնաիին եւս յայտնէք ան կեղծ յարգանացս հաւաստին: Ա.դ. յարգելի անձնաւորութիւնն կարող է համարձակ ասել թէ՛ Ա.դ. գոյ եւ ազգ երթայ, բայց եւ հաստատուի համ իմ Հայրեմեանս մէջ: Կարող է համարձակ ասել թէ՛ ինքն իր բոլոր կենաց մէջ ծառայած է իր Ազգի եւ Եկեղեցւոյ օգտին եւ երբէք շեղած չ'է ուղիղ ճանապարհէն, թէ՛ եւ այս մասին անձնական վնասներ եւ զոհողութիւններ իսկ ունեցած է: Թող ամենան իրմէն՝ այժմեան երիտասարդներէն շատերն, որոնք Ազգային խնդրոյ նկատմամբ, Եկեղեցական հաստատուն օրինաց նմատմամբ իրենց համազուժներն կը փոփոխեն տարագու հազուստներէն աւելի:

Վահան վարդապետ տաան օրէն աւելի է որ սյս տեղ է. կը շրջի եւ կ'ունում նասիրէ Իզմիրն, Մանիսա չ'գնաց, բայց շուտով ՚ի Պոլիս գալ եւս չ'ուզեր. քանզի կը մտածէ թէ՛ աղուխուց որջք գոն եւ թռչնոց երկնից բոյնք. իսկ Վահան վարդապետի ո՛չ գոյ տեղի ուր դիցէ զգլուխ իւր: Շատ ուրախ է, սիրով կ'ողջունէ զՁեզ

Ողջունելով զՁեզ. եւն:

1887 Մեյսուեմբեր 19 Զմիռնիա.


### Սիրելի Հայակրօն.

Համառօտագիծդ ընդունեցի շնորհակա-  
ծեալսր: Այս տեղ քնսւել չեն ուզեր կարեւորութիւն տալ  
հայնոյազրիկ կամ ըստ գեղեցիկ յորջորջման Շարգիյէին  
Ռէզուլիթնամիին:

Իզմիլ այժմ օյին սուր էրեսփոխանութիւն եւ նոր  
կարեւորած օրին սուր Գ. սեւաւ սկան վարչութիւն եւ վար-  
չական խորհուրդներ ունի խիստ ձեւնհաս անձերէ կազ-  
մուած: Հրաժարեալ վարչութեան եւ խորհրդոյ երկամ,  
եայ շքանի տեղեկագիրն արդէն մամայ տակ է եւ շու-  
տով 'ի լոյ: գառով կը խայտաւակէ խաւարի զաւակնե-  
րը իրենց խաւար խոշորդներով: Հայնոյազրին թէ որ  
ուզուի լուրջ պատասխան, կարող է արել:

Ողջունելով զՁեզ, եմ:

— Տիրոջ յայտուածնամբ նպատակ ունիմ առա-  
ջիկայ հինգշաբթի Գըրգ—Աղաս երթալ Եկեղեցին օծե-  
լու համար:



1887 Հոկտեմբեր 1 Գըրգ - Աղաս.

### Սիրելի Հայակրօն.

Ընկալայ գիրդ շնորհակալութեամբ: Մենք  
այժմ 'ի Գըրգ—Աղաս ենք եւ վազն պիտի ուղեորինք  
'ի Գըրգիս եւ անտի 'ի Պէրկամս:

Վարագայ Ս. Խաչի տօնին կատարեցաւ տեղոյս Ս. Աստուածածինն Եկեղեցւոյ Օժման հանդէսն : Խուռն բազմութիւն արանց եւ կանանց գրաւած էր Եկեղեցւոյ ներսն եւ գաւիթներն : Քաղաքի երեւելի Յոյս ընտանիքներն գրեթէ բոլորն ներկայ էին . իսկ Հայք ոչ միայն տեղականքն էին, այլ եւ բազմամիւ ընտանիքներ եկած էին Մաղնիսացէն, Ագսարէն, Սօմայէն, Գրնրխէն, Պերգամայէն եւ Պայրքեաբէն : Եկաւորաց մէջ Յոյս ընտանիքներ եւս կային, մանուսնդ Սօմայէն : Ժամերգութեան, Ս Օժման եւ Ս. Պատարագի արարողութիւնն գրեթէ տեւեց եօթն ժամ եւ բովանդակ իբազմութիւնն խորին ուշադրութեամբ եւ ջերմեանդութեամբ ներկայ էր սոյն վայելուչ եւ սրտազբաւ հանդիսին : Կարգաւորութիւնն կատարեալ էր եւ հոգեւոր ցնծութիւնն հանրական : Օրուան պատշաճի քարոզն եւս որ խօսուեցաւ Օժման հանդէսէն զկնի եւ Ս. Պատարագէն առաջ, կը հաւատամ թէ՛ խոր եւ անջնջելի տպաւորութիւն ունեցաւ ունկնդրաց սրտերուն վրայ :

Սոյն օրն ամեն բերան Օժման հանդիսի շքեղութեան վրայ կը խօսէր քաղաքին մէջ եւ այսպէս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ արարողութեան վստմութիւնն կը հռչակուէր առաջի ազգայնոյ եւ օտարաց :

Չանազան քաղաքներէ եկած ուխտաւորներն հետըզհետէ կը վերադառնան, տանելով իրենց հետ հանդիսին գեղեցիկ յիշատակներն :


Իսկ մենք որ հանդիսադիրն էինք, ջերմ գոհութիւն կը մատուցանենք մեր Երկնաւոր Հօրն, որ զօրացոյց զմեզ հոգեով եւ մարմնով կատարել այս շքեղ հանդէսն եւ իւր սուրբ Անունն եւ մեծութիւնն հնչեցընել ՚ի իրելիս բազմամիւ ունկնդրաց :



Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ եւ մեծութեան նորա ոչ գոյ բաւ : Մննչ կ'արօժենչ, կ'օրհնենչ եւ կ'օծենչ, թող մեր հակառակորդներն դաւադրեն , գրաբանեն եւ հալածեն :

Աղքայութիւնն մերն է, քսնլի վկայ է մեր խիղճն որ արդարութեան համար կը'հալածուինչ եւ արդէն կանխաւ վճռուած է. «Երանի՛, որք հալածեալ իցեն վասն արդարութեան , զի նոցա է արքայութիւն երկնից » :

Ընդունեցէ՛ք ողջոյնս . եւն :



1887 Հոկտեմբեր 17 Զմիտնիս .

### Սիրելի Հայակրօն .

Ստացայ ամսոյս 15էն գրածդ 'ի Զմիւռին, ուր վերադարձած էի 14 ին : Թեմական այցելութենէս շատ եւ շատ գոն եմ եւ մտադիր եմ յաջողութեամբ Տրանս տաան օրէն զկնի ուրիշ քանի մի թեմեր եւս այցելել :

Զարմանալի է, որ Շահապողեան խնդիրն այդքան ցաւ պատճառած է Սրբազան Պատրիարքին : Ի՞նչ հարկ 'ի Բ . Գուռն դիմել այն խնդրոյ համար , որ լոկ յողուածի խնդիր էր : Խեղճ Մաղնիսացիք այնչափ համրազրեր եւ աղերսագրեր ուղղած են 'ի Պատրիարքարան Յակոբոս Վարդապետի դէմ եղած անտեղի զրպարտութեանց կարեւորութիւն չ'տարու համար : Ի՞նչու կարեւորութիւն տուաւ եւ ի՞նչու պատճառ եղաւ, որ ապա

Հնորն եւ անխիղճ մարդիկ իզմիրի Առաջնորդին դէմ իսկ անլուր հայհոյութեանց պարսաւագիր ուղղեն ՚ի Պատրիարքարան: Ես այնպէս կարծեմ, որ խնդիրն ծանրացնողն նոյն ինքն Պատրիարքարանն է: Թո՛ղ ձեռնմալի լինի ինքն, կարեւորութիւն տայ պաշտօնական գրութեանց եւ անա՛ պիտի տեսնէք, որ ամեն տեղ խաղաղութիւնն տիրած է: Ի՞նչ է այս ատելութիւնն, զոր Պատրիարքարանն ունի իզմիրի Առաջնորդին եւ իւր Առաջնորդութեան դէմ: Ի՞նչ արած է իզմիրի Առաջնորդն. ի՞նչ արած է նոյն իսկ Շահպաղեանն: Անօ՛թ, որ Պատրիարքարանի ատելութիւնն ասկաւին չ՛յազեւար իւր արածներով:

Մենք կր հաւատանք, Սիրելի՛ Հայակրօն, որ արդարութեան եւ անմեղութեան Աստուածն երբէ՛ք չ՛ծոզուր իւր խոնարհ ծառաներն, որոնք իրենց կարողութեան չափովն կ՛աշխատին եւ իրենց անձն նուիրած են արդարութեան եւ ճշմարտութեան դատին, եւ ուրախ են որ քնաւ խղճի տալնսպ չ՛ունին:

Ողջունելով զՁեզ. եւն:



1887 Հոկտեմբեր 24 Զմիռնիա.

## Սիրելի Պաշտօնեայ Եկեղեցւոյ.

Ձեր 21 Հոկտմ. թուակիր նամակաւ ցաւ կը յայտնէք այն թշնամանաց համար, որ կը շարունակուի մեր դէմ թէ՛ ՚ի Զմիռնիս եւ թէ՛ ՚ի Պօլիս: Արդարեւ ցաւալի է, երբ անիրաւութիւնն արծակ համարծակ կը գործէ եւ արդարութեան պաշտպան կոչուած պաշտօնէութիւնն խուլ եւ համր կը ձեւանայ: Բայց մենք դարձեալ չ'ենք յուսահատիր. Սիրելի Հայակրօն: Յուսահատութիւնն՝ թերահաւատութիւն է եւ մենք չ'ենք ուզեր ըսել մեր Փրկչին բերանէն այն յանդիմանութիւնն, զոր տուաւ իւր աշակերտներուն, երբ նաւակն կ'անկոծուէր. « Ինչո՞ւ կը խռովիք թերահաւատներ »: Մեկոծութիւնն կարող չ'է զմեզ զարհուրեցնել, երբ հաւատանք որ Յիսուս մեր նաւակին մէջն է: Մեր նաւակն փոթորիկներէն չ'ընկղմիր եւ ո՛չ խռովայոյզ ալիքներէն, երբ հաւատանք որ հողմոց եւ ալեաց սաստող Տէրն մեզ հեռւ է: Մենք մեր շուրջ յիսնամեայ կեանքին մէջ շատ փոթորիկներ տեսած ենք. բայց Ամենաբարի Աստուածն միշտ միփմարած է զմեզ եւ երբէք թողած լքած չ'է: Փոթորիկներն աւելի հաստատած են զմեզ այն հաւատքին մէջ, զոր ունինք Աստուծոյ սիրոյն, գթութեան, ամենատեսութեան եւ ամենագորութեան վրայ:

Միթէ Աստուած չ'տեսնե՞ր որ մենք իւր արեամբ գնուած Եկեղեցւոյ սիրոյն համար կը հաւածուինք: Միթէ Աստուած չ'տեսնե՞ր, որ մենք ամեն օր պատրաստ ենք

այդ Եկեղեցւոյ ազատութեան համար զոհուիլ: Կր տեսնէ, կր տեսնէ, Սիրելի Հայակրօն, եւ այդ տեսութիւնն է որ կը մխիթարէ զմեզ եւ կը քաջալերէ: Աստուած կր տեսնէ, նոյնպէս թէ ի՛նչ նենգութիւններ, ի՛նչ որոգայթներ կը լարուին մեր դէմ: Քայց քանի որ Աստուած կր տեսնէ, կը լի է եւ կը համբերէ, մենք եւս պարտաւոր ենք համբերել, խպա՛ն համբերել: Աստուած մարդկանց չարութիւններէն անգամ՝ բարիքներ կը հանէ իւր սիրողներուն համար եւ ինչո՞ւ մենք եւս չ'պիտի հաւատանք որ Աստուած անշուշտ վաղ թէ անագան մեզ համար եւս բարիք պիտի հանէ հակառակորդաց եւ անխիղճ զրպարտողաց չարութիւններէն: Յանձնենք զմեզ Աստուծոյ եւ պատրաստ լինինք միշտ օրհնել նորա կամքն թէ՛ նեղութեան եւ հալածանաց մէջ եւ թէ՛ ուրախութեան եւ ցնծութեան մէջ:

*Արևուկի մէջ Օրծագիւղի թաղեցի ոմն* սկսած է թշնամանել զԱշոտ Վարդապետն: Ո՛հ, ո՞ւր հասած է խեղճ Հայութիւնն, որ ամեն խօսող ընդդէմ սպօրինի Կաթողիկոսութեան Մակարի, իսկոյն կը թշնամանուի եւ կը հալածուի: Մեր կողմէն մխիթարեցէք Սիրելի Յակոբ Աշոտ Վարդապետն եւ ներողութիւն խնդրեցէ՛ք որ մոռցած եմ իւր նամակին պատասխանելու:

Ողջունելով զՁեզ

Մնամ աղօթարար վասն լրութեան Ազգիս եւս:



1887 Նոյեմբեր 8 Տեղագիր.

## Սիրելի Հայակրօն.

Նոյեմբեր 2 թուակիրդ այսօր ընդունեցի 'ի Տէնիզի, զկնի Ս. Պատարագի. քանզի այսօր պատարագելով եւ քարոզելով մխիթարեցինք զժողովուրդն:

Տէնիզի Զմիւռնիոյ թեմերէն ամենէն հեռաւորն է: Այսօր որ Նոյեմբերի 8ն է, մատակայ լեռներն ծիւնով ծածկուած են, Հայ ժողովուրդն պահպանած է տակաւին շատ Հայկական սովորութիւններ, մանաւանդ եկեղեցական արարողութեանց նկատմամբ:

Թէ՛ մկրտութեան, թէ՛ հարսանեաց եւ թէ՛ թաղման ժամանակ ամեն ժողովրդականք՝ շատ թէ սակաւ դրամ կ'ուտան Քահանային, որով նոյն իսկ աղքատի համար կատարուած հոգեւոր պաշտօնն կը վարձատրուի:

Մի աղքատ մանուկ մկրտուեցաւ այսօր, բայց շատերն Քահանային եւ երգեցիկ մանուկներուն ուղեկցելով եւ վառած մոմեր իրենց ձեռքն բռնած՝ դիմեցին նորակրօնելոյն ծնողաց աղքատիկ յարկն: Ո՛րչափ սրտաշարժ են Հայկական հին սովորութիւններն եւ ո՛րչափ մարդասիրութեան սքանչելի դասեր կը պարունակին իրենց պարզութեան մէջ: Յաւայի է, որ լուսաւոր կարծուած մեծամեծ քաղաքներու մէջ աղքատ մանուկներուն համար կնքահայր անգամ դժուարաւ կը գտնուի, մինչդեռ Հայկական նախկին սովորութիւններն աղքատիկն անմխիթար չ'են թողուր, եւ չքաւոր ծնողք՝ իրենց մանկան համար ունեցած ուրախութիւնն 'ի դատութիւն չ'են փոխեր *Հոստառոյտիոց* անտարբերութեամբ:

Նամակդ բաւական հետաքրքրական էր, մանաւանդ

Յիշատակութեան խնդրոյն նկատմամբ. Չորս օր է, որ իզմիրէն ելած էնք եւ կարծեմ թէ՛ պիտի երկարի մեր բացակայութիւնն, քանզի տակաւին պիտի այցելէնք նա եւ ՚ի Նագեղի եւ յԱյտրն:

Կեղբոնի գործոց նկատմամբ վերջնական լուրեր չ'ունինք բաց ՚ի Աշոտ վարդապետի յայտարարութենէն առաջի կրօն. Ժողովոյ. եթէ ստոյգ է, որ բացէ ՚ի բաց մերժած է նա իբրեւ Շահապղեան ճանաչուիլ: Խեղ՞ Յակոբոս վարդապետ. կարծեմ թէ ամենքն պիտի խորշին իրմէ իբրեւ հերետիկոսէ՛. Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ իրաւունքն պաշտպանելուն համար: Արդէն խեղ՞ խորենացոյն ոսկերքն հանելով շուրն չք ձգեցի՞ն, եւ քանի՛ քանի՛ այսպիսի օրինակներ: Երեւի թէ մեր Եկեղեցականութիւնն թելադրուած է մի անջնջելի արատ թողուլ Պատմութեան մէջ Կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ:

Աղօթե՛նք, որ Եկեղեցականութիւնն փոխամակ յառաջելու իւր սխալման մէջ, յետս ընդ կրունկն դառնալ եւ ջանայ ուղղել գործուած սոսկալի սխալն:

Ողջունեցէ՛ք զՍիրելիս՝ որք տակաւին ծունր կրկնած չ'են Բահաղու:

Մնամ միշտ աղօթարար վասն լրութեան Ագգիս. եւն:



1887 Նոյեմբեր 27 Զմիռնիս:

Սիրելի՛ Հայակրօն.

Ձեր նամակներն ընդունած ենք, բայց չ'գիտենք՝ մերիններն ընդունած էք թէ ոչ: Մենք վերադարձած ենք հովուական այցելութենէ եւ շուտով կարող ենք ընդունել Ձեր նամակներն: Հետեւեալն կ'ուզեմք որ շուտով եւ անձամբ հաղորդէք Գեր. Պատրիարքական փոխանորդին:

Մենք իրեն պատանեկութենէն զինքն կը ճանաչենք եւ կը սիրենք եւ կը փափաքինք որ ինչպէս իւր ներկայ պաշտօնին, նոյնպէս եւ ապագայից մէջ ունենա փառաւոր դիրք, որ իր բարեկամներն ուրախանան, մանաւանդ որ մենք իբրոյր սրտէ փափաքողք ենք մեր բոլոր Եկեղեցականաց բարեւաւ վիճակին: Համաձայն իւր մտերմական գրութեան մենք յանձնարարեցինք ՚ի Մաղնիոս Թէ Տ. Յովնաննէսն յանդորրութեան պիտի մնանն եւ պէտք չ'է որ ո՛ր եւ իցէ հակառակորդ վրդովէ նորա անդորրութիւնն, եւ ՚ի սկզբանէ անտի արդէն վրդովող չ'կար, այլ միայն ինքն էր իւր անծին եւ սցոյց վրդովիչն: Այս դժբաղդ իրողութեան շտո անգամ ապացոյց տուած էք եւ պի՛մ եւս նոյնն արած է: Շահպաղեան Յակոբոս Վարդապետն Տ. Յովնաննէս քահանայի տան փողոցէն, Տ. Արախամ քահանայի հետ, անցնելու ժամանակ, Տ. Յովնաննէսի լիտի տղան, թերեւս հօր դրդմամբ, յանկարծ կ'ելնէ եւ կը զարկէ Շահպաղեանի թիկունքն: Շահպաղեան փոխարէն չը հատուցաներ, այլ միայն կ'ասէ թէ՛ «Քամակէս ինչո՞ւ կը զարկես. եթէ

բան ունիս, կարող ես առջեւ ելնել . . . » . Վտին կը խուսէ, իսկ Յակոբոս Վարդապետ կը դառնայ իւր սենեակն: Ժողովուրդք կ'ստիպեն զՇահապաղեանն որ զլրկտին մատնէ կառավարութեան. բայց նա չ'ընդունիր եւ գործն կը մնայ այս դրութեան մէջ: Արդ՝ Գեր. Փոխանորդին կը մնայ *մասնաւորապէս* ազգարարել այդ ապաշնորհ քահանային, ապա թէ ո՛չ հաւատացէ՛ք որ եթէ շարունակէ, պատճառ պիտի տայ որ ժողովուրդն յուզի եւ վրէժխնդիր լինի նորին անհանդուրժելի արարմանց մասին:

Յայտնեցէ՛ք նմանապէս թէ՛ Գերեզմանաց ոմանց փոխադրութեան խնդիրն ըստ ամենայնի աննշան բան է եւ մենք գիտենք արդէն թէ անօրէն մարդիկ ի՞նչ տալոյ հեռագիրներ եւ տեղեկութիւններ տուած են ՚ի Պատրիարքարան, կրօնական Ժողովն գրգռելու համար: Այն տեղն, ուր՝ որոշուած էր հիւսիսային պատի տեղոյն հետ շահաբեր կալուածներ կառուցանել, հազիւ թէ քանի մի գերեզմաններ կային, որ տեսարց հաճութեամբ եւ էկեղեցական օրհնութեամբ փոխադրուած էին իրենց կալմեցած տեղն, եւ արդէն այս առաջին անգամն չ'է որ այդպիսի փոխադրութիւնք կը լինին, ինչպէս եղան Ս. Մեսրոպեան վարժարանի շինութեան առիւ: Արդէն մեր Առաջնորդութեան շրջանին մէջ, հինգ վեց տարի առաջ քանի որ նոր գերեզմանատուն չ'ունէինք տակաւին, կը տեսնէինք միշտ որ Ս. Ստեփաննոսի գերեզմանատան մէջ, միեւնոյն գերեզմանատեղոյն մէջ հետազննութէ ննջեցեալներ թաղուած են, այսինքն սովորութիւն էր իզմիրի մէջ իր նախահաւին, հաւին, հօրն եւն. գերեզմանն փորելով եւ ոսկերքն հանելով, նոյն տեղն թոռան կամ զաւակին դիակն ամփոփել եւ հանուած ոսկերթ տիքն վրան լցնելով ընդ հողով ծածկել եւ ապա կնքել:



Խիստ շատ գերեզմանք կան, որ այսպէս քանիցս պեղուած եւ քանիցս կնքուած են: Ի՞նչ է ուրեմն չարամտաց վայնասունն եւ վայկըկն, որոց տարապարտ արծազանք կը լինի կրօն. Ժողովն, ունենալով իր մէջ բաւական խոհեմ անդամներ որոնք քաջ գիտեն թէ ՚ի զուր տեղն պիտի գրադի Հայոց Ազգն ոսկերտեաց խրնորով, քանի որ կենդանութեան շատ եւ շատ մեծամեծ խնդիրներ ունի իւր առջեւ:

Եթէ լուռ եւ զգուշաւոր դիրք ունենար կրօն. Պատ. Ժողովն եւ իր հրատարակեալ որոշումներով չը վրդովէր հասարակաց կարծիքն հաւատացէ՛ք որ ո՛չ միայն Զմիւռին շահաբեր կարուածոց նշանաւոր յաւերուած պիտի ունենար, այլ եւ նոյն իսկ Պօլսոյ Բանկալմիական գերեզմանատան նկատմամբ շահաւոր պիտի լինէր, քանզի այն տեղ եւս կարող էին պարսպ տեղերու մէջէն քանի մի գերեզմաններն փոխադրելով շէնքեր կառուցանել, խկապէս տէր լինել գերեզմանատան. մինչդեռ այժմ այնպէս չէ. քանզի կարող է պատահիլ ըստ նախկին ձախող որոշման Պատրիարքարանի, որ տեղն եւս վճռուի հողով ծածկել եւ պարտէզ շինել: Յայնժամ ի՞նչ պիտի շահի Ազգն: Կը յուսամ թէ այս գրածներս մտերմաբար կարդացուելով Սիրելի Գէորգ վարդապետին՝ պիտի համոզուի թէ ստուերներու ետեւէն վազելէն օգուտ չը կայ, պէտք է իրականութիւնն գրկել եւ այնպէս վարուիլ եւ այնպէս գայլս համոզել:

Բաւ է այսչափն, յուսով եմ ընդունիլ շուտով Ձեր գիրն:

Մնամ ողջունիս՝ աղօթաբար վասն լրութեան Ազգիս. եւն:

Յ. Գ. — Սոյն վայրկենին պատմեցին որպէս թէ՛

Պէշիկեաշու գերեզմանատունն կառավարութենէն կ'ուզուի: Արդէն միմէ Պատրիարքարանի յանձնած չ'է՞ր եւ մինչեւ անգամ խոստումն իսկ առած չ'է՞ր, թէ երբ պարտիզի վերածուի, Քահանայք իրաւունք ունենան երբեմն երթալու եւ աղօթելու: Չարերն թերեւս, եթէ ըստոյգ է այդ հրամանն, առիթ պիտի բռնեն դարձեալ իզմիրցւոց վրայ խօսելու: Մինչդեռ իզմիրի քանի մի գերեզմանաց ոսկերչութեաց փոխադրութիւնն գրեթէ ամսով առաջ եղած է եւ այսօր այդ մասին բնաւ ձայն չը կա այս տեղ, քանզի շինութիւնն իսկ գարնան թողուած է, որ 17 մագազաներէ պիտի բաղկանայ եւ յոյժ շահաբեր պիտի լինի. քանզի առ այժմ Հասարակութենէն իւր անունն ծածկող Քարերարն շինուած կալուածոց եկամուտն պիտի չ'ընդունի, ինչպէս որ գրուած է, այլ նոյն իսկ շինուածական բոլոր ծախսն Ազգին պիտի նուիրէ: Քարեպաշտութիւնն չ'է բնաւ, որ ինչպիսի կը յարուցանէ տոյն բարերարութեան դէմ, այլ նախանձն, ոմանց սին լքորներու չարամտութիւնն եւ Կեդրոնական Վարչութեան կրօնական Ժողովոյ անդամոց ոմանց ժողովրդասիրութիւն վատկելու մտտի եւ դատասպարտելի եւրանդն:

Աղբրմերի՛ պարսածներ . . . . .

1887 Նոյեմբեր 27 Չմիտոնիա.

Սիրելի՛ Հայակրօն.

Գերսպատի Գէորգ Յ. Վարդապետին ողջնս մատուցանելով, յայտնեցէ՛ք թէ՛ իւր գիրն ստացայ այսօր ՚ի Գարսեմաշ, ուր կը գտնուիմ Առաջնորդական պաշտօնէս հրատարելու օրէն ՚ի վեր:

Պարտք համարեցի առ Մանիսայի Տ. Յովհաննէսն ուղղեալ նամակն թղթատարին յանձնել : Կր ցաւիմ, շատ կր ցաւիմ, որ Պօլսոյ Կրօն. Ժողովն եւ Եկեղեցականու-  
թիւնն այդչափ նախանձու ատերութեամբ յուզուած են,  
մեր դէմ, քանի մի գերեզմանաց ոսկերոտեաց փոխա-  
դրութեան համար, կարծելով թէ՛ յատուկ դիտումն կայ  
գործոյն մէջ եւ մենք այն նպատակաւ վիճակներն պ-  
ցելութեան ելած ենք :

Այդ խնդիրն այնչափ պարզութեամբ յառաջ եկած է տեղւոյս Երեւոփոխանութեան կողմէն եւ այնչափ պար-  
զութեամբ կարգադրուած է, որ բնաւ մարդոց մտքէ  
անցած չէ թէ՛ Կրօն. Ժողովն այդպիսի մեկնութիւններ  
պիտի տայ եւ հակառակ դիտումներ պիտի հնարէ,  
քանզի բոլոր իզմիրցին ականատես տղաւ թէ՛ ինչպէ՛ս  
երկու տարի առաջ աւելի շատ գերեզմաններ փոխա-  
դրուեցան Մեսրոպեան դպրոցի վերաշինութեան ժամա-  
նակ, եւ բնաւ ձայն չբխուեցաւ :

Եթէ Կրօն, Ժողովն՝ ինքն առանձին տագնապ ու-  
նի իւր որ եւ իցէ խնդրոյն համար, այդ մասին ոչ որ  
է պատասխանատու, եթէ ո՛չ ինքն Կրօն. Ժողովն՝  
իսկ եթէ այժմ հնարներ կր հնարէ զմեզ պատասխա-  
նատու ցոյց տալու՝ հրապարակին վրայ մեր հակառակորդ-  
ներն գրգռելու մեր դէմ, եւ եթէ այսօր մեր հրաժար-  
մամբ կր կարծէ իւր բուն նպատակին հասած լինել. թող  
ճտի հարկանէ, որ իր հնարքներն ունայն անցած չին :

Նոյն



1887 Գեկտեմբեր 5 Զմիռոնիս.

Սերելի՛ Հայակրօն.

Ամենայն ինչ կոտարեալ է:



մայս 2 ին հրաժարականս մա-  
տուցի եւ հեռագրեցի 'ի  
Պօլիս, ամայս 4 ին՝ Երես-  
փոխանական Ժողով գու-  
մարեցաւ եւ հրաժարա-  
կանս չքնդունելու հա-  
մար միահամուռ հաւա-  
նութեամբ որոշում տրուե-  
ցաւ եւ պատգամաւորու-

ծիւն իսկ ղրկուեցաւ յ'ապարանս վսեմաշուք Պալեօզ-  
եանի 'ի Գարամաշ, ուր կր գտնուէի հրաժարմանս նօրէ  
'ի վեր եւ կր գտնուիմ տակաւին. բայց յայտնեցի պատ-  
գամաւորաց թէ՛ վերջնական է հրաժարականս եւ հե-  
տեւապէս մեծ ցաւով վերադարձան յԱռաջնորդարան՝  
յայտնելու Երեսփոխանական Ժողովոյն, որ կր սպասէր  
պատգամաւորութեան արդեանց:

Երեսփոխանութիւնն խորին զգացմամբ եւ ար-  
տասուօք ընդունած է հրաժարականս եւ հեռագրած է

ի Պօլիս ընտրելեաց ցանկ ղրկել: Առաջնորդական նոր ընտրութիւն կատարելու համար:

Թէեւ Մեծաշուք Պալտօզեան իւր մարդասիրական եւ պատուասիրական անպատմելի ընդունելութեամբ կը ստիպէ եւ կը թախանձէ ընդ երկար մնալ իր Գերդաստանին մէջ, բայց ես մտադիր եմ անպատճառ յետ սակաւօց ելանել իզմիրէն եւ քաշուիլ ՚ի տեղի անապատ՝ հոգւով եւ օրտով զօրանալու եւ կազդուրելու համար: Քանզի գիտէք արդէն որ Առաջնորդական զբաղումներն շատ անգամ կը զրկեն զմեզ այն հոգեզմայլ ժամերէն եւ ամենաբարձր մտախոհութիւններէն, որուն մէջ միայն ցնծութիւն գտած ենք մեր մանկութենէն ՚ի վեր եւ կը յուսանք գտնել այսուհետեւ:

Թէեւ տեղւոյդ մեր բարեկամներն կը փափաքին անշուշտ ՚ի Պօլիս տեսնել զիս, բայց պիտի չը կարենամ այդ նանապարհն ընտրել: Արդէն մինչեւ ց'արդ եղած Կեդրոնի վարչական հարձանքէն զատ, որ գլխաւոր պատճառն է իմ հրաժարմանս, նոյն իսկ սցսօր կը կարդանք ՚ի Լրագիրս, որ Պօլսոյ ոմանք *Երկրորդական Հարք հանրագիր կ'ստորագրեն իբր թէ՛ մեր հակազգային ընթացքին դէմ եւ այս մասին պարագրուին են՝ Նարպէյ եւ Եղիշէ Այվազեան:*

Ո՛վ ժամանակներ, ո՛վ բարքեր, ի՞նչ փոփոխութիւններ ունիք ձեր մէջ: Մի մեծագոր հիւսիսային տէրութիւն մեր ազգային հոգւով ընթացքին համար՝ *ուկ -- Տոհասիան* նանաչելով զմեզ՝ կը ստապալէ Հայ Ազգին կամքն. իսկ այժմ՝ Հայ *Երկրորդական Հարք* *ուկազգային ընթացք* նշմարել կը կարծեն մեր մէջ: Ի՞նչ խեղճ վիճակի մատնուած է ուղիղ դատողութիւնն. ի՞նչքան զօրացած է տգիտութիւնն. ի՞նչքան յարգի է կրօնածախ եւ Աստուածածախ փարիսեցիութիւնն. ուր հասած է

մեր ամենասուրբ եւ Յշմարիտ քրիստոնէութեան դարեւ  
րով ակոյեանն կանգնող Եկեղեցւոյ եկեղեցական պաշ-  
տօնէութիւնն: Ո՛վ, դարեր, ո՛վ բարքեր:

Այսպէս անա՛, սիրելի Հայակրօն, ամեն կողմէն  
մեր սուջեն կ'ելնեն հալածանքն, հալածանք օտարէն,  
հալածանք Հայ եկեղեցականութենէն: Ի՞նչպէս չ'էր մեզ  
համար, օտարին հալածանքն, քանզի Նախնեաց սուրբ  
հոգին, նախնեաց սուրբ շունչն կ'ոգեւորէր զմեզ ան-  
նկուն կերպիւ դիմադրելու. բայց Հայ եկեղեցականաց  
հալածանքն կը խորտակէ մեր գորութիւնն, կը ջլատէ  
մեր յոյժն եւ կ'առիպէ խոյս տալ յ'անսպառ, քանզի  
ծանր է մեզ նստել Հայ եկեղեցականաց հալածանքին  
դէմ մայրախ: Եթէ հակառակորդս Հայ անուն չը կրէր,  
եթէ ընդդիմադիրս Հայ եկեղեցւոյ տիտղոս չ'ունենար,  
հաւատացէ՛ք որ միշտ աննկուն կը կարծէի զիս, բայց  
այժմ խոր թախծութիւն կը տիրէ սրտիս եւ կը զգամ,  
ա՛խ, կը զգամ թէ ի՞նչ էր որ կը ճակէր Սուրբ Խորե-  
նացոյն սիրան, երբ իւր արտասուախառն ողբով կ'ա-  
ղաղակէր. « Ողբամ զքեզ Եկեղեցի Հայաստանեայց » եւն:


Այսպէս ուրեմն, Սիրելի Հայակրօն, որոշումս հաս-  
տատուն է, որ մի անմարդարնակ վանք պիտի քաշուիմ,  
ուր ես ինքս ինձ համար պիտի անսպառտական կեանք  
եւ կենցաղավարութիւն ստեղծեմ, պիտի ձեռքս առնում  
Ս. Գիրքն եւ որոճամ, այս պիտի լինի միակ միսիմարու-  
թիւնս եւ կենսական հացս անսպառտին մէջ: Պիտի նը-  
ուագեմ Նախնեացս գեղեցիկ նուագներն, սքանչելի  
շարականներն, եւ կը հաւատամ թէ՛ Աստուած պիտի  
լսէ ձայնս, պիտի այցելէ մենաւոր բնակարանս, պիտի  
անուցանէ զիս հոգեւոր եւ մարմնաւոր աննդով, պիտի  
օգնական լինի ինձ խորհիլ եւ գրել իւր ամենամեծ փա-  
ռաց եւ Եկեղեցւոյս իրաւանց համար. պիտի գորացնէ

զիս , պիտի քաջալերէ զիս , եւ ես պիտի կարենամ ասել . « Մինակ չ'եմ , Աստուած ինձ հետ է » :

Այս հոգւով վառուած եմ անա՛ ես այսօր եւ կ'աղօթեմ , որ Աստուած առաջնորդէ ինձ իւր հզօր հովանւոյն ներքեւ իւր կամաց համաձայն . որ ամեն վիճակիս մէջ իսկ կարողանամ հանապազ կրկնել « Եղիցին կամքքո , ո՛վ Տէ՛ր իմ եւ Աստուած իմ » :

Ողջ լն՛ք , փափկասիրտ Պաշտօնեայ Եկեղեցւոյ եւն .

Յ. Գ. — Ընդ ամին կը դրկեմ Հրաժարագրիս օրինակն թէ եւ կը յուսամ թէ *Արեւիշիան Մամոռ* պիտի հրատարակէ Երեսփոխանական Ժողովոյ Ատենագրութեան հետ :



Առ

*Պատկառելի Երեսփոխանական Ժողով Գաւառին  
Զմիւռնիոյ*

### Պիրեյի՛ Երեսփոխանք

Իմ մտաասանամեայ Առաջնորդական պաշտօնավարութենէս հրաժարելու պահուն՛ նուիրական պարտք կը համարիմ խիստ համառօտիւ արտայայտել այն զգացումներն , զորս կ'զգամ սրտիս մէջ եւ զորս կը փափաքիմ որ արձանագրէք Ձեր ատենագրութեան մէջ :

Երբ Զմիւռնիոյ Երեսփոխանութիւնն , տասն եւ մի տարի առաջ , իւր միաձայն ընտրութեամբ կը կոչէր զիս ՚ի հովուութիւն Զմիւռնիոյ վիճակին , մի խորին մտածմունք

'ի սկզբան կը պաշարէր զիս այդ պաշտօնն ընդունելու մասին, բայց իմ եկեղեցական կոչումն եւ Աստուածային պատուէրն եւ մանաւանդ նոյն ժամանակի Սրբազան Պատրիարքի ստիպումն կը պարտաւորէին զիս լսել ժողովրդեան ձայնին, ապախնելով Աստուծոյ զօրութեանն, որ միշտ պատրաստ է զօրավիգն վնիլ տկարներուն, որք 'ի բոլոր սրտէ իրեն կը յանձնուին:

Այս յուսով եւ այս քաջալերութեամբ եկայ 'ի Զմիւռին ստանձնել Առաջնորդական պաշտօնաւ, եւ շատ ուրախ եմ որ Աստուած զբացօյց իմ տկարութիւնս՝ տալով ինձ մի կողմէն՝ Վարչական Ժողովոց եւ Խորհրդոց ժողովրդասէր եւ արիաջան գործակիցներ եւ միւս կողմէն՝ իրենց Ազգի եւ Եկեղեցւոյ պայծառութիւնը սիրող սատարներ:

Յնձնութեամբ կը յայտարարեմ, եւ արդէն անծանօթ չ'է Ձեզ, որ սոյն մետասանամեայ Առաջնորդական շրջանին մէջ, գործուեցան այնպիսի գործեր, որոնք սատիւ կը բերեն ո՛չ միայն Զմիւռնիոյ վիճակի Հայոց, այլ եւ համօրէն Ազգին:

Այս գործերն ինչպէս որ արձանագրուած են դիւանական ատենագրութեանց մէջ, նոյնպէս եւ մեծ մասամբ կ'երեւին հրապարակին վրայ: Ո՛վ փափաք ունի, կարող է կարդալ, ո՛վ աչք ունի, կարող է տեսնել եւ զննել:

Ես այսօր կը հրաժարիմ Առաջնորդական պաշտօնէս եւ կը բաժնուիմ Սիրելի Հօտէս բայց ուրախ եմ որ կը թողում Զմիւռնիոյ վիճակն նախանձեղի դրութեան մէջ, զոր չ'ունէր տանն եւ մի տարի առաջ:

Կը թողում Առաջնորդարանն իւր դիւանական կանոնադրութեամբ եւ իւր բարեջան ժողովներով եւ Խորհրդներով:



Կը թողում Ազգ. ելմտական արկղն աչաբուրջ հրս-  
կողութեան ներքոյ եւ համբաւաւոր վարկի մէջ:

Կը թողում Գպրոցներն ինչպէս նոր եւ հոյակապ  
շէնքերով, նոյնպէս եւ ներքին բարեկարգութեամբ եւ  
կանոնաւորութեամբ:

Կը թողում Հիւանդանոցն նորակառոյց եւ վայելուչ  
շէնքով ու ներքին անդուլ ինստակալութեամբ եւ ողջ-  
պահիկ կարգաւորութեամբ ու մաքրութեամբ:

Կը թողում մեծաշէն Ս. Ստեփաննոս Եկեղեցին իւր  
միջավայրի եւ գաւիթներու մարմարոնեայ սալայատակ-  
ներով, ինչպէս եւ վայելուչ նորոգութեամբ:

Կը թողում նոր գերեզմանատունն վայելուչ պարս-  
պով, վայելուչ մատուռով եւ կանոնաւոր դրութեամբ:

Կը թողում վիճակիս թեմերն՝ Եկեղեցական բարե-  
կարգութեամբ եւ մասամբ նորաշէն վարժարաններով:

Կը թողում Ազգ. յարաբերութիւնն Տեղական Կա-  
ռավարութեան հետ խիստ պատուաբեր ներդաշնակու-  
թեան մէջ:

Կը թողում օտար ազգաց գլուխներուն եւ վար-  
չութեանց հետ ունեցած մեր Ազգային յարաբերութիւն-  
ներն բարեկամական դրութեան մէջ:

Կը թողում Եկեղեցական գործոց տնօրէնութիւնն  
օրինական արդարութեան եւ կանոնապահութեան մէջ:

Տակաւին շատ բաներ կան, զոր հարկ չ'եմ հա-  
մարիր մանրամասնօրէն յիշել, այլ կը շատանամ միայն  
գծագրածներովս եւ միանգամայն կը յայտնեմ թէ՛ բնան-  
երբէք ինձ չ'եմ վերագրեր այս եղանակներուն պարծանքն,  
այլ միմիայն Աստուածային Նախախնամութեան, որ գի-  
տէ տկար գործիքներու միջոցաւ մեծամեծ գործեր կա-  
տարել:

Ես կը հրաժարիմ եւ կը բաժնուիմ այսօր, Սիրելի՛

Երեսփոխանք, բայց միշտ սրտէս անբաժան կը պահեմ այն սէրն ու համակրանքը, զոր լիովին վայելած եմ, ո՛չ միայն պաշտօնական մարմնոց, այլ Զմիւռնիոյ վիճակի համօրէն ժողովրդեան կողմէն:

Ես ամեն ժամանակ եւ ամեն պարագայի մէջ ըզգացած եմ որ կը յարգեն զիս ո՛չ միայն իբրեւ Առաջնորդ, այլ կը սիրեն զիս իբրեւ հայր: Այս համակրական ազնիւ վարմունքը ո՛չ միայն նկատած եմ մեծերու կողմէ, այլ եւ նշմարած եմ մանուկներու մէջ անգամ եւ մանաւանդ աշակերտներու եւ աշակերտուհիներու մէջ, որոց իբրեւ հայր եւ ուսուցիչ ջանացած եմ՝ պաշտօնավարութենէս կորզած ժամերուն մէջ՝ աւանդել ուսումն կրօնի, ուսումն պարտուց, եւ այս եղած է ինձ համար ամենամեծ մխիթարութիւն:

Ես կը հրաժարիմ եւ կը բաժնուիմ այսօր, Սիրելի Երեսփոխանք, եւ կը յայտարարեմ հրապարակաւ թէ՛ բնա՛ւ ունեցած չ'եմ ամենազոյգն ռիս կամ ատելութիւն առ ո՛ր եւ իցէ անձն. իսկ եթէ գտնուած են ոմանք, որ ինքնին իրենց անձն թշնամի կամ հակառակորդ համարած են ինձ դէմ, բնաւ երբէք ցուած չ'եմ եւ ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս եւ այսօր հրապարակաւ կը ներեմ իրենց, քանզի կը հաւատամ թէ՛ Տշմարիտ Քրիստոնեայն, մանաւանդ Եկեղեցական Քրիստոնեայն, միայն մի վրէժխնդրութիւն ունի, այն է՝ բարի առնել ատողներուն եւ հակառակորդներուն եւ աղօթել թշնամանողներու եւ հալածողներու համար:

Ես կը հրաժարիմ եւ կը բաժնուիմ այսօր, Սիրելի Երեսփոխանք, օրհնելով զԶեզ, օրհնելով իմ բոլոր Սիրելի ժողովուրդս եւ աղօթելով որ ամենաբարին Աստուած տայ Զեզ յաջողութիւն Զեր պաշտօնին մէջ, եւ պահպանէ ժողովուրդն սիրոյ եւ միաբանութեան մէջ:

Ես կը հրաժարիմ եւ կը բաժնուիմ այսօր, եւ քրնսնելով սիրտս կը տեսնեմ, որ եւ ո՛չ անհատի մը վնաս գրկանք պատճառած եմ: Իմ պաշտօնավարութեանս համար ես միշտ վարձատրուած եմ ժողովրդի համակրանքէն, վարձատրուած եմ Աստուծոյ օգնութենէն եւ աջակցութենէն:

Ես կը հրաժարիմ եւ կը բաժնուիմ այսօր իմ Սիրելի Ժողովրդէս՝ ունենալով ինձ հետ մի ամենամեծ նուիրութիւն, որ է *ժողովրդիս համակրանքն*. եւ ունենալով մի անբաժան ընկերակից, որ է *խղճիս անդորրոտ խնկն*:

Մնաք բարեաւ, Սիրելի Երեսփոխանք, Աստուած լինի՛ Ձեզ հետ:

2 Գեկտ. 1887

Ի Զմիւռին

*Մելք. Եղս. Մոռքատեսից*

1887 Դեկտեմբեր 26 Զմիւռնիս.

### Սիրելի Հայակրօն.

Ամսոյս 24 թուով գրածդ ընկալայ, շնորհակալ եմ բարեսէր եւ հիւրասէր զգացմանցդ համար: Խոնարհ յարկերն ինձ համար միշտ սիրելի են, բայց չեմ ուզեր բնաւ ծանրութիւն պատճառով իմ բարեկամներու: Արդարեւ կը հաւատամ որ Ձեր տունն քահանայական տուն է եւ ինձ սիրելի, քանզի ես քահանայութիւնն կը սիրեմ, թէեւ դժբաղդարար եւ առանց պատճառի Պօլսոյ Քահանաներէն եւ Վեղարաւորներէն ոմանք զիս չ'են սիրեր. կը հաւատամ նոյնպէս որ Ձեր տունն առաքինութեան ամեն յարմարութիւն ունի, բայց անտարա-

կոյս եմ որ իմ պատճառաւ երթեւեկողք պիտի ծանծա-  
րացնեն զԶեզ եւ զքնտանիսդ: Ուստի լաւ է որ առան-  
ծին բնակարան ունենամ. եւ բնակարանի յարմարութեան  
մասին կը խնդրեմ որ խորհրդակցիք մեր Սիրելի Մեզ-  
պուրեանի, Պէրպէրեանի, Փառիազեանի եւ այլոց հետ:  
Մեզպուրեան գրած էր ինձ *Կըզզը* -- *Թօփրապ* ի բնակա-  
րանի մասին, բայց չեմ գիտեր թէ՛ ի՞նչ աստիճանի յար-  
մարութիւն ունի: Վերջապէս կը խնդրեմ որ շուտով ու-  
րոշէք եւ գրէք:

Գերեզմանաց փոխադրութեան մասին յուզուած  
խնդիրն երեւի թէ շատ տարօրինակ կերպարանք ստա-  
ցած է (1): Իսկ Թիֆլիզի *Մշակ* այս տեղ շ՛տացուիր,  
գոնէ՛ իմաստն յայտնեցէք թէ ի՞նչ գրած է այդ անպի-  
տանն, որ անշուշտ Պօլսոյ իւր անխիղճ թղթակիցներէն  
կը թունաւորուի:

Այսօր Ս. Ստեփաննոսի տօնախմբութիւնն է: Կը  
յիշէք անշուշտ թէ անցած տարի ի՞նչ գրած էի Ձեզ՝  
տոյն տօնին առիթւ, իսկ այսօր սենեկիս մէջ միայն ա-  
ղօթեցի, խորհելով եւ մտախոհելով Տշմարտութեան մար-  
տիրոսներու վրայ: Ո՛րչափ մարտիրոսական յիշատակներ  
եկան անցան մտքէս եւ ո՞րչափ քաջալերութիւն ստացաւ  
սիրտս: Առաջին Նախավկայէն մինչեւ մեր օրն խորին  
քննութեան առնելով՝ կը տեսնեմ որ Տշմարտ կեանքն կը  
կայանայ Տշմարտութիւնն վկայելու մէջ: Աշխարհիս մէջ  
Տշմարտութիւնն պահպանելու համար միշտ վկաներ պէտք  
են, միշտ պէտք է խոստովանիլ Տշմարտութիւնն, միշտ  
պէտք է վկայ լինել Տշմարտութեան, թէեւ այս վկայու-  
թիւնն եւս երբէ՛ք առանց զոհողութեան կատարուած

(1) Կը դրկեմ Ձեզ ընդ սմին մի բացատրութիւն  
գերեզմանաց փոխադրութեան խնդրոյն նկատմամբ:

չէ: Բայց թո՛ղ զոհուին վկայք եւ թո՛ղ հաստատ մնայ Տշմարտութիւնն, քանզի Տշմարտութիւնն է միայն, որ կարող է փրկել եւ ազատել մարդն իր ամեն մոլորութիւններէն եւ մոլութիւններէն: Երանի՛ թէ՛ մենք եւս մի փոքրիկ բաժին ունենայինք Տշմարտութեան վկայից քաջարժուն դատուն մէջ:

Կը լառի թէ՛ մեզ դէմ հանրագրողներէն՝ ոմանք յեկեղեցականաց կ'ուզեն յետս կոչել իրենց ստորագրութիւնն: Զոչումն ընդունելի է Աստուծոյ առջեւ եթէ իրական է եւ 'ի գրտէ. քայց մենք կ'սղօծենք նոյն իսկ անգիղջներուն համար, առանց երջէ՛ր վիատելու՝ թէ կարող են նոքա արդարութիւնն եւ իրաւունքն սեւաքօղել իրենց սեւամոյր խորհրդներուն եւ ստորագրութիւններուն ներքեւ: Կը հաանի ժամն եւ օրն, երբ ամեն գաղտնիք կը խաչատուակուին հրապարակաւ:

Չը մոռնաք մեր սիրոյ ողջոյնն հաղորդել Պատրիարքական Գեր. փոխանորդին, որ կը յուսամ թէ՛ միշտ պատկառ կը մնայ իւր կոչման, առանց ճու՛ր կրկնելու Բահաղու:

Անցած փոսմային նամակիդ մէջ գեանդեալն որ *Հայակրտ* ստորագրութիւնդ կը կրէր, ընծեր յոյր ոմանք փափարեցան հրատարակուած տւանել, քայց եւս կամեցայ նախ Չեր հաճութիւնն ընդունիլ: Սքանչելի է նմանապէս մեր Սիրելի Պէրճէրեանի նամակն զոր յատկապէս օրինակել առի յիշատակարանիս մէջ եւ մի պատճէնն եւս Չեզ կը դրկեմ կարգաւ:

Ողջունելով զՉեզ՝ մնամ Աղօծարար վանս Լրութեան Ազգիս. եւն:

## ԳԵՐԵԶՄԱՆԻ ԽՆԴԻՐ

Օրուան մեծ խնդիրն է ոսկերուտեաց խնդիրը: Գրեթէ ամեն ոք ունի բառ մը, դիտողութիւն մ' այս խնդրոյն վրայ: Ոսկերուտեաց փոխադրութեան մէջ ու մանք սրբապղծութիւն կ'տեսնեն, այլք անսպասեմութիւն, ուրիշներ կուսակցական ոգւոյ ճարակ եւ հակառակորդներու ձեռքը անխտկեմաբար տրուած զէնք մը:

Անտարակոյս՝ տեղւոյս ոչ Գաւառական Ժողովն, ոչ Կրօնական եւ Քաղաքական Ժողովներն եւ ոչ Ս. Առաջնորդն երեւակայած են երբէք, երբ Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ արտաքին որմին երկայնութեամբ 17 խանութներու շինութեան որոշումն եղաւ, թէ այդ որոշումն այնքան աղմուկ պիտի հանէ, այնքան թիւր մեկնութեանց եւ զրպարտութեանց տեղի պիտի տայ, Կեդ. Կրօնական Ժողովին եռանդն ու զայրոյթն այնքան պիտի գրգռէ, մէկ քանի օրագիրներու կողմէ գրեթէ իբրեւ ազգային կենաց եւ մահու խնդիր պիտի ներկայացուի ժողովըրդսան, եւ մանաւանդ այնքան պիտի դատաւետուի, զոր պարտուի Ս. Առաջնորդն որ ի վերջէ պիտի հրաժարի:

Եւ սակայն խտնութիւններու շինութեան շարժառիթն է պարզապէս բարեսիրական եւ նպատակն՝ ազգային Արկղին արդիւնաւոր եկամուտ մը գոյացնելու փափաքը:

Մի բանի խօսքով պատմենք խնդրոյն ծագումն ու պարագաները:

Գաւառական Ժողովին առաջարկ մը կ' ինի Երես փոխանի մը կողմէ ինքնայորդոր: Այդ առաջարկն էր 17 խանութ շինել Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն մէկ կողմն՝ ուր գերեզմաններ շատ ցանցաւ են: Առաջարկին առա-

ւերութիւններն շոշափելի էին: Շինութեան համար 1000 ոսկւոյ գումար մը ծախք ընելով՝ Ազգը տարին պիտի ստանար 340 ոսկի հասոյթ: Ծախուց գումարն պիտի հաղթայթուէր առանց տոկոսի, եւ շատ հաւանական էր որ ձեռնտու բարերարներ այդ գումարն եւս Ազգին պարգեւէին: Գաւառական Ժողովը խնդրոյն անստեասական կողմերը ՚ի նկատի կ'առնու եւ շինութեան շահաբերութեան մասին թէեւ համոզում կ'կազմէ, բայց անմիջապէս որոշում չ'տար, այլ առաջարկը վարչութեան կ'յղէ, որպէս զի Կրօնական Ժողովն խնդրոյն կրօնական կէտերն, այս է մէկ քանի գերեզմաններու փոխադրութեան հարցն ՚ի յնին առնու, եւ Քաղ. Ժողովն դրամական մասն, եւ ապա միասին տեղեկագրեն Գաւառական Ժողովին: Այս որոշումն կ'հաղորդուի վարչութեան Օգոստոս 20 ին:

Կրօնական եւ Քաղ. Ժողովներն՝ խառն նիստ կ'ընեն Հոկտ. 20 ին, ուր ներկայ կը գտնուին չորս եկեղեցական եւ երկու աշխարհական:

Սոյն խառն Ժողովին մէջ ո՛չ մի եկեղեցական առարկութիւն կամ դիտողութիւն կ'ընէ կրօնական տեսակէտով շինութեան մասին, ինչպէս նաեւ կրօնական երեսփոխանները չեն ընէր Գաւառ. Ժողովին մէջ, երբ Տեղեկաւիբը վերջնական նկատողութեան կ'առնուի, այլ մանաւանդ քան աշխարհական անդամակիցս, աւելի եռանդ եւ փայտ կ'յայտնեն խանութներու անմիջական շինութեան համար, եւ այս մտօք տեղեկագրելով առ Ժողովն՝ կ'ապահովեն որ ոսկերուտեաց փոխադրութեան մասին պարտ ու պատշաճ արարողութիւնը կատարուած եւ ամէնք, գրեթէ տասնի չափ դաճքաններու տէրերէն հաւանութեան ստորագրութիւն աւած են:

Այս Տեղեկագրին վրայ Ժողովն շինութեան որոշումը

կ'տայ եւ կ'կարծէ ոչ միայն տնտեսական շահաբեր գործ մ'ըրած, այլ եւ վաղուց տոյն խանութից շինութեան համար շատ ազգայնաց կողմէ արտայայտուած փափաքանաց պատասխանած է:

Բայց վարչութիւնն անյայտ ոսկերութիւնն եւս ամփոփել տալու համար խղճահարութեամբ փորել կ'տայ շինութեան յատկացեալ վայրն եւ մեծ զգուշութեամբ կը վարուի: Օրեր կ'անցնին եւ յանկարծ կ'լսուին բողբոյ ձայներ:

Բարեպաշտներ ժողովրդեան միամիտ մասը կ'զբրգունն, խորհրդներ կ'կազմուին: Պատրիարքաբանէ շանութեր կ'արձակուին Ս. Առաջնորդի դէմ եւ ի վերջէ տեղական կառավարութեան մի քանի անձանց տուած բողբոյսագրի մը վրայ՝ ոստիկաններ կ'ղրկուին գերեզմանատունն որ պեղման գործողութիւնը դադարեցնեն:

Բաց ատօի կ'ամբաստանուի Ս. Առաջնորդն իբրեւ հեղինակ շինութեան խորհրդոյն: Թէ եւ, արդէն տեսանք, որ այդ խորհուրդն բոլորովին ինքնաբերաբար ծնած էր, առանց ո եւ է կանխակալ ոգւոյ, Երեւոյիստանի մը մըտքին մէջ՝ եւ իբրեւ շահաբեր Ազգին, Ժողովն ալ, կրօնականին կարծիքն ընդունելէն ետեւ՝ գործադրութիւնն անօրինած էր:

Բայց իրօք հաւատոյ, եկեղեցւոյ օրինաց եւ աւանդութեանց հակառակ է ոսկերութեաց փոխադրութիւնն: Եթէ է, կ'խտատովանինք որ Կառաւական Ժողովն, Թէ եւ ազգաշահ գործ մը ընելու բարի նպատակաւ, սխալած է: Աստուածաբան չ'լինելով, չ'ենք կարող վճռական կարծիք մը յայտնել, միայն պէտք կ'զգանք մի բանի հարցումներ ընել պատմական իրողութեանց վրայ յենլով:

Ժողովնք Սրբոց մասունքն որ ձեռքէ ձեռք կ'պը-



տրտին գերեզմաններէ հանուելով, Թողունք Ս. Ստեփան-  
նոս Եկեղեցոյ վերաշինութեան առիւ քաղմամբի գե-  
րեզմաները փոխադրութիւնն մեր այքի առջեւ. Թո-  
ղունք հոգեւոյս Պողոս Սրբազանի հրամանաւ Ղոնճայեա-  
նի եւ Անդրէաս Վարժապետի շիրմներուն տեղափո-  
խութիւնն. Թողունք Մեսրոպեան Վարժարանի վերաշի-  
նութեան առիւ ոսկորներու կրկտումն. Թողունք Հայոց  
նոր գերեզմանատունն հինէն սարուած ոսկերտօքն, եւ  
քիչ մը հետունները շրջինք:

Միժէ Տրապիզոնի գերեզմանատան մէջ նորաշէն  
կարուածներ կանգնուած չե՞ն, եւ մինչեւ իսկ հին Եկե-  
ղեցոյ տեղն պանդոկի վերածուած:

Միժէ Արմաշու Գեր. Խորէն Եպիսկոպոսն Պողոս  
Եպիսկոպոսի նշխարները փոխադրած չե՞:

Միժէ Ա.ին. Յարութիւն Պատրիարքը կարո՞ղ է  
հաւատաւոր որ կարնոյ գերեզմանատան մէջ դպրոց շի-  
նել տուած չէ գերեզմանները քակելով:

Միժէ նոյն իսկ Էջմիածնայ մէջ Գէորգեան Թան-  
գարանը շինուելու ժամանակ ոսկերտեաց կոյտեր չելան  
եւ առանց ո եւ է դիտողութեան Սինդի ու կամողիկո-  
սի կողմէ՝ փոխադրուեցան Գալիանէի վանքին դէմ Ա-  
ռաքէլ պատմագրի (Բաղիշացոյ) դամբարանին կից:

Մտնենք Պոլիս:

Միժէ Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցոյն խո-  
րանին կից մերթ Արեւելեան Թատրոն, մերթ Աւբազար,  
եւ այժմ՝ նոր Թատրոնը շինուած չէ՞:

Միժէ Բերայի գերեզմանատան շուրջն կրպակներ  
չե՞ն շինուած շիրմներու վրայ:

Միժէ Խրիսեան Սրբազանը Պէշիքթաշի գերեզմա-  
նատան փոխադրութեան համար իսկզբան հաւանութիւն  
չէ՞ր տուած Ս. Պատրիարքին:

Միժէ Մակար կամժողիկոսի գիրն Ս. Պատրիարքի ծոցը չէ՞, որ կ'արտօնէ գերեզմանաց փոխադրութիւնը:

Միժէ Ազգ. Ընդհանուր Ժողովը չէ՞ր որ փոխադրութեան որոշումը տուաւ:

Այս հարցմանց պատասխանին կ'սպասենք:

(Արեւելեան Մասնոյ)

Ամենազատիւ եւ Սիրեցեւոյ Ս. Հայր.

Երէկ երեկոյ Տ. Կարապետ Հայրն տուաւ ինձ յ'ընծերցումն Ձեր Սրբազնութեան վերջին նամակն: Կրնաք մակաբերել թէ՛ ո'րքան զգածուեցայ այդ ընծերցումէն՝ տեսնելով Ձեր մեծ հոգւոյն թախիծն ու արձակած դառն ու ցաւագին հառաչանքներն լսելով: Երեկոյն մենեց, եւ ահա՛ կուգար *Արեւելքն* լսեցնել վերասին իւր բարբանշանքն ընդդէմ Ձեր, սրտիս ցաւոյն իստնուեցաւ զայրոյթն, եւ խիստ յուզեալ գիշեր մը անցուցի: Կը մտածէի այս ազգին վրայ, ուր ամենէն գծուծ մարդիկ պաշտօնի գլուխ անցած են, ու ամենէն անարգ ոգիք ժողովրդական կարծեաց սուաջտորդի դեր ստանձնած են, ուր ամենէն մեծ մարդիկ կ'անարգուին, կատաղաբար կը հալածուին, ուր Հաւասոյ ու Ազգութեան սէրը դիմակ մ'է, զոր կը հազնին վատշուէր անծինք եւ որով զհնուած՝ կը յաջողին խուժանին, ռամկին ատելութիւնը գրգռել ընդդէմ Տշմարիտ երկրպագուաց Աստուծոյ եւ Տշմարտութեան, ընդդէմ Տշմարիտ ու անձնուէր բարեկամայ ժողովրդեան: Ո՛հ, տխուր էի, խիստ տխուր, տեսնելով մէկ կողմանէ գլխաւորաց ատեցող

Նենգալի ոգին ու միւս կողմանէ հետեւող ամբոխին ոչ խարամիտ տխարութիւնը որ կը կրկնէ միամտաբար ի՛նչ որ իւր անարժան առաջնորդը կը թելադրեն՝ տուն կուտան ճիւղաղաբար եւ որ «'ի Խաչ հան զդա» կ'աղաւ ղակէ միշտ իւր Փրկչին դէմ: Աւա՛ղ, ասպարէզը չարերուն, վատերուն, ազգավաճառ այլ կեղծաւոր սրիկայութեանն է: Յուսահատութիւնը՝ զոր կը յայտնէր Չեր Սրբազնութեան նամակն՝ իմ սիրտս ալ լեցուցած էր: Ես ալ կը կրկնէի Չեզ հետ «Պէտք է փախչիլ այս ընկերութենէն, այս միջավայրէն, ուր այնքան գծծութիւն, անխղճութիւն, կուրութիւն կայ. պէտք է անապատներն երթալ, ամպութեանց մէջ առանձնանալ, Հայու հետ չը խօսիլ, Հայու երես չը տեսնել»: Այս վերջին բառերը Դուք չէք բսած, Դուք Չեր յուսահատութեան մէջ իսկ անձուէր, ազգասէր էք. կ'առաջադրէք միայնութեան մէջ խոկալ, գրել յօգուտ Ազգին ու Եկեղեցւոյ. բայց իմ յուսահատութիւնս կ'երթար կը հասնէր ց'այդ կէտ:

Սակայն յուսահատութեան այս առաջին բուռն ապականութիւնն մեղմանալէ յետոյ, սկսայ խորհիլ թէ՛ յուսահատին արի մարդու գործ չէ, թէ՛ յուսահատիլ առաւել ուրախացնել է չարերը եւ նոցա ազատ սուպարէզ թողուլ է, եւ թէ՛ հարկ է, լաւագոյն է կալ եւ մաքաւիլ ց'վերջ բարւոյն յաղթանակին ու ժամտից դաւանաց խայտառակմանն համար: Հարկ է ջանալ բարիք ընել այս ազգին նոյն իսկ իրեն դէմ, յանկամտ իւր: Անշուշտ եմ թէ՛ Չեր Սրբազնութեան մտաց մէջ ալ յետ վշտագին յուսահատական գաղափարաց խուժման, երբ անդորրն սկսած է տիրել, աւելցած է քաջութիւնն եւ հետեւապէս պայքարը շարունակելու, մնալու եւ գործելու տենչն: Պէտք է ցոյց տալ ժողովրդեան թէ՛ խաբուած է չարաչար, պէտք է փայլեցնել ճշմարիտ արժանիքը,

անարժան, սեւ նակատներու մեծին հորիզոնին վերեւ պէտք է շողացնել իսկական արժանեաց, հոգևոյ ստոյգ մեծութեան, մտաց ճշմարիտ բարձրութեան արեւը: Եւ սորա համար պէտք չէ բաշուիլ, խոյս տալ ասպարէզէ: Ինձ չէ անկ, Սրբազան Հայր, ինձ որ ամենայնիւ ամենայն իրօք յոյժ խոնարհ եմ՝ բան զՁեզ, խորհուրդ տալ Ձեզ, խրախոյս կարդալ Ձեզ. Գուք Ձեր հեռադէտ եւ բարձրանայեաց տեսութեամբ կարող էք որոշել հետեւելի լաւագոյն ուղղութիւնն, եւ անտարակոյս որոշած էք այս վայրկենիս: Պէտք է որ ձեռք առնուք Ձեր գրիչը, Ձեր հոգեշարժ ոսկեղէն գրիչը, գրիչն՝ որ առաջին եւ հզօրագոյն գէնքն է ամեն մտքի տէր անձերու, եւ խօսիք Հայ ժողովրդեան հետ, մեկնէք անոր Ձեր շարժումներն, մեկնէք մանաւանդ վերջին գերեզմանական խնդրոյն պարագայներն, որք անծանօթ կը մնան հասարակութենէն, որ այսպէս իւր համոզումը կը կազմէ այսպէս անիրաւ դիւանագի տեսութիւններով, զոր կը հրամցնէ նմա *Արեւի ջրն*: Այս վերջին խնդիրն է բոլոր ամեն նաւելի զժողովուրդն բայթակղեցնողն, պէտք է ջանալ լուսաւորել նորա գիտակցութիւնն, որ մտրբած է: Ձեզ համակրողներն ալ պարտին գրել, եւ իմ մասիս՝ եւս առաջադրած եմ գրել՝ ցոյց տալու համար ունայնութիւնն աղմկին, զոր կը յարուցանեն Ձեր շուրջն, անկարեւորութիւնն՝ իրողութեանց, զորս սրբապրծութեան աստիճան կը սառւարացնեն չարմախանձ թշնամիք՝ շահագործելով այսպէս ընդդէմ Ձեր՝ ռամկին տգիտութիւնն ու դիւրահաւանութիւնն: Տեսնե՛նք թէ ո՛ւր է եղեր, ի՛նչ է եղեր այդ մեծ անկումը, որոյ վրայ կոկորդիլոսի արցունք կը հեղուն *Արեւի ջրն* ևս *Փռանէ*: Եկէք՝ ի Պօլիս, տեսնուեցէ՛ք, խօսեցէ՛ք, գրեցէ՛ք, Ձեր շուրջը ժողովեցէ՛ք Կ.Պօլսոյ իմացականութեան ծաղիկը, զոր միշտ համակրող պիտի տեսնէք Ձեր հազուագիւտ կա-

տարելութեանց. եկէ՛ք եւ մեր տգէտ ու վատաբարոյ ու կեղծաւոր կղերականութեան դէմ ցոյց տուէ՛ք ուսեալ, ազնուաբարոյ եւ անկեղծ եկեղեցականի վտմ ու հրապուրիչ դէմքը. թո՛ղ յ'ամօթ լինին Ձեր ռիսերիմք: Ես ճշմարտութեան վերջնական յաղթանակին վրայ հաւատք ունիմ: Մի՛ վիատիր, գիտէք թէ մարդկութիւնն ինչպէս վարուած է յաճախ իւր ամենէն մեծ բարեկամաց հետ: Գունդագունդ ՚ի Մայր — Եկեղեցին Ձեզ մտիկ ընելու դիմող ժողովուրդը նորէն պիտի վազէ Ձեր իմաստուն շրթունքներէն սուրելու ճշմարիտ հաւատքը եւ ճշմարիտ ազգասիրութիւնը:

Ձեր Սուրբ Աջը կը համբուրէ՛ իւր Տիկնոջ հետ  
խոնարհաբար Ձեր ակնածու սրղին

*Ս. Մ. Կերպիկեան*



*Գրգըլ -- Թոփրագ 22 Փետ. 1888.*

### Սիրելի Հայակրօն.

Շատ գոհ եմ Գրգըլ — Թոփրագի մենաբանէն եւ արդէն Մեծ. Տանտէրս՝ Գալուստ Աղա Սերովբեան, ամեն կերպիւ մենակեցական կեանք կը վարէ, աշխարհային ժխորներէն հեռացած եւ իրեն համար սիւրբի պարապմունք ընտրած այգեստանի եւ ծառայտանի մշակութիւնն:

Շատ ազնիւ եւ ուղղամիտ մարդ է եւ այս մի մեծ սիտիանք է ինձ համար:

Տեսաք անշուշտ՝ թէ ի՞նչ վախճան ունեցաւ Պէշիքմաշի գերեզմանատան ոսկերոտեաց փոխադրութեան խնդիրն, որ այնքան երկար ժամանակ տարապարտ յուզուեցաւ եւ առիթ եղաւ շատերու մոլորամտութեան:

Տ. Յարութիւն Պատրիարքն վաղուց արդէն հարցու-

ցած եւ պատասխան ընդունած էր Տ. Մակար Կաթողիկոսէն՝ թէ ոսկերոսեաց փոխադրութիւնն հակառակ չ'է կրօնի. բայց Ազգ. վարչութեան ազդեցիկ անդամոց ոմանց կողմէն ազդարարուած էր իրեն՝ բնաւ յերեւան չը հանել կաթողիկոսական գիրն: Այս պատրաստուած էր մի *խաղաղացիտական* գիր եւ զրկուած կաթողիկոսին, որ ստորագրէ եւ վերադարձնէ:

Սոյն գրոյն պարունակութիւնն շատ տարօրինակ էր, այն է Ս. Կաթողիկոսն *խաղաղացիտ* իւր կողմէն (ո՛չ կրօնական օրինաց տրամադրութեամբ) գերեզմանատունն կը նուիրէր Օգոստափառ Սուլթանին: Այս նարտարամտութիւնն հնարուած էր ոչ միայն Օսմանեան վեհապետին սիրտն շահելու, այլ եւ Մակարի կաթողիկոսութեանն օրինաւորութեան կերպարանք տալու համար՝ առաջին կարգի *Մհախիէ* կամ *Պոմանիէ* պատուանշան ձեռք բերելու եւ յէջմիածին զրկելու:

Կաթողիկոսական *Կոնդակն* կը կարգացուի կրօնական Ժողովի մէջ, 'ի ներկայութեան բոլոր անդամոց, յոսնկայս եւ գլխաբաց. իսկոյն տարակէրէնի թարգմանուելով՝ յատուկ պաշտօնագրով կը մատուցուի 'ի Կայսերական Պալատն. սակայն Օգոստափառ Սուլթանն՝ կը վերադարձնէ *Կոնդակն* 'ի Պատրիարքարանն՝ յայտնելով թէ՛ եթէ իրապէս հակառակ է կրօնի ոսկերոսեաց փոխադրութիւնն, չը հաճիր բնաւ, որ իւր անձին զոհուի այդ կարծեցեալ կրօնական օրէնքն: Հարտարամտութիւնն (որ կրօնի անուամբ յերկրուած էր) կը խայտառակուի եւ խնդիրն կը փակուի:

Ներկայիւս կը զրկեմ ջեզ մեր Սիրելի Մամուրեանին մի վսեմախոհ գրոյն օրինակն կարգալու զայն եւ պահելու. բաջ իմանալով, որ կը սիրէք պահել:

Մ. Ե. Մ.

*Զմիռոնիս 8 Փետրվար 1888.*

**Սիրելի՛ Սրբազան Հայր Մուրափառանց.**

Տրտնախառն խնդուծեամբ ընդունեցայ Ձեր 30 Յունվար ամսամիջ գիրն եւ յուզմամբ կարդացի: Քանի՞ դժուարին է ինձ վարժիլ Ձեր տարակայուն թեան. կենացս մէջ չ'եմ ունեցած բարեկամ մը՝ որ այնքան լայն ու մեծ տեղ մը բռնէ սրտիս մէջ ո՛րչափ բռնած էք Գուր:

«Հայոց Աշխարհի կոնկան» Գարեգինն արդէն գրաւած էր զ'իս իր զգայուն, հայրենասիրտ ոգւով եւ գրչով, Գատը—գիւղի պանդուխտն մի քառեակ դար առաջ յաւփըշտակեց միտքս, նոր ոյժ տուաւ զ'իս վստող խորհուրդներու իրագործման, նոր յոյսեր եւ գրչիս նոր շեշտեր տուաւ: Աւա՛ղ, անցան այն խնդալից օրերն երբ ապագային մէջ կը յուսայինք նշմարել Հայրապետական Աթոռն անկախ, Եկեղեցին իր Առաքելական սահմանին մէջ մտած ազատ, պայծառ եւ Հայրութիւնն բարոյական եւ մտային կենսատու շաւղի մը մէջ: Այսօր այն ապագայն անա՛ ներկայն է, որու ճշգրիտ պատկերը Ձեր նամակին մէջ՝ պատմական տխուր եւ սրտաշարժ էջ մը կը կազմէ:

Ա՛հ, Սիրելի՛ Մուրափառանց, մեր չորս դին միայն բարոյական եւ մտային աւերակներ կը տեսնենք եւ կ'ողբանք. բայց մի՞թէ՞ միշտ դատապարտուած են ապրիլին յիշատակներով եւ յոյսերով անոնք՝ որ ճշմարտութեան, իրաւունքի կը հաւտան ու կը պաշտպանեն. մի՞թէ՞ դարուս մի նոր վարդապետութեան համ մտ տ՝ բարոյա-

կան աշխարհը միշտ բուռն ու կոշտ ուժի առջև երկր-  
պագո՞ւ պիտի մնայ, մի՞թէ՞ միայն ներքին գոհունակու-  
թիւն ու վայելք պիտի տայ, առանց իր ներգործու-  
թիւնն զգալի ընելու նիւթական աշխարհի վրայ:

Եւ սակայն ո՞րքան շունչ, սիրտ թափեցինք՝ այն-  
քան տարիներէ՛ ՚ի վեր՝ Գուք՝ *// հոհի* գագամէն, եւ  
*Պարոսի* ստորուէն, ո՞րքան խորհուրդներ, ճրագիրներ  
լիաձեռն հրատարակ հանեցինք, որպէս զի պատուէք  
այն սեւ քօղն՝ որով բռնակարութեան թամբը կապեր  
կաշկանդեր էր թուրքիոյ Հայոց մի ազդեցիկ մասին  
աչքն, որպէս զի անոնց ցոյց տանք Հայութեան ճշմարիտ  
շահուց եւ պարտուց ճանքան եւ այն միջոցներն որով՝  
Օսմանեան Պետութեան կրօնական թոյլտուութեան շնոր-  
հիւ կարելի էր ներգործել Արարատեան Սթոռին վե-  
րակենդանութեան վրայ: Է՛, ի՞նչ տաքանք մեր ան-  
դուլ ճգանց փոխարէն. — գրե՛մէ՛ յուսանատուութեան մօտ  
վիատու՞թիւն . . . . :

Մշուշա՛ պահ մը միայն այնչափ եղաւ մեր խն-  
դութիւննն, պահ մը, գերագոյն վայրկեան մը՝ Ազգին  
խիղճը նշոյլներ արձակեց, Ազգին համայն Չայնն՝ Չեզ  
Հայրապետ անուանեց եւ Չեզմով սուսն առնել ուզեց  
ո՛չ միայն Ազգութեան, իր կրթութեան եւ գրականու-  
թեան սպառնացող վտանգներուն, այլ եւ իրագործել  
այն խորհուրդներ՝ որ Հայրապետական գահուն իրաւա-  
տու՞թեան, անկախութեան կը վերաբերին: Է՛, անա՛ սյդ  
եղաւ մեր աքնութեանց վարձքն, մեր մեծ յաղթանակն:  
Երբ Գատը—գիւղի պանդուխտն կը թղթտոտէր Ժիւլ Սի-  
մօն, երբ կանոնիկոսական խնդրոյն պատգամաւորն Էջ-  
միածնի նոր *Ռիկուգիրն* Ազգային Ժողովին նկատողու-  
թեան կ'ենթարկէր, երբ Ս. Երուսաղէմի միաբանն՝ *// հոհի*  
մէջ կը գոռար եւ Հայ Եկեղեցւոյ նանատակութեան եւ



իրաւանց պատմութիւնն խանդագին սիրով կը հեղինակէր, միեւնի՝ կը խորհէ՝ ր երբէք, թէ սահմանուած էր կուչուիլ այն Աթոռն, որու իրաւունքն ու սրբութիւնն այնքան ջերմեռանդութեամբ կը պաշտպանէր: Փառասիրութիւն չ'էր ո՛չ Չեր եւ ո՛չ իմ նպատակ: Պարտուց գիտակցութիւն եւ սպագայ փոթորկի մը նշաններն էին, որ կ'ուղղէին մեր եռանդն եւ գրիչն՝ մինչ դասալիքներ կը քաշուէին ասպարէզէն:

Եւ մեր կրած դառնութիւններն եւ մեր կրած խաչն իրենց արդիւնքն ունեցան: Ազգն բնդնշմարեց իր փրկութեան շաւիղն: Իրաց տրամաբանական բնծացքը, Գուբըսէք Նախաինամութիւնն՝ լրացուց մեր փափաքները: Եւ սակայն արթուն էր եւ բունակալութեան սուր աչքն՝ եւ միականիներ, կոյրեր, հայ դաւաճաններ իրեն գործիք ընելով կորզեց մեր ձեռքէն, Ազգին ձեռքէն յաղծանակն: Եւ այդ դաւաճաններու մէջ առաջին մեղաւորներն, պատժապարտներն են անոնք, որ հոգւով ալ կուրացած են, թէեւ պաշտօն ունին հոգիներն՝ ի լոյս բերել եւ Եկեղեցոյն սնշահադէտ սրտով սպասաւորել:

Ուստի եթէ բունութեան հետ մատնութիւնն՝ քարոյական զօրութեան, արդարութեան առջեւ անգոր լինէին, այսօր Ազգային բոլոր գործոց բնծացքը տարբեր ուղղութիւն պիտի ունենար: Չեր բնավայրը չ'էր, Սիրելի Մուրատեանց՝ Գըզըլ—Թօփրաք, չ'էր հովուական անտու՛ւ՛ ի Զմիւռնիա՝ ուր վերջին սրտագին ցոյցերէն անշուշտ դիտեցիք գոհ սրտով թէ՛ ի Չեղ արդարութիւն, խաչք սիրողներ շատ կան, չ'էր եւ Կարին՝ ուր հակառակ ամեն չարախօսութեանց Հովիւ կ'ընտրուիք, դեռ եւս Չեր Հօտին սրտեռանդն համբոյրներէն չը բաժնուած, ոչ Չեր բնավայրն՝ ո՛չ այդ մենարանն էր եւ ոչ իսկ Պատրիարքական ո՛ր է գահ մը կրնայ լինիլ, այլ Ս. Գրիգորի

Աթոռն, ուր ունէիք գործել, ուր ունէիք մաքրել երբեմն նահատակներու արեամբ ողողուած եւ այժմ փուշերով եւ դժնիկներով ծածկուած Ազգային արտեր ու դաշտեր:

Ազգազայն ունի անշուշտ գաղտնիքներ, կրնան պատահիլ անակնկալ դէպքեր եւ վերստին մեր յոյսերն արծարծել, բայց՝ վնասուածիւնք պաշարած է զիս Հայ Ազգին նկատմամբ, վասնզի ամեն մեծ եւ փրկաւէտ նորոգում իր ժամանակն ունի, եւ ցաւ է ինձ ըսել, որ երկու տարի առաջ ինչ որ հեշտիւ կարող էինք կատարել, այժմ անսովոր ճգամք իսկ դժուարին, եթէ ո՛չ անհնարին կ'երեւի ինձ ստանալ: Մեծ աղէտէն ետք՝ միշտ սովոր ենք ըսել — չ'է մեռած կանթողիկոսական ինդիքը — սակայն ց'որչափ ազնաւներ եւ կոկորդիլոսներ շրջապատեն կիսակենդան դիակն, ց'որչափ վարչային մեքենային անիւներն դժմիտ եւ սարկամիտ դազողակիրներու ձեռքք մնայ, ի՛նչ որ ընենք, ի՛նչ որ գրենք, կրնայ գէ՛թ պատմութեան նիւթ վնիլ, ստուծեանց թանձր քողը փարատել, բայց ես չը պիտի դադրիմ ըսելէ որ — Դուք էք վերջինն ՚ի Հայրապետս: — Երանի՛ թէ փոխէի իմ կարծիքս, երանի՛ թէ դէպքերն ու ազգային մարմնոյն մէջ յեղակարծ վերակենդանութիւն մը սուտ հասնէր իմ գուշակութիւնս: Եւ ես կ'ապստմ սիրով կարգալ եւ հրատարակել իսկ ինչ որ վերջին Հայրապետն կարող է եւ նարտի գրել եւ վնաս սիրտեր ու միտքեր ոգեւորել: Եթէ առ այժմ կայ մեզի համար միսիմարութիւն մը, այս է որ մեր պարտքն անվերհեր կատարեցինք: Իմացականութեան բանահիւսի մը հետ կ'ըսեմ, — Տխուր եւ կարճ կենաց վերջն՝ ի՛նչ փոյթ եթէ մարդ յիշուի իբրեւ օրինակ արտաքին երջանկութեան: Կարելորն է շատ մտածել եւ շատ շփուլ,

անվրդուլ ակնարկ մը ձգել ամեն բանի վրայ եւ վերջին  
 ժամուն կարող լինիլ ըսելու, — *Քա՛ն ապրեցայ*: —  
 Ե՞րբ արդեօք համայն Ազգն պիտի կարենայ գէթ ըսել  
 — *հ'ապրիմ* — :

Սիրալիր եւ կարօտագին Ձերդ

*Մ. Մանուկեան*





# ՎԵՐՋԱԲԱՆ ԿՐԱՏԱՐԱԿՉԷՆ



**ՄԵՆԱՎԱՏԻԻ Մուրատ**  
 եանց Սրբազանի առ Արժ.  
 Սեմեան Երէց ուղղած նա-  
 մակներն՝ դաս մ' ուղղա-  
 միտ եւ գրատէր անձնաւո-  
 թու թիւնք ընծերցած լինե-  
 լով, եւ նկատելով թէ ազ-  
 գային պատմական կեան-  
 քի հետ կապ ունենայէն

զատ՝ հոգեպարար շարագրածներ են՝ հայ եկեղեցակա-  
 նութեան սիրան ու միտքն շինելու, բարոյականն զօրա-  
 ցընելու, եկեղեցւոյ սիրով ոգեւորելու. եւ կանխատե-  
 սելով թէ՛ այդ օրինակ ընտիր գրուածներ յոյժ շահե-  
 կան են եւ հրահանգիչ ազգային կեանքով եւ կրօնի ու-  
 սումնասիրութեամբ հետաքրքրուողներու համար, այդ  
 բարեխոն գրատէրք՝ կարելոր դատեցին՝ ՚ի լոյս ընծայել  
 նամականին եւ այս պաշտօնն յանձնուեցաւ երախտա-  
 գէտ աշակերտիս, պարտք դրուելով միանգամայն ինձ

վրայ համառօտ *վերջաբանի* պարզաբանել հրատարակուածեան նպատակն:

*Նամականոյս* հրատարակուածեան նպատակն չ'է երբէք՝ հրապարակել Մելքիսեդեկ Արք — Եպիսկոպոսի Կաթողիկոսական ընտրութեան պատմութիւնն, ոմանց նախանձօտաց, մի բանի չարամիտներու դաւաճանութիւնն, Ռուսիոյ Կառավարութեան կողմէ Հայոց Եկեղեցւոյ իրաւանց բռնաբարումն, Ազգի հեռատես, բանիբուն եւ ուղղամիտ մասի ցաւն ու վիշտն են. եւն. աւսնք ամէնքն ալ հանրածանօթ իրողութիւններ են, վաղուց 'ի պտտմութեան արձանագրուած, որոց յիշատակութիւնն ազնիւ հոգիներն անգամ մ' եւս այլայլելէ, ազգասէր սրտերու քօսացեալ վէրքերն արիւնելէ անդին չ'անցնիր, այլ անհրաժեշտ է պարզել թէ՛ բոլորովին տարբեր, ազնիւ եւ վեհ է սոյն նամակաց հրատարակման նպատակն: Այս ձեռնարկութեամբ բանիբուն անձինք կը փափագին ցոյց տալ, թէ հայ նահապետական առաքինութեամբ օժտեալ մի ընտանեաց զաւակ, հայակրօն քահանայի մը հարազատ հայորդին, Հայաստանեայց Եկեղեցւոյ մի ամենուէր, բարձրատիճան հովիւն, մի զարգացեալ ողջախօս հեղինակութիւն, *ի՛նչպիս կ'իմաստասիրիկ կրօնն եւ եկեղեցին, ի՛նչպիս կը ստեմանէ եկեղեցականութիւնն, ի՛նչպիս կ'ըմբռնէ նորա կոչումն ու պարտականութիւնն* եւ այս ամենէն իմանալ թէ՛ ո՛րպիսի եկեղեցականութիւն ունինք, որպէս զի մենք մեր վրայ ամփոփուած՝ մտածենք, խոկանք, թէ ի՞նչ պարտինք ընել մենք աշխարհականքս, ի՞նչ պարտին զործել կղերականք այն ամէն պարագայից՝ երբ ազգ, կրօն, եկեղեցի աճուողի հանուած են, երբ հայրենաւանդ ամէն սուրբ նշխարք եւ աւանդութիւնք ոտնակոխ կ'ըլլան, երբ մեր դարաւոր նուիրական իրաւունքներն եւ սեփա-

կանուծիւնքն առաժուր կ'առնուին եւ երբ յաճախ հայ մասնառու ձեռներ ազգային քայքայման կը մասնակցին, ստէպ հայ նենգամիտներ անճանական հաշիւներու, շահու, պատուոյ եւ փառասիրութեան կը գոհեն հանրութեան օգուտն, հայութեան պատիւն,՝ ազգի փառքն ու ապագայն:

Այդարեւ, Ամենապատիւ Մելքիսեղեկ Սրբազանի նամականին մտերմական շրջանակի մը մէջ պահելով՝ այդ սրտագրաւ գրուծիւնք պիտի մնային ՚ի պահեառի իբր անժառամ՝ ծաղիկներ հոտաւէտ, որոց անոյշ բոյրն ու կենսատու հիւծն միայն մի քանի անձինք պիտի վայելէին. այլ նամակի ձեւով այդ սրտի թրթռումներն, հոգւոյ փառիլումներն, այդ իմաստալից գրուծիւնք, հրապարակ ելլելով՝ անուշ բուրմամբ պիտի պարուրեն հոգիներն, կենսաբեր հիւծ պիտի բաշխեն բազմաց. քանզի այդ նամակներն միայն սրբուծիւն եւ առաջինուծիւն կ'ուսուցանեն, միայն *կրօն, Հայաստանեայց Եկեղեցի*, եւ *Ազգոսթիոն* կը բուրեն. այդ գրուածոց ամէն խօսքերն ու իմաստներն վճիտ, յոտակ եւ քաղցրածործոր՝ հայկական վանքերու կամնաղբիւրից ջրերու նման կը հոսին փայլուն եւ անապակ, մտքերն կը մաքրեն, սրտերն կ'օծեն:

Վեհաշնորհ Մելքիսեղեկ Սրբազան բոլորովին ոգեւորուած, լցուած, Հայաստանեայց Եկեղեցւոյ սիրով եւ ոգւով՝ ցոյց կուտայ իւր նամակներով, թէ քանի օ՞ն կենսապարսպ, հոգեզմայլ եւ հոգեանունդ են Հայաստանեայց Եկեղեցւոյ շարականներն. ցոյց կուտայ, թէ ի՞նչքան մեծ է երգի, մասնաւորապէս՝ կրօնական երգի՝ աղօթքի ազդեցութիւնն. մանաւանդ, նոյն իսկ Գերաշքնորհ Սրբազանին խօսքերով՝ « երբ սրտառու է երգասացներ կան, երբ այդ երգերն մտախոհութեամբ կ'երգուին, երբ սրտէ կ'երգուին եւ սրտի հախար կ'երգուին »:

եւ այս ամենն այնքան գեղեցիկ, համոզիչ կերպիւ շարագրած է, այնպիսի ներդաշնակութեամբ որ՝ կարծես գրուածն երգի եւ աղօթքի արձագանքն է որ երաժշտութեան պէս կը հնչէ ականջիդ աղու եւ սրտազդեցիկ:

Յիրաւի, ո՞վ կ'ուրանայ երգի, աղօթքի ազդեցութիւնն. սիրտ եւ հոգի կրողներն քաջ կ'զգան անոնց զօրութիւնն: Քառութեան օրէնքներն ստէպ անողոք են, երկրային կեանքն յաճախ տխուր է, իրականութիւնն կը ցնցէ զմեզ եւ այդ տխրութեան ժամերու մէջ՝ հասարակ, տկար մահկանացուք, անոգի մարդիկ, աղէտից բեռին տակ ընկճած՝ կը տրտմին, կը հիւժին, կը քայքային. իսկ զարգացեալ մտքի, զբայուն սրտի տէր մարդն՝ պլպուլի, վա՛ն՛մ երաժշտի գեղեցիկ ձայնով, սիրեւոյ մը ձայնով, նուագարանի մը թրթռումներուն 'իւր' կը ջանայ վերսնալ, մխիթարուիլ, հիասթափիլ. այլ անո՞նք որ մտքի եւ սրտի ոյժի հետ հոգւոյ զօրութիւնն սլ ունին՝ անո՞նք ոյք երկնային կեանքի հզօր շունչն ունին իրենց մէջ, այդպիսիք՝ կենաց տխուր օրերու մէջ երգերու ամենէ գեղեցիկն, ամենէ քաղցրն կը նուագեն, աղօթքով կ'սփոփուին, հոգեշարժ պելլունք դէպի երկինք կը բարձրացնեն, իրենց սրտի ձայնն երկինք պարսնելով Աստուծոյ հետ կը խօսին, Աստուծմով կը զօրանան: Ս. հ, արդարեւ, կրօնի, կրօնականի աղօթքն է երգերու ամենէ աղուն եւ վստմն, զի նա երկնքէն կը բողոխի, երկնքէն կուգայ. երկնքին կը կապէ զմեզ եւ երկինք կը վերանայ:

Գերաշնորհ Մելքիսեդեկ Եպիսկոպոսի նամականւոյն մէջ մեծ տեղ մը կը գրաւէ կրօնական ոգեւորութիւնն. գրեթէ չ'կայ նամակ մը որ կրօնի վեհութեան վրայ չ'ճառէ: Նորին Սրբազնութիւնն անպայման հաւատք մ' ունի երկնային կենաց վրայ, անմասն հաւատք

մը կը տածէ առ Գերմարդկայինն. տեղ մը կը գրէ թէ՝ առանց երկնաւոր կեանքին մարդու երկրաւոր կեանքն բոլորովին ոչինչ է եւ գրեթէ *զհանչ* անուն իսկ կրելու արժանիք չ'ունի եւ բոլորովին յաիշտակուած՝ կը յաւելու. « Մարդն երկնքի զաւակ է՝ յերկիր ընկած, մարդոյ կեանքն երկնաւոր է, մարդոյ կեանքն Աստուած է: Ա՛խ, չե՞ս ուրախանար, երբ իբր երկնքի զաւակ եւ երկրի մէջ՝ երկնքի պաշտօնեայ՝ աչքերդ դէպի երկնքի բարձունքն ուղղած, երկնաւոր Հօրն փառք եւ գոհութիւն մատուցած ժամանակ՝ կ'աղաղակես, կը նուագես քաղցր ձայնի « Ի՛Քէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան եւ լուսով երեսաց քոց՝ տեսանեմք զըյս »: Միայն այս անմահարար եւ զուարթարար Աղբերէն է մեր կենդանութիւնն: Միայն Աստուծոյ երեսաց լուսուն է, որ մենք ըյս կը տեսնենք, առանց կենդանութեան Աղբերն՝ մեր կեանքն դառնութիւն է եւ ո՛չ կեանք, առանց Աստուածային Լուսոյն մեր ամեն ըյսն ու լուսաւորութիւն իսաւարէն տարբերութիւն չ'ունի » եւն. եւն.:

Ինչ որ փափաքելի է շեշտել՝ Ամենապատիւ Մուրատեանց Սրբազանի առ Մայրենի Եկեղեցին տածած անեզր, անհուն սէրն է, որ անգամ մ'ալ ՚ի յայտ կուգայ սոյն նամականւոյն մէջ: Այս նամակներն, որոնք միայն մի կղերականի ուղղուած են, որոնք իբր հանրութեան ընթեռնչի նիւթ չ'են գրուած՝ զայնս շարագրողին սրտի եւ հոգւոյ զգացումներն իսկատիպ կերպիւ, բնական կերպով կը հայելիացնեն. հեղինակին Հայաստանեայց Եկեղեցւոյ վրայ ունեցած խանդաղատանաց, Սներչնմանց անվիճելի գրաւականներ են եւ նորա անպայման եկեղեցատիրութեան աստիճանօցոյցներ: Երբեմն եղան մի քանի տկարամիտներ, ոյք ազգային իրաւանց պաշտպանութեան, հայրապետական անկախութեան



խնդրոյն մէջ նախանձէ եւ հակառակութենէ շարժեալ՝  
ամէն ջանք չ'անայեցին եաստիրական ծգտումներ զա-  
ռանցել Մուրատեանց Սրբազանի գրութեանց մէջ, երբ  
Նա Պօլսաքնակ ողջամիտ հասարակութեան խնդրանաց  
վրայ կը հրատարակէր «*Երկոս խօսք ֆրանսաստանի Հայոց  
կրօնական եւ կրթական միճակի վրայ*» աշխատասիրու-  
թիւնն: Տարիներ կը հոլովին, դարեր կ'անցնին եւ Մելքի-  
սեդեկ Սրբազանի *Երկոս խօսքն* կը մնայ միշտ իբրև մի  
սրտամտունդ բողոք Հայոց կրօնական եւ կրթական ազա-  
տութեան բռնաբարման դէմ: Սոյն բողոքին հրատարակու-  
թենէն 'ի վեր (1888) տակաւին շատ տարիներ չը բոլը-  
րած եւ ամա Ռուս կառավարութիւնն իրագործած է  
իւր բռնաբարիչ քաղաքականութեան ճրագիրն՝ մի կա-  
թողիկոսի ընտրութեան տեղ՝ *Երկոս* կաթողիկոսացունե-  
րու ընտրութիւնն, որպէս զի կաթողիկոսական ընտրու-  
թեան իրաւունքն իրեն վերապահուի, ընդդէմ Հայաս-  
տանեաց Եկեղեցւոյ դարաւոր եւ առաքելական իրա-  
ւանց: Մակարի կաթողիկոսութեան շնորհիւ արդէն փա-  
կել տուած էր Հայոց արական եւ իգական սեռի երկ-  
բորդական ուսումնարաններն (6—7 դասարաններով)  
եւ այժմ՝ վեհ. իրիմեան կաթողիկոսի օրով զեկուցուած է  
Ս. Էջմիածնի պաշտօնական *Աշարատի* մէջ (1896. Ս.պրիլ)  
թէ եկեղեցական—ծխական բոլոր նախակրթարաններն  
եւս փակուած են եւ Սեպտեմբերին պիտի չ'բացուին:  
Եթէ Մելքիսեդեկ Սրբազանի կաթողիկոսութեան օրով  
այսպիսի բռնաբարումներ տեղի ունենային, անտարա-  
կոյս ունայնամիտներն պիտի սնդէին թէ՛ պատճառն  
Ռուս կառավարութեան հակակրօնութիւնն է՝ Նորին Սրբ-  
բազնութեան Ազգովին ընտրութեան դէմ: Ամօժ կը գ-  
գա՞ն արդեօք այսօր դաւաճաններն, երբ կը տեսնեն

Թէ՛ նոյն իսկ Ռուսոյ վեհապետին *անհասկած* կամոյրկոսաց օրով կը փակուին դպրոցներն՝ հայ մանկութեան գարգացման նուիրավայրերն: Մելքիսեղեկ Սրբազանի արժնութիւնն ու խոհեմութիւնն գրաւական էին, որ իւր կամոյրկոսութեան օրով երբէք պիտի չ'փակուէին դպրոցներն. բայց եթէ փակուէին իսկ, հաւատացէ՛ք որ Ներսէս Աշտարակեցւոյ Սիրեցեալ Սանին եւ արժանաւոր յաջորդին աչքերն եւս պիտի փակուէին իր սրտի ցաւէն, բաց աչօք չ'տեսներու դպրոցներու փակումն. զի ո՛չ որ այնպէս կ'զգայ հայրութեան սոյն մահացու հարուածն, ինչպէս Մելքիսեղեկ Սրբազան, որու *Երկու թօսքն* անհնարին է կարդալ առանց արտասուելու: Մենք խիստ մօտէն հանաչելով Մուրատեանց Սրբազանն որ մեր ուսուցիչն է եղած, վայրկեան մ'իսկ չ'ենք վարանիր աներկեւան յայտնել Թէ՛ Նորին Սրբազնութիւնն ազնիւ զգացումներու ընդունարան սիրտ մ'ունի, մարուր խիղճ մ'իրեն միշտ առաջնորդ, եւ կը մտածէ, կը խօսի, կը գրէ ու կը գործէ ամեն եաստիական ձրգտումներէ հեռի. կը խօսի, կը գրէ եւ կը գործէ ինչ որ ազգի եւ եկեղեցւոյ օգուտն կը պահանջէ. Նա սկզբունքի մարդ է, հշմարտութիւնն սիրող, եւ միայն իրաւանց ջատագով եւ պաշտպան: Մնձնագովութիւն եւ ետասիրութիւն ատելի են նմա եւ այս կ'ապացուցանեն իւր *մտերմակիւն* նամակներն, որոնցմէ միայն մին (յէջ 22—25) ընծեռնուին բաւ է գաղափար մը կազմելու համար Սրբազանի ուղղութեան մասին. մենք այդ նամակի վերջին մասն կը դնենք հոս. « Բայց եւ դուք մի՛ զարմանաք, որ ամեն գրութեանցս հազներգն կամ վերջաբանն միշտ Հայոց Եկեղեցին կը լինի: Սրտիս մէջ խոր տպաւորուած է եւ ո՛չ մի վայրկեան չ'եմ կարող մոռնալ այդ Եկեղեցին եւ միշտ արտասուօք կը կրկնեմ Մարգարէին Սուրբ

Նուազն 'ի դէմս Հայաստանեայց Եկեղեցւոյն դարձուցանելով « Եթէ ես զքեզ մոռանամ, Եկեղեցի Հայոց, թո՛ղ մոռանայ զիս իմ աջն. եթէ ես զքեզ չ'յիշեմ, ըզքեզ չընուագեմ, Եկեղեցի Հայոց, ո՛վ իմ ուրախութեան սկիզբն, թո՛ղ իմ լեզուն իմ քիմքին վասկի»: Այո՛, մինչև վերջին շունչս պիտի նուագեմ Հայաստանեայց Եկեղեցին, յուսալով որ եթէ մարդիկ չըլնին, գոնէ Աստուած չըզրկեր զիս այն նահատակներու խմբին խառնուելու, որոնք զսիւսեցան իրենց ամենասիրելի Մօր՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ ազատութեան համար»:

Ինչ որ սոյն նամականին ցոյց կուտայ, Մելքիսեդեկ Արքազանն մօտէն չ'ճանչցողներուն, այդ Նորին Ամենապատուութեան անմահն բարութիւնն, ներողասնութիւնն է որ ամէն հայ եկեղեցականաց եւ ամէն հայ քրիստոնէի նմանողութեան գեղեցիկ օրինակ պէտք է լինի. Վեհաշնորհ Մուրատեանց ազնիւ ոգւով կը խօսի իւր անմին դէմ դաւողներու նկատմամբ, Աստուծոյ շնորհն, իմաստութիւնն կը խնդրէ այնպիսեաց համար ոյր չ'գիտեն ի՞նչ կը գործեն: Մելքիսեդեկ Արքազանի բարութիւնն, անկեղծ ազգասիրութիւնն, ճշմարիտ քրիստոնէի հաւատքն ու ստացած բարոյական բարձր դաստիարակութիւնն կը պատկերի իւր ա՛յն նամակաց մէջ, որոնցմով յայտնած է իւր անպատմելի թախծութիւնն, վիշտն, 'ի տես այն հալածանաց որոց հեղինակներն հայեր են, հայ կղերականներ: Ամենապատիւ Մուրատեանց սրբտի զարնող, յանկուցիչ բացատրութեամբ կը պարզէ թէ՛ այնչափ ծանր չ'էր թուած իրեն օտարին հալածանքն որքան ծանր ու դառն կը՛գտնէ ազգակից նախանձուներէ եւ ստրկամիտներէ հալածուին, որոնք Ռուս կառավարութեան դիտումներն վարագուրելու համար ոգի իբրոն կ'աշխատին իւր անուայման ազգասիրութեան

տարբեր գոյն տալ, զինքն յուսահատեցնել : Այլ ՄԵԼՔԻՍԵՂԵԿ Արքայազան յուսահատող չէ, անյեղի կամք ու բնոյթ ունի, այդ ծայրայեղ յուզման ժամերու, տխրութեան մէջ չ'սիրեր փորձուիլ, չ'այլայլիլ, չ'ծուլանար, այլ կը զօրանայ, նոր ոյժ կ'ստանու. չէ՞ մի որ աշխարհի Փրկիչն ալ իւր տառապանաց մէջ զօրացաւ : Բուրանտեանց՝ իբրեւ կրօնի ճշմարիտ պաշտօնեաց, քրիստոնէական համբերութեան, բարութեան օրինակ կուտայ. չ'տոներ այն ազգն որու կենաց հետ հիւսած իւր կեանքն, անոր յառաջդիմութեան, անոր բարեշքման համար իւր անձն զոհել պատրաստ է, եւ որու ապերախտ զաւակներն իրեն դէմ կը նիւթեն. այս դաւադրութեանց տոնն բմբռնելով խորենացոյ Ողբին շարժառիթն, կը մտադրէ, կ'որոշէ Ս. Գրոց ոյժով սփոփուիլ եւ զօրանալ, անշուշտ միշտ ծառայելու իւր սիրած Ազգի եւ Եկեղեցոյ համար, եւ այսպէս կը գրէ. « Այսպէս ուրեմն, սիրելի հայակրօն, որոշումս հաստատուն է, որ մի անմարդարնակ վանք պիտի բաշուիմ, ուր ես ինքս ինձ համար պիտի անապատական կեանք եւ կենցաղավարութիւն ստեղծեմ, պիտի ձեռքս առնում Ս. Գիրքն եւ որոճամ, այս պիտի լինի միակ մխիթարութիւնս եւ կենսական հացս անապատին մէջ : Պիտի նըւագեմ նախնեացս գեղեցիկ նուագներն, սքանչելի շարականներն եւ կը հաւատամ թէ՛ Աստուած պիտի լսէ ձայնս, պիտի այցելէ մենաւոր բնակարանս, պիտի մխիթարէ զիս, պիտի անուցանէ զիս հոգեւոր եւ մարմնաւոր անդով, պիտի օգնական լինի ինձ » . եւն : Արդարեւ մեծ հիացման, ըզմայլումի արժանի է քրիստոնէական այսօրինակ ներողամտութիւն. յուզման ամենածայրայեղ վայրկեաններու մէջ ո՛չ մի դառն բառ չ'է արտասանած իւր Ազգի դէմ, այլ գրեթոտ հայեացք մը միայն կը նետէ ապիկար Զոյիներու վրայ :

Ամենապատիւ ՄԵԼՔԻՍԵՂԵԿ Արքեպիսկոպոսի Նամակ

կանուոյն անոյշ, գեղեցիկ, մաքուր ո՛հն ամենէ աւելի սրտազրաւ է. ձեռագիրն քանիցս ծայրէ 'ի ծայր կարդացի, եւ ամէն մի անգամ կարդարուս՝ այնքան աւելի յափշտակուեցայ եւ զմայլեցայ, սիրտս ու հոգիս կրօնային Ս. զգացումներով պարուրուեցան: Այս նամակաց մէջ ընթերցողն տեղ տեղ եւ յանախ կը հանդիպի այնպիսի խորհրդածուծեանց, սքանչելի ասացուածներու՝ զորս վստմութիւն միայն կրնանք անուանել, եւ ինչպէս ըսի, այն իմաստալից գրութիւնք կերտուած են այնպիսի սիրուն հիւսուածքով, այնքան քնական գոյնով, մեկին եւ դիւրրմբռնելի կերպիւ՝ որոց համար Ամենապատիւ Մուրատեանց կը գրէ առ Արժ. Սեմեան Երէց. « Ես երբ կը գրեմ Ձեզ, ո՛չ իբրեւ գրագէտ կը գրեմ եւ ո՛չ իբրեւ գրագիտի կը գրեմ, այլ կը գրեմ ամենայն պարզութեամբ, աւելի սրտով խօսելով քան թէ գրչաւ »:

Նամականոյն վերջն դրուած են նաեւ *Արեւելիան Մուկոյ* մի գեղեցկահիւս յօդուածն, ազգային երկու մեծ անձնաւորութեանց՝ Հայ գրագիտաց պետ եւ իմ Պատկառելի ուսուցիչ Վստմախոհ Մ. Մամուրեանի, ինչպէս նաեւ Մեծամուռն Ռ. Պէրպէրեանի մէյ մէկ ընտիր նամակներն ալ, որոնք միացած Վեհաշնորհ Մուրատեանց Սրբազանի գրութեանց հետ՝ հայ գրականութեան կ'ընծայեն հրահանգիչ նամականի մը որ իւր հոգեպարար, հոգեշէն պարունակութեամբ սահմանուած է հոգեծարաւ հայութեան պատուքն յագեցնել մասամբ եւ եկեղեցականութեան բարոյականն գորացնել:

*Վահրամ Մամիկոնեան*















GALAȚI.—TIPO-LITOGRAFIA G. BĂLĂȘESCU, STR. MARE.

ԳԻՆ 100 ՓԱՐԱՆ





